ՆՈՐ ՇՐՋԱՆ
Բ. ՏԱՐԻ

1928—ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ
ԹԻՒ 8—9

ՍԻՈՆ

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆԷՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Խմբագրական. Հայաստանեայց Եկեղեցւոյ Բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ.— 2. Եօթնամեայ Զարմանիթիս մանուան սրբի. Թրգմ. Մ. Նուպարեան.— 3. Հրամանք. Քրիստոսի Հոգին. Բ. Ե.— 4. Պատմական. Հայոց Ս. Պոլիսոյ Վանքը Երուսաղէմի մէջ. Մ. Ե. Ա.— 5. Բանաստեղծական. Ո՞վ իմ Աստուածս. Թրգմ. Թ. Ե. Գ.— 6. Նոր Արտիներ. Թրգմ. Մ. Նուպարեան.— 7. Կոյսին Թաղումը. Սրտին Երկոր.— 8. Մատենագրական. The Annual Bulletin of the Academy of Medicine of Jerusalem, 1926-1927.— 9. Ս. Սարգիս-Դիլիան. Բաների եւ Եղերի Բացատրութիւններ. Բ. Ե.— 10. Աղբարանգեղոսի «Ազգս վերջ. Ե. Ե. Գ.— 11. Մանրակուսիի Ցատերուն մեկ նոր Ձեռագիրը. Ե. Ե. Գ.— 12. Մորը Լեզուն. Թորգոմ Եպիսկոպոս.— 13. Գերեզմանին ու Վարդը. Վ. Հիլօ.— 14. Ազգայնականութիւն թէ Առեսարան. Ն. Սրկ. Տեր-Ներսեսեան.— 15. Մանուկը եւ իր Եկեղեցին. Ինչ է Ս. Գիրքին նշանակութիւնը. Հայացոյ՝ Նորայր Սարկաւագ.— 16. Պաղեստին եւ Փոշտագիր. Թրգմ. Սարգիս Սրկ. Մանուկեան.— 17. Ս. Գեորգի Թեմը. Գ. Ֆ.— 18. Նեռն եւ Քրիստոնեութիւն Աշխարհիս Հայոց. Ֆ. Ճ. Մ.— 19. Բոյնը. Louis Bouilhet.— 20. Կտակարանի չորս գրերն եւ Հայաստան. Ս. Տեր Մ. Գրիգորեան.— 21. Կիլիկիոյ Կաթողիկոսները. Յովհաննէս Բ. Թլկուրանցի. Բ. Ե.— 22. Ուղերձ. Հայրապետ Յակոբեան.— 23. Նշխարք Նախնեաց Մատենագրութեան. Ֆ. Ճ. Մ.— 24. Ս. Յակոբի Ներսեն.

The SION, an Armenian Monthly of Religion
Printed in JERUSALEM - PALESTINE

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ԹԻՒԸ

Վիեննայի Մխիթարեան Հարք, որ 40 տարիներէ ի վեր կը հրատարակէն Հանդէս Ամսօրեայն, աշխատակցութեամբ հայ եւ եւրոպացի հայագէտներու, այս ուսումնական հրատարակութեան 40րդ տարին յիշատակելու համար 1927-ի Դեկտեմբերի թիւը հրատարակեցին բացառիկ ծաւալով մը, 370 էջ, որուն մեծագոյն մասը գրած են եւրոպացի հայագէտներ, գերմաներէն, ֆրանսերէն լեզուներով մասնաւորապէս։

Հանդէս Ամսօրեայ իր քառասնամեայ ծառայութեամբը կեդրոնական Եւրոպայի մէջ եղած է հայագիտութեան համար առաջնորդող հրատարակութիւն մը, որուն մէջ ուսումնասիրուած են հայոց պատմութիւնը, հայ լեզուն, հայ մատենագրութիւնը, հայ հնագիտութիւնը, և ուրիշ հայացի նիւթեր այնքան ձեռնհասութեամբ։

Հանդէս Ամսօրեայ մասնագիտական հրատարակութիւն մըն է, եւ կ'արժէ որ ուղղակի մուտ գործէ ան Հայոց մտաւորական շրջանակներուն մէջ և նիւթապէս քաջալերուի իր մինչև ցարդ ըրած և այսուհետև իր ընելիք թանկագին ծառայութիւններու փոխարէն հայ ժողովուրդին հասկցող և ունեւոր գաւակներու կողմէն։

Այսպիսի մասնագիտական հրատարակութիւններ, որոնք առանց աղմուկի շատ մեծ ծառայութիւններ կը մատուցանեն ինչպէս հայ դատին, կ'արժէ որ առարկայ ըլլան հայ ժողովուրդի գործնական գուգուրանքին և համակրութեան։ Եւ քառասնեամեայ Յոբելեանը Հանդէս Ամսօրեային՝ շատ բարեդէպ առիթ մըն է մեր ժողովուրդին գործնականապէս յայտնելու համար իր համակրանքը։

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ

Մամուլի տակ է Օրմանեան Սրբազանի ինքնակենսագրութիւնը, ԽՈՀՔ ԵՒ ԽՕՍՔ տիտղոսին տակ։

Ունեցող 480 էջերէ պիտի բաղկանայ գործին բուն մասը, բաժնուած 100 հատուածներու։

Տպագրութեան ծախքը կը հոգայ Ս. Աթոռոյս Ելեմտից Տեսուչ, Դեր. Մատթէոս Եպս. Գայրգեհեան, որ խորունկ յարգանք մը կը տածէ միշտ Օրմանեան Սրբազանի յիշատակին։

Այս գիրքին գինը պիտի որոշուի Տպագրութենէն ետքը, չափաւոր գին մը։ Անոնք որ կը փափաքին ապահովել օրինակ մը այս գիրքէն, հիմակուանէ պէտք է դիմեն Ս. Աթոռոյս Տպարանին Տեսչութեան և արձանագրել տան իրենց անունները։

Direction de l'Imprimerie Arménienne du St. Jacques
JÉRUSALEM — Palestine

digitised by A.R.A.R.@

ՍԻՈՆ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

Բ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ 1928 — ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ Թիւ — 8-9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա.

Մեր եկեղեցւոյն Բարեկարգութեան մասին շատ կը խօսուի և կը գրուի դարձեալ։ Բարեկարգութիւն բառը իւրաքանչիւր խօսողին և գրողին մտքին մէջ իրեն յատուկ իմաստ մը ունի. երբեմն պարզ, երբեմն բարդ. ա՛ն՝ մերթ որոշ կէտի մը վրայ կեդրոնացած՝ սեւեռում մը է մտքի, մերթ ընդհանուր, նոյն իսկ տարտամ գաղափար մը. և առաւելապէս կարդ մը արտաքին իրողութիւններու վրայ հիմնուած գիտողութիւններ, պահանջներ, որոնք կապ ունին քնկերային կեանքի արդի պայմաններուն հետ, և հետեւաբար այդ իրողութիւններ օ՛րչափ ալ մասնաւոր հանգամանք մը ունեցած ըլլան, այսու ամենայնիւ ամէնէն ուշագրաւ կողմը կը ներկայացնեն Բարեկարգութեան, որ իր բառագիտական իմաստով շատ յատակ է և թափանցիկ, իսկ իր պատմական նշանակութեամբ կարծուածէն աւելի բարդ խնդիրներ, և եթէ ուզէք՝ կնճիռներ կը ծրարէ իր մէջ։

Առանց վերանայու աւելի հին ժամանակներու, կենա՛նք պահ մը 1866 թուականին վրայ, ուր Կ. Պոլսի մէջ Թադէոս Տիվիթճեանի տպարանէն լոյս կը տեսնէ Պատկեր Հայաստանեայց Լուսաւորչական Սուրբ Եկեղեցւոյ տիտղոսին տակ գիրք մը (մեծ 8° էջ Բ. + 404), որ կը բովանդակէ Հայց. եկեղեցւոյ գաւանանքը և ծիսական երեք գիրքերուն (Մաշտոց, Ժամագիրք և Շարական) սրբագրուածը.— սրբագրութիւն մը որ երկու ուղղութեամբ կատարուած է. նախ համաձայնութեան և ամփոփումի սիրուն, և երկրորդ՝ Սրբոց Բարեխօսութեան գէմ մասնաւորապէս, այնպէս որ այս երկրորդ ուղղութեամբ անխիղճօրէն խանգարած են բնագիրները։

Այս Պատկերին հեղինակները քաջութիւն չեն ունեցած իրենց անունը գնելու իրենց հրատարակած գիրքին վրայ. այնպէս որ այժմ բոլորովին մոռթի մէջ են 1866ի բարեկարգիչները իրենց գէմքերով ու նկարագրով։ Բարեբախտաբար Պատկերին սկիզբը ԱԶԴ մը կայ, բաւական երկար, ուր անոնք աշխատած են բացատրել իրենց հակըցած բարեկարգութեան պատճառները, ո-

139-98

digitised by A.R.A.R.@

բանք բաւական զուարճալի են պատմութեան չհակասելու և ժամանակին պահանջներուն համապատասխանելու համար։

Բարեկարգութեան շարժառիթ եղած է, կ'ըսեն, Յոյն և Լատին եկեղեցիներուն արհամարհական դիրքը հանդէպ Հայոց. Եկեղեցւոյ, որ մէկ կողմէն երբ ինքզինքը պաշտպաններ է դրչով եւ խօսքով, միւս կողմէն ալ այդ երկու եկեղեցիներուն «պահանջումներն հաճեցնելու նպատակաւ անոնց սկզբունքներուն համեմատ իր մէջ» փոփոխութիւններ բերած է եւ դարձեալ չէ յաջողեր լուծել անոնց մեղադրութիւնները եւ «անոնց հետ բրիստոնէական միութեան մը գալու կարող եղած չէ» եւ ինքզինքը «խառնակ, անորոշ եւ անջատ վիճակի մը մէջ ձգած է», եւ այս վիճակը «ազգին ամէն գործառնութեանցը վրայ իր ազդեցութիւնը բանեցուցած է», եւ այս վիճակէն ելլելու համար ոմանք դէպի Հռոմէականութիւն, ոմանք ալ դէպի Բողոքականութիւն «կրօնափոխութիւն մը ընելու է» ըսեր են, բայց համեմատաբար աւելի մեծ մաս մը հակամէտ չէ եղած կրօնափոխութեան, այլ «Ազգին անկախ եկեղեցական գոյութեանը, կամ թէ ըսենք՝ անոր Լուսաւորչական կերպին առանց դպչելու, փոփոխութեան տուն տուած եւ ժամանակին յարմար իմաստուն կարգադրութիւններով, եւ ո՛չ յեղափոխութեամբ, կը խորհին ազգը յառաջդիմական շարժման մը մէջ դնել, որ ինք իր ոտքովը քալելով հասնի, ուր որ ուրիշ ազատ Քրիստոնեայ ազգեր կամ ընկերութիւններ հասած են եւ պիտի հասնին։ Այս սկզբունքին՝ որ միանգամայն մեր սկզբունքն է՝ մէկ արդիւնքն էր Ազգային Ժողովնադրութիւնը, որ յաջողեցաւ բանի մը պատճառներու համար։ Կ'ըսեն, և գիտել կուտան գլխաւոր պատճառը, որ դարձեալ ծիծաղելի է. իբրև թէ Ժողովնադրութիւնը «պապական դրութեան» վրայ հիմնուած է եղեր և այդ պատճառով չէ յաջողեր։ Ծիծաղելի է այս հաւատումը, որովհետև Ժողովնադրութիւնը յաջողեցաւ և բարիք մը եղաւ իր ոգիով և գործադրութեան կերպերով «Թիւրքիոյ» Հայոց համար(*)։— «Պապականութիւն» բառաձը, հաւանաբար եւրոպական կամ Քաղաքական մտայնութեան ակնարկութիւն մը եղած ըլլայ։ Ժողովնադրութեան մէջ պապական ոչինչ կայ։

Եւ այնպէս կարծելով թէ մեր Եկեղեցւոյ մէջ ամէն բան Լուսաւորչին ձեռքով հաստատուած է, եկեղեցական բարեկարգութեան սկզբունք դրած են Լուսաւորչէն չհաստատուած բաները իբրև օտար՝ զատել և մէկդի նետել և «բուն Լուսաւորչական» եղածները պահել։

Այդ սկզբունքով՝ բարեկարգութեան կէտերը բանաձեւած են այսպէս.

—«Ա. Հայոց Եկեղեցին ունի վարդապետութիւններ՝ որոնք ո՛չ Լուսաւորչական այլ փոխ առնել ըլլալով՝ փրկութեան վրայով՝ մարդուս հաւատքը սխալ հիման վրայ կը կայացնեն. յոյսը եւ պաշտօնը՝ Աստուածմէ ստեղծական եւ նիւթական իրաց վրայ կը դարձնեն. փրկութեան արդիւնքը՝ պատճառ, պատճառը՝ արդիւնք, միջոցը՝ նպատակ, եւ նպատակը՝ միջոց կարծեցնել կուտան. եւ այնպէս Քրիստոնէութեան պարզ եւ մաքուր գիտութեանը դէմ ժողովրդեան աչքին առջեւ քանձր եւ մութ վարագոյր մը կը քաշեն։

—Բ. Ունի այնպիսի ծէսեր եւ արարողութիւններ՝ որոնք նոյնպէս Լուսաւորչէն չեն եւ չեն կրնար ըլլալ, այլ երկայն դարերու ընթացքին մէջ ուրիշ եկեղեցիներէ փոխ առնուած, կամ անոնց ազդեցութեամբ մարդոց մեռելոյ մտած են։ Ծէսեր եւ արարողութիւններ՝ որոնք անհաւատներուն՝ Ծայրայ, Ճշմարիտ Աստուածապաշտներուն ցաւոց, լուսաւորեալ մարդոց սրտամարտանաց նիւթ եղած, եկեղեցիները՝ քաղաքներու, Աստուածային պաշտօնն ու փառաբանութիւնը իր հոգեւոր բնաւորութենէն մերկանալով՝ տօնահանդէսներուդարձուցած են։

—Գ. Հայոց կիրքը ժողովրդեան նկատմամբ Քրիստոնէութեան էութեանը եւ ոգւոյն հակառակ յարաբերութիւն մը ունի։ Այս յարաբերութիւնն ալ՝ Քէպէտ իւր Ծայրումն ի վաղուց ունի, բուն Լուսաւորչական «Քրիստոնէական, Աստուածային» չէ. այլ օտար եկեղեցիներէ մտած։ Այս յարաբերութեան մէջ կիրքը, փոխանակ իրքեւ ուսուցիչ, հովիւ, տնտես եւ հայր, իր Քրիստոնէական պաշտօններուն յարմար գործունէութիւն եւ ազդեցութիւն վարելու. եւ անոր հաճնուած ժողովրդեան մէջ իր բնական դիրքն ու պատշաճ պատիւն ունենալու, իրքեւ գերբնական զօրութեան տէր խումբ մը կը ներկայանայ. եւ ժողովրդեան սիրան ահիւ պաշարելէ եւ բանի յարաբերութիւն մը կարգելէ ետքը, հարկաւ անոր մտաւոր եւ բարոյական կարողութիւններուն վրայ ալ ազդեցութիւն կը բանեցնէ. անոր զաղափարներն ուղղին պէս կաւէլ եւ կը շինէ, անիկա ուղղին պէս եւ ուղղին չափ կը կրթէ, շատ անգամ նաեւ անոր նպատակներուն եւ ձեռնարկութեանցը խոչընդոտ կըլլայ։

(*) Տե՛ս Սիոն էջ 103։

digitised by A.R.A.R.@

Անաւասիկ այս երեք գլխաւոր կէտերն են՝ որոնց նկատմամբ Ազգիս Լուսաւորչական մասը ներկայ բարեկարգութեան ձեռնարկեց, համոզուած բլլալով պատմական անժխտելի օրինակներով՝ թէ Ազգը սոյն մասն անկախ Ազգային գոյութիւնը պահած պիտի բլլայ, այլ եւ զինք իր այս անկախութեանը մէջ ճշմարիտ Քրիստոնեայ Եկեղեցի ճանչցող միւս Քրիստոնեայ Եկեղեցեաց համակրութեանը պիտի սրժանանայ, եւ կրնայ ու ժողովրդեամբ իրրեւ մի հաւասար մասին, Սահակեան եւ Մեսրոպեան դարուն կենդանութեանը հաւասար կենդանութեամբ, հիմնուիրնէ. շատ տարբեր Քրիստոնէական դաստիարակութեան մը համեմատ՝ Ասիոյ լուսաւորութեանն ալ միջոց մը բլլալու արդիւնքը պիտի ունենայ»։

Եւ տեղեկութիւններ տալէ ետքը թէ ինչպիսի բարեկարգութիւններ կատարած են Մաշտոցի, Ժամագիրքի և Շարականի մէջ, կ'ըսեն.

—«Եւ որովհետեւ ներկայիս մէջ Ազգը այնպիսի մարդիկներէ կը բաղկանայ՝ որոնցմէ ոմանք Եկեղեցական պաշտամանց մէջէն արարողութեանց եւ ծիսից չէ՝ թէ մէկ մասը՝ այլ եւ մէկ խօսքը իսկ հանելը խոշոր դէմ մնծ բան կը համարին. ընդհակառակն ամենայն ամէն բան նորոգելու կը ջանան եւ հինը ա՛նքիւնը իրեն նպատակ ունեցած չէ թէ այս երկու կողմին՝ մէկին հաճելի բլլալը. այլ միայն Աստուծոյ ընդունելի բլլալով երկու կողմին ալ՝ օգուտը հոգալը»։

Արդ կը խնդրուի մեր սիրելի Ազգէն որ ներկայ բարեկարգութիւնը իրեն անարատութեանը համար յարգէ, գիտնալով՝ որ ասոր մէջ մութ եւ անիմաստ բաներ չկան եւ ամէն մարդ կրնան հասկնալ անոնց միտքը եւ ինչ օգտի ծառայելենին»։

Հակառակ այս միամիտ և բարի ցանկութիւններուն ՊԱՏԿԵՐԻՆ հրատարակումը և գատապարտումը Ազգային Պատրիարքարանի կողմէն՝ մէկ եղաւ, եւ ոչ չափով չիրագործուեցաւ բաղձացուած Բարեկարգութիւնը. — Ինչո՞ւ որովհետև Պատկերին շուրջ հաւաքուած գաղափարակից անձինք, որոնց նախանձախնդիր ոգին իրենց Մայրենի Եկեղեցւոյն պայծառութեան մասին չի կրնար կասկածներու ենթարկուիլ, տարուած էին հասանքէ մը. այսինքն՝ Բողոքականութեան խմորման ամէնէն փափուկ շրջանն էր այդ, և ամերիկեան միսիոնարներ, որոնք բոլորովին անպատրաստ եկած նեռուած էին դաշտի մէջ, տգիտօրէն քննադատած էին Հայց. Եկեղեցին, անոր պաշտամունքին ձեւերն ու կերպերը կուապաշտական գտած էին, դէմ խօսած էին մանաւորապէս պատկերներու և Սրբոց Բարեխօսութեան եայլն, եւայլն, և ուղղակի Հայց. Եկեղեցւոյ ծոցէն կարգ մը սիրացու Հայեր, ցոյց տալու համար թէ Հայց. Եկեղեցին բան մը չի կորսնցներ իր դաւանաբանական և ժամակարգական յօրինուածքին աւանդութիւններէն ու պատմութիւններէն, թո՛ղ հեղինակութիւնը, առանց ունենալու նոյն իսկ հարկ եղած ձեռնհասութիւնը, համարձակեր էին կրճատումներ և փոփոխումներ ընել իրենց Մայրենի Եկեղեցւոյն ծիսական բոլոր գիրքերուն վրայ, ջնջելով Սրբոց Բարեխօսութեան վերաբերեալ ամէն հետք։ Պէտք է խոստովանիլ որ Պատկերին հրատարակութիւնը կ. Պոլսի մէջ ուշադրաւ յանդգնութիւն մըն է, և պէտք է աւելցնել նաև որ իր բոլոր արժէքն ալ կը կայանայ այդ յանդգնութեան մէջ։

Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան մասին բոլոր գրողներուն և խօսողներուն համար փոքրաւութեան հիանալի դասեր կան ՊԱՏԿԵՐԻ ձախողուածքին մէջ։ Ինչո՞ւ համար չյաջողեցան անոր հեղինակները, ինչո՞ւ համար կ. Պոլսի Պատրիարքութիւնը կասեցուց այդ շարժումը. կարելի՞ է ըսել թէ Պատրիարքարանը փափաքող չէր Հայց. Եկեղեցւոյ Բարեկարգութեան։ Ասոնք հարցումներ են որ պատասխան կ'ուզեն։ Եւ միակ պատասխանը որ կրնայ տրուիլ այդ հարցումներուն, սա՛ է որ Բարեկարգութիւնը սխալ հասկցուած է և սխալ մեկ-

digitised by A.R.A.R.@

թոտով մը ի գործ դրուած է։ Այսինքն՝ ՊԱՏԿԵՐԻՆ նախանձայոյզ հեղինակները իբրեւ թէ Ամերիկայի միսիոնարներուն բերանը կարկելու համար արդց բարեխօսութիւնը ուզած են վերցնել Հայց. Եկեղեցւոյ ծիսական գիրքերու մէջէն։ Այս տեսակէտէն երկու կողմերուն տգիտութիւնը միանգամայն ցաւալի է։ Հայց. Եկեղեցին եթէ պէտք ունէր բարեկարգուելու 1866ին, պէտք էր որ բարեկարգուէր ինքն իր մէջ և ոչ թէ միսիոնարական բասրանքներու իրաւունք տալու ձեւին տակ։ Պատկերին հեղինակները չեն ուզած իրենց հասկցած բարեկարգութեան այս ազդակը կամ շարժառիթը մատնանիշ ընել իրենց ԱԶԳԻՆ մէջ, բայց այս է իրողութիւնը պատմութեան մէջ։

Եւ 1866էն ի վեր խնդիրը իր ընդհանուր հանգամանքներով նոյն է։ Հիմայ ալ Հայց. Եկեղեցւոյ Բարեկարգութեան վրայ ամէնէն շատ խօսողներ ու գրողներ միսիոնարական դպրոցներու մէջ դաստիարակուածներն են, որոնց անկեղծութիւնը և սէրը իրենց Մայրենի Եկեղեցւոյն հանդէպ բոլորովին ստոյգ եւ մաքուր է, բայց իրենց դիտելու և դատելու մեթոդը չի հաշուուիր Եկեղեցւոյ պատմութեան և դիտութեան հետ, և ասկէ զատ՝ անոնք պէտք եղածին պէս չեն ուսումնասիրած իրենց Մայրենի Եկեղեցւոյն ներքին կեանքը, և ասոր համար է որ երբեմն սխալ, երբեմն ձրի, երբեմն ալ թերի հաւաստումներ կ'ընեն՝ Հայց. Եկեղեցւոյ վրայ խօսելու կամ գրելու առեն։

Այս լուսաբանութիւնները կարեւոր են քիչ շատ հասկընալի ընելու համար թէ ինչո՞ւ 1866էն ի վեր Բարեկարգութեան անունով եղած ձեռնարկներ մատնուած են ձախողութեան։

Ըսենք նաև թէ 1866էն ի վեր շատ բան գրուած է Հայց. Եկեղեցւոյ Բարեկարգութեան մասին։ Թանկագին պիտի ըլլար արդիւնքը այնպիսի ուսումնասիրութեան մը, որ երանի՜ թէ նուիրուէր այդ բոլոր գրուածները գտնելու, դասաւորելու և առանց եղրակացութիւնները խառնելու համար։

Իսկ այս ուսումնասիրութեան նպատակը պիտի ըլլայ Բարեկարգութեան վերաբերեալ կարգ մը խնդիրներ շօշափել յաջորդական քանի մը յօդուածներու մէջ, այն համոզումով թէ անհրաժեշտ պայման մըն է զանոնք գիտնալ Բարեկարգութիւնը լաւ ըմբռնելու համար։

Բ.

Մեր առջև կայ երկու բառ. ԵԿԵՂԵՑԻ և ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ։ Մեր այսօրուան կեանքին և ըմբռնումին մէջ ինչ նշանակութիւն ունին այս երկու բառեր։

Այսօր եկեղեցի ըսուած առեն կը հասկընանք հաստատութիւն մը, որ իր չորս գլխաւոր մասերով ամբողջութիւն մը կը կազմէ. այսինքն Եկեղեցւոյն նիւթական-շէնքը, Եկեղեցւոյն ժողովուրդը, Եկեղեցւոյն դաւանանքը և պաշտամունքը և Եկեղեցւոյն պաշտօնէութիւնը։

Այս գլխաւոր չորս մասեր երբ զատ զատ վերլուծուին և քննուին, իրենց ստորաբաժանումներով, կը կազմեն առանձին ամբողջութիւններ. այնպէս որ

digitised by A.R.A.R.@

Բարեկարգութիւն բառած առանձ՝ աչքի առջև կուգայ եկեղեցին ո՛չ միայն իր չորս զլխաւոր մասերով, այլ նաև առաջ իւրաքանչիւր մասը իր առանձնահատկութիւններով։ Պէտք է մտքի մէջ պահել առանձ, որովհետև այս մասերէն մէկին կամ միւսին կարեւորութիւն ընծայել իրրև բարեկարգութեան առարկայ և նպատակ՝ և չտեսնել մնացածները, պարզապէս կը նշանակէ հասկցած չըլլալ եկեղեցին, որուն բարեկարգութեանը վրայ կը խօսուի։

Պէտք է ճշդել ուրեմն Բարեկարգութիւն բառին նշանակութիւնը։

Բարեկարգութիւն բառը Հայերէնի մէջ շատ պարզ է իր բառագիտական իմաստով. բարի և կարգ բառերէ շինուած այդ բառը՝ կը նշանակէ ադէկ կարգ կանոն, ադէկ դասաւորութիւն, այսինքն ամէն բան իր տեղը, լաւ վիճակի մէջ։ Եւ բառին այս նշանակութիւնով է որ մեր եկեղեցւոյն մէջ սարկաւագը կը հրաւիրէ ժողովուրդը ապաշէջ Աստուծոյ.

—Վասն սուրբ տեղւոյս շինութեան եւ բարեկարգութեան, զՏէր աղաչեսցուք։

Աղաչենք Տիրոջ որ այս սուրբ տեղը (եկեղեցի, վանք, ուխտ) չէն և բարեկարգ ըլլայ, կամ ինչպէս կ'ըսուի սովորաբար՝ էն եւ պայծառ ըլլայ։

Բարեկարգութիւն՝ Հայերէնի մէջ կը նշանակէ նաև պարկեշտութիւն, խաղաղութիւն, այսինքն բարոյական կեանքին մէջ տիրող բարեկարգութիւն մը։

Հայաստանեայց եկեղեցւոյ Բարեկարգութեան վրայ խօսուած առեն, բնական է որ սովորաբար պահանջուած կարգուկանոնէն, չէն և պայծառ ըլլալու վիճակէն տարբեր բան մը կը հասկցուի. վասնզի արդի ժամանակներու պէտքերը կը շեշտուին, լուսաւորեալ և յառաջադէմ դաղափարներու պահանջները մատնանիշ կ'ըլլան, հին կամ միջնադարեան ըմբռնումներ և սովորութիւններ աւելորդ կը նկատուին, եւայլն, և հետեւաբար բարեկարգութիւնը այս բոլորին համաձայն նշանակութիւն մը պէտք է արտայայտէ՝ որպէս զի համապատասխանէ մեր եկեղեցւոյ մէջ զարգացած իրողութեան մը։

Բարեկարգութիւնը իր այս նշանակութեամբ նորութիւն մը չէ քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան մէջ. քանզի այդ բառը պատմական իմաստ մը ունեցաւ 16դ դարուն՝ Լուտերեան շարժումով, ուղղուած Հռոմի եկեղեցւոյն դէմ։

Եկեղեցական պատմութեան մէջ Reform կամ Reformation (=Բարեկարգութիւն) կը նշանակէ կրօնական և քաղաքական շարժում մը միանգամայն, որուն հետեւանքով «կաթոլիկ» եկեղեցւոյ միութիւնը խախտեցաւ։

Կրօնական շարժումն էր ան ընդդէմ կաթոլիկութեան, որովհետև Սուրբգիրքի և հաւատքի վերաբերեալ խնդիրները մեկնելու և բացատրելու մէջ «կաթոլիկ» եկեղեցւոյն վերապահուած բացարձակ հեղինակութիւնն ու իրաւունքը ուրացուեցաւ։

Քաղաքական շարժում մըն էր ան, որովհետև պապերու քաղաքական հեղինակութիւնը հերքուեցաւ, այսինքն ժողովուրդները ազատ հռչակուեցան պապերուն հնազանդելու իրենց աւանդական պարտականութիւններէն, և հետեւաբար Ս. Պետրոսին դանձին ազբիւրներուն մեծ մասը ցամքեցաւ։

Լուտերեան շարժումին կրօնական նշանակութիւնը մեծ եղաւ. որովհետև շարժումը Լուտերի ուղղէն ու երեւակայէն աւելի ընդարձակ զարգացում

ունեցաւ և բո՛ւն լուսերականութիւնը շատ փոքրիկ իրականութեան մը վերածուեցաւ հետզհետէ, երբ Reformationը հմանիչ եղաւ Բողոքականութեան (Protestantism), որ իր այլազան ճիւղաւորումներով յեղափոխեց եկեղեցւոյ պատմական և աւանդական ըմբռնումը, և իր ոգիով սկսաւ տիրել հին և նոր աշխարհներու կրօնական և քաղաքական մտայնութիւններուն վրայ։

Երբոր բողոքականութիւն կ'ըսուի, պատմականօրէն կը նշանակէ հակակաթոլիկութիւն։

Կ'արժէ դիտնալ որ Բարեկարգութեան շարժումը, որ յանգեցաւ Բողոքականութեան, Լուտերի ստեղծագործութիւնը չէ պատմականօրէն։ Անգլիացի Ճոն Վիքլիֆ (+1384) և Չեխ Յան-Հիւս (+1415) առաջին հեղինակներն են այդ շարժումին, զոր Լուտեր (1483-1546) դիտցաւ — օգտուելով նաև քաղաքական և տնտեսական պայմաններէն իր երկրին — արծարծել, կազմակերպել, տարածել և վերածել Ջօրութեան մը, իբրև կրօնական նոր հաստատութիւն կամ «եկեղեցի» (բառին ոչ-պատմական և ոչ-աւանդական իմաստով), որ հիմնուած է միայն Սուրբիրքի անհատական հասկցողութեան վրայ և ո՛չ թէ եկեղեցւոյ հեղինակութեան վրայ։

Ինչպէս որ կը տեսնուի տրուած այս լուսաբանութիւններէն, Բարեկարգութիւնը իրեն յատուկ պատմական նշանակութիւնը առած է 16րդ. դարուն, երբ իբրև շարժում ան ուղղուեցաւ «կաթոլիկ» եկեղեցւոյն դէմ, յարձակելով անոր նոր իրաւունքներուն վրայ, անոր կարգ մը վարդապետութեանց վրայ, անոր ինչ ինչ միջնադարեան սովորութիւններուն վրայ, և կարեց մարդուրդին հպատակութեան ու հաւատարմութեան կապերը պապականութեան հետ։

Լուտերեան շարժումին (Բարեկարգութեան) յաջողութեան գլխաւոր պատճառներուն մէջ (կրօնական, տնտեսական) և շատ կարեւոր տեղ կը բռնէ նատմատուրականը։

Արեւմտեան Եւրոպա արթնցած էր Վերածնութեան (Renaissance) ազդեցութեան ներքեւ — Վերածնութիւն կը նշանակէ յունա-հռոմէական մշակոյթին վերաթին ծնունդը, որ ուժեղ կերպով նպաստեց Բողոքականութեան ծաղման, որուն գլխաւոր դիծերն են հակաճգնողական կեանքը, արհամարհանքը հանդէպ դպրոցականութեան (Scholasticism), որով կը բարացուցուի այդ ժամանակներու եկեղեցական ուսմունքը, իր կործանիչ քննադատութիւնը եկեղեցական շարք մը հաւատալիքներու և սովորութիւններու դէմ և անհատական մտածումի եւ կարծիքի վրայ դրուած զօրաւոր շեշտը՝ Սուրբիրքի հասկցողութեան և հաւատքի վերաբերեալ խնդիրներու մէջ։

16րդ դարու Բարեկարգութիւնը քննելով իր էապէս կրօնական կողմէն, կը տեսնենք որ ան ամէնէն յառաջ և մասնաւորապէս կ'դրպի Մարդու եւ Աստուծոյ և փոխադարձաբար Աստուծոյ ու Մարդու իրարու հետ ունեցած յարաբերութիւններով. յետոյ՝ վարդապետական կամ աստուածաբանական բանաձեւներով, եկեղեցւոյ կազմակերպութեամբ և ատոր գործառնութիւններով (function), և բարոյական կեանքով ու կենցաղով՝ նկատելով որ Քրիստոնէութիւնը,

digitised by A.R.A.R.@

սկիզբէն ի վեր իր այլազան ձեւերուն մէջ, կրօնքի և բարոյագիտութեան հետ կապ մը ունի։

Բարեկարգութեան նպատակն էր նաև առաքելական դարու կամ Նոր Կտակարանի Քրիստոնէութիւնը վերահաստատելու փորձ մը, փոխանակ դարերու ընթացքին կազմակերպուած և զարգացած Քրիստոնէութեան, որ շատ հեռացած է առաջին առաքեալներու վարդապետութենէն։ Ուրիշ խօսքով՝ Քրիստոնէութիւնը վերածել անհատականութեան, փոխանակ կազմակերպեալ եկեղեցիի, որով իւրաքանչիւր անհատ կատարելապէս ազատ պիտի ըլլայ իր կրօնական համոզումներուն մէջ։ Բայց կարելի չեղաւ ասիկա, եւ Նոյնիսկ Լուտերի, Զուինկլի (+ 1531) և Կալվինի (+ 1564) նման առաջնակարգ բարեկարգիչներ չկրցան գոհացուցիչ կերպով վեր բարձրանալ իրենց միջավայրերէն և հասնիլ անհատին կրօնական կատարեալ ազատութեան։ Այս մասին իւրաքանչիւր բարեկարգիչ իրեն յատուկ հասկցողութիւն մը ունէր, այնպէս որ բաց դուռ մը թողուած էր միշտ կրօնական լայնամտութեան և անհատին կրօնական ազատութեան ոգիին աստիճանական կարգացման համար։

Բարեկարգութիւն բառին պատմական իմաստին այս վերլուծումը ցոյց կուտայ թէ ինչերը կարծուածէն աւելի կենդանի է, այսինքն Լուտերեան բարեկարգութիւնը յանգած է ո՛չ թէ Հռոմի եկեղեցիին բարեբեկարգութեան, այլ պատճառ եղած է Բողոքականութեան ծագման։

Այս կէտը պէտք չէ աչքէ հեռացնել երբ կը խօսուի ու կը գրուի Հայոց եկեղեցւոյ բարեկարգութեան մասին։

(Շարունակելի)

ԵՐԳՆԱՄԵՆԱՑ ՀԱՐՄՈՒՀԻՆԻՑ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Աւա՜ղ, ինչո՞ւ չգիտնայի երբ դաւառով
Կը նեղիմ ինձ՝ թէ մանու բոյուեր աւ
Վարդ հատակիս վերայ գաղտնի սատանան ահ,
Տնկոյն իր որսին վերայ թեւերն իր տարածած,
Ու այն դանեմ՝ ուր դուն երկիր ոչ ու առողջ
Կը խաղայիր՝ այսօր դազաղդ պիտի կրիր։

Ես քու կենցաղդ պիտ՝ ընեմ զուարթ ու շեն,
Կանգուն մանուռն պիտ՝ թափեմ քայլերուդ տակ,
Ժամերդ բոլոր պիտ՝ ըլլային խինդի ժամեր,
Քու մատղաշուկ կանգիդ ես անբաս երանութեամբ
Պիտ՝ պատեմ. ծերին հարուստ իր վայելմանց
Մէջ քու վրադ պիտ՝ նախանձեմ, անմեղ զաւակիկ

Դուն չըլլայիր պիտոր զերի նեղիչ դատաց.
Երկուքնիս ալ պիտ՝ վայելեմ փափաքական
Երգով, սիրով, անուանիներուն մէջ բուրաստ.

Թարգմ. ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Թոչնոց բոյներն պիտ՝ բաղդի ինձի համար.
Պիտի տայի ինձի ծաղիկ ամենազգի՝
Ուրախ մեղուն չխաղեր բնաւ մեկ ծառան մէջ։

Յետոյ երբ ծեր Յունիսար ձիւնի կրկնոցն իր ուս՝
Երկու ձեռքերն ինձուն պուպրիկ ու խաղալիկ,
Կեռ գիշերին զար՝ ես բոլոր բնծաներուն
Մէջտեղ բզքեմ, ա՛ղջնակ, պիտի բաշխեցնեմ,՝
Իրեւ դշխոյ չենապազեղ ու փառապանծ։

Անցիստրեանս մէջ շատ դաստ կուտայի ինձ,
Փուրացնեմ փրրուտի վասան ապագային,
Երբ յեղակարծ թաթիկներդ ու անուշիկ
Գրիդ գեղին տեսայ իյնալին ու ցաքի.
Կը դարձիր դուն ապրելի, ինձ ասելի.
Ա՜խ, այդ փափանին դանուակիցն գիտնայի՝ ես։

ՀԻԺԵՍԻԲ ՄՈՐՕՑ

digitised by A.R.A.R.@

ԿՐՕՆԱԿԱՆ (ԴԱՍԵՐ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ)

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՈԳԻՆ

(Կարդացէ՛ք Հռոմ. Գլ. Ը.)

Ըսինք մեր նախորդ դասին մէջ թէ Բոլոր կեանքին արժէքը գիտնալու համար պէտք է Քրիստոսի նմանիլ։

Այս դասով պիտի ըսենք թէ ի՞նչպէս կարելի է նմանիլ Քրիստոսի։

Քրիստոսի նմանելու համար պէտք է բան մը գտնել մեր ունեցածէն, մեզի շա՛տ սիրելի բան մը. այսինքն մեր զգաւոր անձնականութիւնը, կամ ինչպէս կ'ըսուի ընդհանրապէս, մեր եսականութիւնը։ Միայն չհակրցուելու համար չեչանք, մեր եսականութի՛ւնը և ո՛չ թէ մեր անհատական նկարագիրը, մեր արժանապատուութիւնը։

Գէշ է գտնել եսականութիւնը, որովհետև ա՛ն է անհատին ամէնէն վտանգաւոր թշնամին։ Ան է որ կը մթագնէ մարդուն պայծառ գիտակցութիւնը, և մութ գիտակցութեան տակը մէկը ամէնէն յաճախ իր թերութիւնները չի կրնար տեսնել. իր եսը միայն կը տեսնէ այնպիսին և չի կրնար ազատաւոր բաներ նշմարել իր նմաններուն վրայ, և ոչ իսկ կրնայ հասկնալ Քրիստոսը։ Վասն զի եսականութիւնը ա՛յնչափ կը նեղցնէ անհատի մտքին հորիզոնը որ ան չի կրնար իր սահմանափակ եսէն դուրս նետուիլ և սաւառնիլ հոգեկան բարձր և մաքուր ոլորտներու մէջ։ Եսը յամառ և ոգէտ կը պահէ անհատը։ Աստուծոյ գոյութեան իսկ հաւատալու դժուարութիւններ կը քաշէ եսապաշտը։ Եսը և Աստուած չեն հաշտուիր իրարու հետ։

Քրիստոսին նմանելու համար Հաւատք պէտք է ըսած էինք. հաւատալ թէ քու եսէդ դուրս, քու եսէդ վեր գեղեցկութիւններ կան կեանքը ազնուացնելու և կատարելագործելու համար՝ Աւետարանի դատաբարկութեամբ։

Քրիստոսի նմանելու համար ըսած էինք նաև թէ Սէր պէտք է. սէ՛ր հշմարտութիւններ որոնելու և ատանցմով տագնապուելու նպատակով։ Եսականութիւնդ պէտք է գտնուի որ կարող ըլլաս տեսնել հշմարիտը, շօշափել զայն և քուկդ ընել զայն։

Վերջապէս ըսած էինք որ Ցարատեւութիւն պէտք է Քրիստոսի նմանելու համար։ Ցարատեւութիւնը գաղտնիքն է յաջողութեան ուրէ գործի և նպատակի մէջ։ Եթէ կեանքին արժէքները պիտի մշակուին և երեւան պիտի բերուին իրենց ատաքութեան մէջ, պէտք է որ եսականութիւնը զոհուի եւ ատոր տեղը բռնէ յաջատեւութիւնը՝ Աւետարանի դատաբարկութեան մէջ։

Եսասէրը չի կրնար Քրիստոսի նմանիլ, վասն զի գերի եղած է ան իր եսին. վտանգած է ինքզինքը։ Մինչ Քրիստոսի նմանելու համար պէտք է զոհուիլ եսը, կամ՝ Աւետարանի բացատրութեամբ՝ մարդ պէտք է որ կորսնցնէ իր անձը, իր ամէնէն շատ սիրած բաները. վասն զի ո՛վ որ կ'ուզէ ապրեցնել իր անձը, թող կորսնցնէ զայն. և ով որ ինձ համար կը կորսնցնէ իր անձը՝ պիտի գտնէ զայն (Մրկ. Ժ2. 25, Մտթ. Ժ. 39, Ժ2. 25, Յովհ. ԺԲ. 25)։

Անշուշտ քիչ մը դժուար է զոհողութեան այս գաղափարին հետ հաշտուիլ։ Ցիշեցէ՛ք Աւետարանին հարուստ երիտասարդը, որ ուզեց Քրիստոսի հետեւիլ, բայց չուզեց նմանիլ Անոր, այսինքն չկրցաւ բան մը զոհելու գաղափարին հետ հաշտուիլ. ան ուզեց հետեւիլ Քրիստոսի, պահելով իր եսին պահանջները։ Հարուստ երիտասարդը չկրցաւ կորսնցնել նոյն իսկ իր ստացուածքը, այսինքն իր նիւթական արժէքները՝ տալով զանոնք կարօտներուն։ Մարդիկ այսպէս են առհասարակ, կ'ուզեն ազատաւոր բաներ ձեռք բերել առանց զոհողութեան, կամ շատ աժան գայմաններով։ Մինչդեռ, Աւետարանի լեզուով, մարգարտին յարգը գիտցող մը կը ծախէ ինչ որ ունի, զայն ստանալու համար։

Այն որ ստուգիւ կ'ուզէ նմանիլ Քրիստոսի, պէտք է հաշտուի բան մը զոհելու գաղափարին հետ։ Բաւական չէ պարզ փափաքը հետեւելու Քրիստոսին։ Վասն զի Քրիստոսի շատեր հետեւած են ու կը հետեւին, բայց չեն նմանած Անոր։ Տարբեր բան է Քրիստոնեայ ըլլալ, տարբեր բան է Քրիստոնեայ ըլլալ։ Այս է պատճառը որ Յիսուս-Քրիստոս դիտել տուաւ անգամ մը, թէ բոլոր ինձի՝ Տէր, Տէր ըսողներ իմ՝ չեն։ Շա՛տ են Քրիստոնեայ կոչուողներ, բայց շատ քիչ են անոնց ընտիրները.—բազումք են կոչեցեալք, բայց սակաւք են ընտրեալք։

Ի հարկէ այնքան ալ դիւրին չէ զոհողութիւն ընել։ Դիտա՞ծ էք թէ մարդիկ ո՛րչափ դժուարութիւններ կը հանեն նոյն իսկ իրենց աւելորդները տալու համար, դիտա՞ծ էք թէ ի՞նչպիսի հոգեկան տուայտանքներ կ'անցընեն ըստ պատուոմի և հարկի տակ տուողներ սեւ էջ նպատակի համար։ Արդ, պէտք է խոստովանիլ որ աւելորդին դժուարին իրականութիւն մըն է զոհելը, մա՛նաւանդ եսը զոհելը։ Եւ սակայն այս զոհողութիւնը հիմնական պայման մըն է հոգեկան ազատութիւն վայելելու համար։ Իր ինչքերուն և ստացուածքներուն դերի մէկը, նոյն իսկ աշխարհներու հարուստն ալ եղած ըլլայ, չունի հոգեկան, այսինքն՝ ներքին ազատութիւն. նոյն իսկ իր սեղանին փշրանքները կը գլանայ ան իր դրան քով ինկած ազքատին։ Շատ իրական է Աւետարանի մեծատունին պատկերը, տիրակա՛ն է ան։ Տալը ո՛րչափ դժուար է անոնց համար. և արդէն տուածնի՞ն ինչ է. միշտ աւելորդէն, միշտ իրենց ունեցածին անհամեմատօրէն ամէնէն քիչը. վերջապէս զոհել չէ, զոհողութիւն չէ։ Զոհողութիւնը՝ ունեցածը տալն է, գոյն չունի բուսածն է։ Հոգեկան ազատութեան տիրանալու համար ո՛չ թէ տալու է, այլ զոհելու է, և այն ատեն է որ կ'իրագործուի Քրիստոսի նմանելու տենչանքը։

digitised by A.R.A.R.@

կը յիշէք թէ Աւետարանին մէջ, երբոյր տրուած է նոգւով աղքատներուն։ Հա՛ս հիշդ տեղն է որ ըսենք և շեշտենք թէ անո՛նք են նոգւով աղքատները, որ կրցած են զոհել իրենց ընչաքաղութեան յամառ ցաւը, և տարբ տեղ կը վայելեն հոգեկան հարուստ ազատութիւն մը։

Ի՞նչ որ Աւետարանի մէջ անձին կարուստով, այնինքն ետին զոհաւորվոր կը բացատրուի իրրեւ պայման Քրիստոսի նմանելու։ Սուրբն Գրիգոր հոգեկան վիճակով մը կը հասկնայ զայն։ այնինքն Քրիստոսին նմանելու համար, կ՚ըսէ, պէտք է Անոր պատկանիլ, պէտք է Անորը ըլլալ։ Մարմնի խորհուրդը մա՛հ է։ Մարդիկ մինչև իրենց ետին հետ զբաղելով ոչ ոչ կ՚ապանեն ինքզինքնին։ իսկ հոգիին խորհուրդ՝ կեանք է։ Մարդիկ զուրա ելլելով իրենց ետէն, մարմնի խորհուրդներէն, և մշակելով հոգիին խորհուրդ, կը տիրեն ստոյգ կեանքին, խաղա՛ղ կեանքին։ Զատ զի մարմնի խորհուրդ մա՛հ է։ իսկ հոգիին խորհուրդ կեա՛նք է եւ խաղաղութիւն (Հռոմ. Ը. 6)։ Եւ հոգին, հոգի՛ն է Քրիստոսին, որ մարմնացաւեցաւ է Զոհողութեան, իր կեանքով ու իր խաչով։

Կ՚ուզե՞ս նմանիլ Քրիստոսին, ունենալ՝ Անոր հոգին, և Անո՛ր ըլլաս։—Ով որ չունի Քրիստոսի հոգին, ասիկա Անորը չէ (Հռոմ. 9), և չի կրնար ըլլալ Անորը։

Ի՞նչպէս պէտք է ճանչնալ Քրիստոսի հոգին։— Անոր գործերէն։ Աւետարան կ՚ըսէ թէ ի՞նչ են անոր գործերը։

Ամէնէն յառաջ, նորէն հաւատը։ Ա՛յն տարբերութիւնը, այն կարողութիւնը, որուն վրայ աշխարհ կը ծիծաղի այսօր։ Մարդիկ տարբեր և տարօրինակ իմաստներ տուած են հիմայ հաւատքին, իրենց ետերը գոհացնելու համար։

Յիսուս-Քրիստոսի հաւատքը հոգեկան տարբեր միտք մըն է։ Անոր չինող հաւատքն է ան և՝ չ թէ անոր կործանող հաւատքը։ Իր բուժումի բոլոր հրաշագործութիւնները այդ հաւատքին վրայ հիմնուած են, այդ հաւատքէն հառագայթած են, լեռները տեղափոխելու կարող այդ հաւատքէն։ Մարդիկ հիմայ ատե կը խօսին, եւ կ՚ուզեն որ հաւատաս իրենց տուածին։ Ասիկա Քրիստոսի հոգին չէ։

Յիսուս-Աղօթքը։ Քրիստոսի հոգիին ամէնէն փառաւոր արտայայտութիւնն է Աղօթքը։ Այն տեղեր որ Երուսաղէմի մէջ նուիրականացած են Աւետարանի պատմական զէպքերուն յիշատակներով, ամէնէն աւելի ինծի կը նոյնչնեն Փրկչի աղօթքին յիշատակները։ Կ՚աղօթէք Ան։ Կրնա՞ք աղօթել Անոր պէս։ Փոքրիկ ջանք մը բնենք հասկնալու համար Անոր աղօթքը։ Անոր աղօթող հոգին։ Դեռ մինչև հիմայ ինծի այնպէս կը թուի թէ այդ աղօթող հոգին կը տատանի այդ արբաղայրերուն, այժմ անչքացած եւ անհրապոյր այդ վայրերուն վերև, որոնց վրայ խորհուրդներու վարագոյրը ձգուած է կարծես։

Աղօթքը նոյն ինքն արքուն հոգին է, որ չիջնար փոքրանձներու մէջ։ Ետին կապանքներէն զերծ է այն։ Կիրքերու և իգձերու կապաշուութիւններէն ազատ հոգիին փառաւորումն է Աղօթքը։ Քրիստոս կ՚աղօթէ՝ միշտ։ Կ՚ուզե՞ս պատկանիլ Քրիստոսին, ըլլալ Անորը, գինուիլ Անոր ոգիով, մտածէ որ երկնաւոր Հօր արդեգիրը եղած ես Անոր աղօթքով, Անոր մահուամբ, Անոր զոհողութեամբը։

Յեսայ Ա.էջ։ Մաքուր, անչահախնդիր սէրը ուրիշ մէկ հառագայթումն է Քրիստոսի հոգիին։ Աստուած այնչափ սիրեց այս աշխարհը որ իր միածինը տուաւ։ Եւ Յիսուս-Քրիստոս այնչափ սիրեց մարդիկը, որ խոնարհեցաւ մինչև ա՛յս աշխարհի կեանքին մթին կողմերը, մինչև դըժո՛խքը մեղքերուն, ապատելու համար Աստուծոյ սիրելիները։ Անարգանքին և արհամարհանքին գաղափարը ջնջեց մարդկային արժէքներու վրայէն։ որբացաւ զանոնք իր սիրով, իր աստուածային հեզութեամբ և անպարագրելի նրբութիւններով։ Քրիստոսի հոգին որա՛ն է ասիկա։ Այս հոգին պէտք է ունենալ Անորը ըլլալու համար։

Բ. Ե.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅՈՑ Ս. ՊՈՂԻԿՏՈՍԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1. — Մելիտինէ. Ս. Պողիկտոսի առաջ եւ անոր ժամանակը.

Մելիտինէ (Մալաթիա) մեր այս յօդուածին բովանդակութեան հետ սերտօրէն կապակցութիւն ունենալուն համար, պէտք է պատմական համառօտ ծանօթութիւն մը տալ անոր մասին, Ս. Պողիկտոս վկայէն առաջ և անոր ժամանակը։

Մելիտինէ կը գտնուի Սեբաստիայ հարաւը և Եփրատի արևմտեան կողմը. ա՛ն հիմնարկուած է Քրիստոսէ 800 տարի յառաջ, ինչպէս կը հաստատեն խալդիական նարագիտ բեւեռագիր յիշատակարաններ՝ որ կը գտնուին Հայաստանի գտնազան կողմերը և գիտնոց մտերազնին քննութեանց առարկայ եղած են։ Այս գիտական խուզարկութիւնք կը յայտնեն թէ Մելիտինէ կանուխէն բնակավայրը եղած է «Հատեանց», որոնք չատ պատերազմներ մղած են Ասորեստանցւոց դէմ. և Թալգեան թագաւորք երբեմն երբեմն յարձակելով Մելիտինէի վրայ, գերիներ տարած են թ-

digitised by A.R.A.R.@

բենց երկիրը, գրաւած են զայն և երկար դարեր պահած են իրենց տիրապետութեան տակ։ Մելիտինէ գրացի երկիր մըն է Մոփսց աշխարհին, ինչպէս վերջնոյս, նոյնպէս նախահայերու հետ ան ունեցած է սերտ յարաբերութիւններ և որոնք չեն զադրած քրիստոնէական թուականներուն։ Թէ՛ Մելիտինէ քաղաքին նախնական յարաբերութեանց և թէ՛ Մեծ Մոփսի և թէ՛ Շանունի Մոփսի անուանց ծագման մասին Խալդի արձանագրութեանց լուսաբանութեան համաձայն, Դերմանացի գիտնական մը, Տր. Վ. Բէլք, շատ լուրջ և շատ հիմնաւոր գրաւածք մը ունի, (ընդարձակ տեղեկութեանց համար, ընթերցողը կրնայ դիմել Հանդէս Ամսօրեայ, 1903. թ. 11. նոյ. էջ. 321-325)։ Առանց նկատի առնելու Խալդի արձանագրութիւնները, ոմանք այնպէս կը կարծեն թէ Մելիտինէ հռոմէական հիմնարկութիւն մըն է. բացարձակ սխալ մըն է այս. միայն պէտք է գիտնալ թէ՝ նոյն քաղաքը աւելի մեծ զարգացում ստացաւ շնորհիւ հռոմէական ա՛յն լեգէոնին, որ Քրիստոսի 70 թուականին, Երուսաղէմը պաշարող ուրիշ լեգէոններու մէջ գտնուելով քաղաքին առումէն յետոյ, Տիտոսի ձեռքով հաստատուեցաւ ի Մելիտինէ, Եփրատի արևմտեան կողմը. ժիրդ լեգէոնն էր ան, պատմական Շանթաձիգ գունդը, որ իբր խորհրդանշան կը կրէր շանթազարդ վահան և դրօշակ, որ Եփրատական ամրութեանց մէջ դարանակալ կը հսկէր հայկական և պարթևական արշաւանքներուն դիմադրելու համար. ռազմական կայան մըն էր Մելիտինէ, և Հռովմայեցիք գիտցան օգտագործել «Հատանց» մեծամեծ ամրութիւնները։ Ժիրդ լեգէոնին ի Մելիտինէ բնակութեան և տեղական գիրութեանց պատճառաւ քաղաքը քիչ ժամանակէն մեծապէս զարգացաւ, ամէն կողմէ խուժեցին հո՛ն և Հայոց բազմութիւն մը, Հռովմայեցւոց օրերէն մինչև Յուստինիանոս, հոն կարևոր տեղ մը գրաւած ըլլալով՝ քաղաքը լեգէոնական բանակավայրէն զատ տարածուեցաւ, և մինչև 518, հռոմէական կայսերք կարևորութիւն ընծայեցին Մելիտինէի և զարդարեցին զայն հանրային մեծամեծ շէնքերով։ Զրդ դարուն սկիզբը հարկ եղած էր քաղաքը պարըսպել, Անաստաս կայսրը ձեռնարկեց զորձի բայց շատ մեռաւ. Յուստինիանոսի վերապահուած էր այդ գործը յանձնել տեղացի Հայոց, որ կատարեցին զայն, ինչպէս կ'իմանանք Պրոկոպիոսէն։

Քրիստոնէական կրօնը սկսած էր հետզհետէ տարածուիլ հռոմէական կայսրութեան մէջ. ժիրդ լեգէոնը կը մնար միշտ ի Մելիտինէ. ան՝ ինչպէս որ քաղաքին ընդարձակման կորիզը եղած էր, նոյնպէս արմատը եղաւ Մելիտինէի քրիստոնէացման. կանուխէն քարոզուեցաւ Աւետարանը Շանթաձիգ գնդին շարքերուն մէջ, բազմաթիւ զինուորներ ընդունեցին նոր կրօնը. ոմանք կ'ըսեն թէ ամբողջ լեգէոնը քրիստոնեայ դարձաւ։ Անոնց մասին Գրիգոր Նիւսացի եպիսկոպոս մեծ գովեստներ շռայլած է, յայտնելով թէ անոնք ո՛րքան զինուորական կարգուսարքին խրատապահ, նո՛յնքան զօրաւոր էին իրենց նոր ընդգրկած հաւատքին մէջ ալ։ Քրիստոնեայ Մելիտինէն, Զրդ դարուն, ըստ Պրոկոպիոսի զուտ հայկական քաղաք մը կը նկատուէր։

2.— Ս. Պողիկտոսի նահատակութիւնը եւ ազգութիւնը.

Շանթաձիգ ժիրդ լեգէոնին հարիւրապետներէն էր Պողիկտոս. իր զէնքի ընկերոջ Նէարքոսի յորդորներուն վրայ, ջերմեռանդօրէն յայտնեցաւ քրիստոնէութեան. խիստ էր անոր բնաւորութիւնը, որպէս զինուոր։ 260ին, Դիկոսի հրամարտակը ընդդէմ քրիստոնէից, Մելիտինէի պատերուն վրայ փակցուած էր. Պողիկտոս քաշեց պատուեց զայն, և փշրեց այն կուռքերը զորս քաղաքին քուրմերը ուռամբարձ կը կրէին տեղէ տեղ։ Պողիկտոսի այս արարքը տեսան պետական պաշտօնեայք, ձերբակալեցին ու բանտարկեցին. իր կինն ու անները շատ աղաչեցին՝ որ ի սէր զաւակաց, ան ետ դառնայ իր ընտրած ճամբէն, բայց ան կը մնար անյողդողդ, և տրուած վճռին համաձայն, գլխատուեցաւ և թաղուեցաւ ի Մելիտինէ։ Ս. Պողիկտոսի վկայաբանութիւնը չի գտնուիր թէև մեր ձեռնարկներուն մէջ, բայց կա՛ն անոր յիշատակներն և լատիներէն վկայաբանութիւնները, անոնք սակայն ակնառուն գրութիւններ չեն, այլ Երզ դարու հերոդեանի

digitised by A.R.A.R.@

մը քաղուածոյք։ Այդ վերջինը, 1882ին, գտնուած է Փարիզի Ազգային Մատենադարանին մէջ, Aubé-ի ձեռքով։ Հեղինակ մը կը գրէ թէ այդ նորագիւտ ներբողեանին տողերը կը մատնեն թէ ականատեսի մը այժմ կորսուած յիշատակարանէն յօրինուած է ան, որով բացայայտ կը հասկցուի թէ Գողիկոսոյ պատմականութիւնը անառարկելի է։ Այս գրութեանց հաւաձայն Նէարքոս՝ Գողիկոսոյ նահատակութեան պահուն, մարքոս կոչուած մը վրայ հաւաքած է անոր արիւնը և տարած Բանանիոդ, որ անձանօթ քաղաք մըն է։ Ոմանք Բանանէոդը կը նոյնացնեն, իբր բնակութեան տեղի կամ քաղաք, Հայաստանի քանանացի հրեայ զաղթականութեան նահապետ Բանանիոյսի հետ, որ Ցեսուի ժամանակ Հայաստան փոխած և անկէ սերած են Գնիրունիք։ (տ'ես P. Allard. Hist. des Persécutinos, էջ 538. Aubé, Polyeucte dans l'histoire, էջ 13, նաև Զամչ. Ա. Հատ. էջ 554-55)։ Սրտառուչ պարագայ մըն է նահատակեալ Գողիկոսոյ արեան այս ձև փոխադրութիւնը Բանանէոդ քաղաքը՝ իր զէնքի ընկեր Նէարքոսի ձեռքով։ Բանանէոդ քաղաքը թերևս Գողիկոսոյ ծննդավայրն էր, ուր պիտի պահուէր մարտիրոսին արիւնը։ Այս զմայլելի պարագան նկատողութեան առնուելիք կէտ մըն է նահատակաց արեան պահպանութեան տեսակէտով։

Ո՞ր ազգութեան կը վերաբերէր Գողիկոս, կարծիքները կը տարբերին. անմահ թատերգակն Գորնէյլ, որ 1643ին բեմադրեց Գողիկոսը և պանծացուց անոր յիշատակը, հայազգի կը համարի զայն և իշխանական ցեղէ, և կ'անուանէ Seigneur Arménien։ Ալիշանն ալ նոյն կարծիքն ունի (տ'ես Յուշիկ, Բ. էջ 239)։ Շատ կանուխէն, ինչպէս տեսանք, Մելիտինէն հայաքաղաք մըն էր, որ յեռոյ Երուդ Հայք անուանը ստացաւ. հաւանական է որ Գողիկոս հայ ծագում ունէր, թերևս ազնուական գերդաստանէ սերած։ Մելիտինէի հայ ազնուականութիւնը չատ վաղնջականպէտք է նկատել։ Բևեռական արձանագրութեանց մէջ կը յիշուին Մելիտանիք=Մելիտայ, Մելիտինայք եւ Մելիտինեանք (տ'ես Բանաներ, Հայ Նախարարութիւններ բեւեռաձեւ արձանագրութեանց մէջ. 1901, էջ 249)։ Թերևս այդ ազնուականութեան համար էր որ՝ Գողիկոս ամուսնացաւ Մելիտինէի հռոմայեցի կուսակալին աղջկանը հետ. սոսկական մը պիտի չկրնար ընել զայդ, ինչպէս կը կարծէ Ալիշան (նոյն Անդ)։

3.— Գողիկոսոս վկային պատմութիւնը.

Գողիկոսոյ անունը նշանաւոր եղած է Արևելքի և Արևմուտքի մէջ։ Արևելեան վկայաբանութիւնը կը յիշատակէ 7 Յնվր. 14 Փետ. ի Մելիտինէ. 22 Յնվր. ի Նիկոմիդիա. 21 կամ 22 Մայիս, ի Կեսարիա Կապադովկիոյ։ Ասորական վկայաբանութիւնը՝ 19 Ապր. և 3 Մայիս, իսկ Հերոնիմեանը՝ միևնոյն թուականներուն, ինչպէս նաև 13 և 27 Ապր.։ Հայ եկեղեցւոյ տօնելի սուրբերէն մին է Գողիկոսոս։ Ի պատիւ անոր եկեղեցիներ կառուցուած են Դրդ դարու կիսուն, ի Մելիտինէ, սուրբին տապանին վրայ, որուն պարգևը կը նկատուի Եւդիմէոս՝ Գաղեստինի հռչակաւոր անապատականը. ի Կ. Պոլիս, Վալենտիանոս կայսեր (364-375) աղջկան կողմէն հիմնուած եկեղեցին, որուն այցելած է Տուրացի Գրիգոր Եպս., բարեպաշտ տիկին մը, Յուստինոսի օրով, այդ եկեղեցւոյն ներքին կողմը ոսկւով զարդարած է, իր ստացուածքը նոյն կայսրէն ազատելու համար, մարդիկ նոյն եկեղեցւոյն մէջ կը կատարէին իրենց ամենէն հանդիսաւոր ուխտը։ Թավէննայի մէջ ալ Ս. Գողիկոսոս ունեցած է եկեղեցի մը, որուն նաւակատիքը կը կատարուէր Ապր. 9ին. (տ'ես H. Delehaye, Les origines du Culte des Martyrs, էջ 210)։ Եգիպտոսի մէջ ալ, Թեբայիսի մօտ, յանուն Ս. Գողիկոսոսի եկեղեցի մը կառուցուած պէտք է ըլլայ, այն պատճառով որ նոյն տեղը գտնուած հոգէ կանթեղներէն ոմանք նուիրուած են, ի յիշատակ նոյն սուրբին, ինչպէս յայտնի կ'ըլլայ Լուվրի թանգարանը պահուած նոյն կանթեղներուն արձանագրութիւններէն. (տ'ես Martigny. Dict. des Antiquités chrétiennes. Art. Lamps. էջ 408)։ Գրիգոր Եպս. Տուրացին, իր Հրաչից և Պատմութիւն Փառանց գիրքերուն մէջ Գողիկոսոսի պաշտամունքի նկատմամբ փառանց թագաւորաց և Կ. Պոլսոյ Ժողովրդեան հին սո-

digitised by A.R.A.R.@

վորութիւնները կը յիշատակէ և կը նկարագրէ այն ուխտագանցութիւնները, որ պատժուած կը համարուին Պողիկոսին կողմէն։ Ֆրանսայի հին թագաւորներն ալ յանուն Ս. Պողիկոսի կը հաստատէին իրենց դաշնադրութիւններն (տե՛ս Les Petits Bollandistes. Vies des Saint, էջ 484-85. նաև Ցուշիկ, Բ. էջ 239)։

Հայոց Ս. Պողիկոսի վանքը Երուսաղէմի մէջ.

Ինչպէս որ տեսանք վերև, Ս. Պողիկոսի պաշտամունքը վաղուց տարածուած ըլլալով Արևելքի մէջ, կարելի չէր որ Հայք ևս Մայրին յարգելէ հայազարմ վկային յիշատակը։ Բուն Հայաստանի մէջ չենք հանդիպիր աւուրին անուամբ կատուցուած սրբավայրի մը։ Ս. Բագարանի մէջ է որ կը կատուցուի Ս. Պողիկոսի անուամբ վանք մը, հայ նախարարներու բարեգործութեամբ հիմնարկուած վանօրէից շարքին մէջ։ Այս պարագան հաստատելու համար դարձեալ պիտի դիմենք յիշատակաց արժանի Անաստաս Վրդ.ի ցուցակին, ուր կը կարդանք հետևեալը. «Սուրբ Պողիկոսի վանքն, շինեալ Զորոնդպահն Հայոց ի նիւսխոյ կողմն»։ Այս է միակ յիշատակագրութիւնը այս վանքին նկատմամբ։ Ո՛չ օտարներուն և ո՛չ ալ մերայնոց քով ծանօթագրուած չենք գտներ Պողիկոսի հայ վանքը՝ որ յերուսաղէմ, բայց պատմականօրէն ան գոյութիւն ունէր, և շատ կանուխէն քանդուած ըլլալուն ոչ ոքի ծանօթ էր։ Անաստաս Վրդ.ի այս հակիրճ տողերը երկու հարցում կը գնեն մեր առջև, ո՞վ շինել տուաւ այս վանքը, և ո՞ւր շինուեցաւ։ Ըստ կարելւոյն պիտի ջանանք տալ այս երկու հարցումներուն պատասխանը։

1.— Ո՞վ շինել տուաւ այս վանքը.

Ալիշան՝ Անաստասի վերոգրեալ տողերու մէջ Զորոնդպահն բառով կը հասկնայ Զորոնդ Հայրը, որուն իշխանը Ս. Բագարանի մէջ շինել կուտայ նոյն վանքը Դրդ դարու առաջին քառորդին։ 1894ին, Դամասկոսի դրան մօտ մոզայիքի գիւտի ժամանակ, Աստուածատուր Եպս. յօդուածով մը (տե՛ս Նոր Դար Թ. 134) կարծիք կը յայտնէ թէ նոյն վանքը շինել տուողն է Ազգային պատմութենէ ծանօթ Մոփաց Նախարար Արքեղայոս, որ Ս. Արիստակէս հայրապետը նահատակած է Մոփաց աշխարհին մէջ, եւ յետոյ զղջալով երուսաղէմ եկած՝ և իբր ապաշխարութիւն շինել տուած է զայն ևայլն. յիշեալ եպիսկոպոսին այս կարծիքը կրնայ հաւանական ըլլալ, բայց պատմականօրէն չենք կրնար հաստատել. քանի որ այդ մասին յիշատակարան չունինք։ Անաստաս Վրդ.ի վերեւի տողերը սակայն ճշմարտութիւն մը կը բովանդակեն թէ Ս. Պողիկոսի վանքը Զորբորդ Հայոց սպարապետներէն մին շինել տուած է, և այս պարագան շատ բնական կը գտնենք, քանի որ Զորբորդ Հայք սահմանակից է Երորդ Հայքի, Մելիտինէի, ուր նահատակուեցաւ Ս. Պողիկոս։ Զորբորդ Հայք, ըստ բիւզանդական սահմանումի, Մելիտինէի, Միջագետքի և Տուրոնի մէջտեղի երկիրն էր (տե՛ս L'Arménie entre Byzance et Islam, էջ 305), որ կը կոչուէր նաև Մեծ Մոփք, հնոց Սոֆրանենք, մօտը ունենալով Շահունի կամ Փոքր Մոփքը, որոնց իշխանները մեծ դիրք կը վայելէին հայ նախարարութեանց շարքին մէջ, և կը մասնակցէին, ըստ պատմութեան, կրօնավարչական հանդիսութեանց։ Արդէն նախքրիստոնէական շրջանին ալ, հայ թագաւորներ կը նստէին հոն, ըստ դրամագիտական յիշատակարանաց։ Բուն Հայաստանի մէջ չէր ընդհանրացած Պողիկոսի պաշտամունքը, ինչպէս յայտնի է անոր հայերէն վկայաբանութեան չգոյութենէն. բայց Մոփաց աշխարհին և Մելիտինէի մէջ մեծ պատուով կը յիշատակուէր Սուրբին պաշտամունքը, ուստի անկասկած է որ Մոփաց աշխարհի իշխաններէն մին՝ Ս. Երկրին մէջ շինել տուած ըլլայ Պողիկոսի այս հայկական վանքը։

2.— Երուսաղէմի ո՞ր կողմը շինուած է այս վանքը.

Անաստաս Վրդ.ի գրածին նայելով Պողիկոսի վանքը շինուած է քաղաքին հիւսիսային կողմը։ Մինչև 1894 կարելի չէր եղած յիշուած կողմը գտնել այդ վանքին հետքը. բայց 1894ին Դամասկոսի դրան մօտ, Ս. Ստեփանոս եկեղեցիէն քիչ հեռի, Շատ մը հիմերուն պեղումներու ժամանակ, գտնուեցաւ գեղեցիկ մոզայիք մը, հայկական արձանագրութեամբ։ Տեղը ուր գտնուած են այս յիշատակարանը և ուրիշ հնութիւնք, ըստ

digitised by A.R.A.R.@

հնագիտաց, եղբն է ա՛յն վաղնջական մեծ պղտատային որ կը տանէր Մոգայիին կեսարիա. նոյն տեղւոյն մօտերը կը բարձրանար յաղթական կամարը՝ ի պատիւ Ադրիանոս կայսեր՝ որ Երուսաղէմը վերաշինած էր հռոմէական գաղթավայրի։ Ցիշեալ կամարին լատին արձանագրութեամբ բեկորները, ինչպէս նոյն կայսեր մարմարեայ պատկազարդ գլուխը գտնուած են նոյն տեղերը։ Ինչպէս հռոմէական շրջանին, նոյնպէս քրիստոնէական առաջին դարերուն, մոգայիքներով և մեռելական մատուռներով զարդարուած էր այս յաղթական կամարին մօտերը (տե՛ս Jérusalem Nouvelle, T. II էջ 35-39)։ Երուսաղէմի հիւսիսային կողմի վերոգրեալ հայկական մոգայքի երջանիկ գիւտը կը մղէ մեզ հաւանօրէն ընդունելու թէ Ս. Գողգոթայի վանքը շինուած է քաղաքին լաւագոյն մէկ պղտատային գլուխը, հռոմէական և քրիստոնէական յիշատակարանաց մօտիկ։ Այս հիանալի մոգայիքի գիւտին պատմութեան մանրամասնութեանց մէջ չեմ մտներ. այդ մասին ընդարձակ նկարագրութիւններ կան հայ եւ եւրոպական հրատարակութեանց մէջ. միայն պիտի յիշեմ քանի մը մասնաւոր կէտեր։ Գաղեսանին հնախօսութեանց վերարերեալ պարբերականի մը մէջ կը կարդանք (տե՛ս Palestine Exploration Fund, 1894-895) թէ հայկական մոգայիքի տեղւոյն պեղումները կատարել տալու գործը պետական որոշումով յանձնուած է Դանոթ հնագէտ Dr. Blissի, որուն տեղեկագրէն, ինչպէս նաև գերմանացի գիտնական Herr Von Schickի մասնաւոր տեղեկատուութենէն կը հասկցուի թէ այս մոգայիքը շինուած է մարդկային ոսկորներով լեցուն քարայրի մը վրայ, ունեցած է մեռելական մատուռ մը, ինչպէս յայտնի եղած է փլատակ պատերու մնացորդներէն. նոյնտեղը գտնուած են նաև քանդակազարդ խոյակներ, հողէ կանթեղներ, ապակեայ շիշեր. բաց ասոնց մոգայիքէն 25 ոտք հեռի տեղ մը գտնուած է մարմարեայ խաչքար մը, որ պեղումներու ժամանակ կոտրտուած է. կտորուանքը իրար բերուած ու կարգացուած են հայերէն գիրեր. խաչին ձեւն ու քանդակները ալ հայկական են։ Վերոյիշեալ երկու գիտնականները կը պնդեն թէ այս հայկական մոգայիքը ունի միևնոյն արուեստը և յօրինուածքը, ինչպէս Զիթենեաց լերան հայկական մոգայիքները, հետևաբար միևնոյն ժամանակի գործ. մէկ խօսքով, Ցուստինիանոսի օրով շինուած. վանքի, ըստ գիտնոց, մոգայիքի արուեստին ամենէն ծաղկեալ թուականը կը նկատուի Ցուստինիանոսի դարը. այս պարագան մեզ կը հաւատաէ թէ Դամասկոսի դրան մօտիկ հայկական այս գեղանկար մոգայիքն ալ Ցուստինիանոսի ժամանակին կը պատկանի, վանքի մը կամ եկեղեցւոյ մը յարկին տակ շինուած, որով մոգայիքին հետ վանքն ալ կանգուն մնացած կ'ըլլայ մինչև Զ դարու կէսը։ Արդ, Անաստաս Վրդ.ի նկարագրութեան համաձայն, Գողգոթայի վանքը Երուսաղէմի հիւսիսային կողմը շինուած ըլլալը պատմականօրէն յայտնի ըլլալով՝ վերև յիշուած մոգայիքը պահպանող յարկին նոյն վանքին շէնքը ըլլալը հաւանական կը գտնենք։ Ան հաւանօրէն Զ դարու սկիզբը կործանուած է, մոգայիքը դարերով հողի փլատակներուն տակ մնացած, և 1894ին, պատահական պեղումներէն երևան ելած է։

Վերև յիշուած հայկական խաչքարին կտորները իրար բերուած և կարգացուած է հետևեալ հայերէն արձանագրութիւնը.

«Ցիշեայ Պետրոս որ սրար եւ Յոհան որ եւ տանէր զիւայս զայս.» իսկ մոգայիքին վերայ արձանագրուած է Մեսրոպեան հնագոյն գրերով հետևեալ յիշատակարանը.

«Վասն յիշատակի եւ փրկութեան ամենայն Հայոց զարոց զանուանս Տեր գիտէ».

Այս երկրորդ յիշատակարանը անտարակոյս ակնարկութիւն մը է ա՛յն Հայերուն, որոց ոսկերոտիքը մոգայիքին վիմափոր քարայրին մէջ պահուած կը մնային։ Որո՞նք են այդ Հայերը. այդ մասին յիշատակարան չունինք. անոնք հաւանաբար ա՛յն Մելիտինեցի հայ նահատակներն են որ կը յիշատակուին Մելիտինեցի Մեծն Եւդիմիոսի վարքին մէջ։ Պատմագիրներէ գիտենք որ վերջնոյս օրով մանաւանդ, յաճախակի Երուսաղէմ ուխտի եկող Մելիտինեցի Հայեր կ'այցելէին նաև իրենց հայրենակցին, ի Սահէլ։ Երուսաղէմի անապատին նոյն այցելուաց մէջ կը գտնուէին հայ մեծ անձնաւորութիւններ։ Հաւանական է որ յիշուած նահատակաց

digitised by A.R.A.R.@

նոյն նշխարները Մելիտինեցի ուխտաւորներ շատ կանուխէն Երուսաղէմ բերած և ամփոփած են գարձեալ Մելիտինեցի Ս. Գողիկոսի վանքին մէջ, ուր յետոյ, ի պատիւ նոյն նահատակաց կառուցուած է այս աննման յիշատակարանը։ Այսպիսի պաքազայ մը աննախընթաց չէ Ս. Երկրին մէջ։

1925ին ալ, այս հայկական մոզայիքին մասերը գտնուած է հա.կազն Մօրիկ կայսեր, Արտպիսոս ծնած քրոջը՝ Անաստասիայի գերեզմանը՝ յունարէն արձանագրութեամբ և մոզայիքով գեղազարդուած(¹)։ Այս վերջին գիւտն ալ կ'ապացուցանէ թէ Ս. Գողիկոսի վանքին մօտ կը թաղուէին Մելիտինէի և շրջակայից այն ուխտաւորները որ կը վախճանէին Երուսաղէմի մէջ։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՒՆՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ո՛Վ ԻՄ ԱՍՏՈՒԱԾՍ

Ո՛վ իմ Աստուածս, դուն խոցեցիր զիս սիրով,
Ու վէրքը դեռ կը կոսոյ.
Ո՛վ իմ Աստուածս, դուն խոցեցիր զիս սիրով.

Ո՛վ իմ Աստուածս, երկիւղդ զիս հարուածեց.
Այրուցին նոն դեռ կը բանիէ,
Ո՛վ իմ Աստուածս, երկիւղդ զիս հարուածեց.

Ո՛վ իմ Աստուածս, ամէն բան զարհէ, գիտցայ,
Ու փառդ իմ մէջ բազմեցաւ,
Ո՛վ իմ Աստուածս, ամէն բան զարհէ, գիտցայ.

Դիւնոյդ ալեաց մէջ բաբառէ՛ իմ հոգին,
Զանգէ՛ իմ կեանքը սեղանիդ սուրբ հացովն
Դիւնոյդ ալեաց մէջ բաբառէ՛ իմ հոգին.

Անո՜ւ արիւնը զոր թափել չը կրցայ,
Անո՜ւ մարմինը տաժանքի անարժան.
Անո՜ւ արիւնը զոր թափել չը կրցայ.

Անո՜ւ հակասը որ ճիկնիլ գիտցաւ լոկ՝
Քու պատեղի ոտքերուդ տակ պատուանդան.
Անո՜ւ հակասը որ ճիկնիլ գիտցաւ լոկ.

Անո՜ւ ձեռներս որ չը կրցան ափսանիլ՝
Ածուխ հրանուս եւ ընտիր խունկ ճենճերման.
Անո՜ւ ձեռներս որ չը կրցան ափսանիլ.

(¹) Տե՛ս ԱՐԵՒ 1926. Թ. 2464, մեր յօդուածը Հայկազն Մօրիկ կայսեր քրոջ գերեզմանը Երուսաղէմայ մէջ խորագրով։

digitised by A.R.A.R.@

Աւասիկ սիրտս, որ բաբախեց ընդունայն՝
Դողդոջայի տախտակներուն վրայ տոմուն.
Աւասիկ սիրտս, որ բաբախեց ընդունայն.

Անհա՜ ոտներս նաւուրազնաց ուղեւոր,
Շնորհանուէր ձայնիդ յօժար նեստամուտ.
Անհա՜ ոտներս նաւուրազնաց ուղեւոր.

Աւասիկ ձայնս, խրդուբրտիւն նենգ՝ տրխեղծ՝
Ապաւաւի կրբտամբանքներն ընդունող.
Աւասիկ ձայնս, խրդուբրտիւն նենգ՝ տրխեղծ.

Անհա՜ այրեր, մոլորանքի թոպտերներ,
Աղօթայոյզ արցունքներէ՝ հիշանուտ.
Անհա՜ այրեր, մոլորանքի պատկերներ.

Եղո՜ւկ, Աստուա՜ծ ողորմութեան՝ սիրոյ, Դուն,
Ապախտութեանս անդրնդախոր այն վիրապն,
Եղո՜ւկ, Աստուա՜ծ ողորմութեան՝ սիրոյ, Դուն,

Արհաւիրքի՜ Աստուած, Աստուա՜ծ արբութեան,
Ոնիրներուս, աւա՜ղ, այն վիճը մրրին,
Արհաւիրքի՜ Աստուած, Աստուա՜ծ արբութեան,

Երջանկութեան, խաղաղութեա՜ն Աստուած, Դո՜ւն,
Բոլոր վախերս, բոլանդակ անգիտանքս,
Երջանկութեան, խաղաղութեա՜ն աստուած, Դո՜ւն.

Դուն այս ամէ՜նը, այս ամէ՜նը գիտես,
Եւ թէ մարդոց մէջ ամէնէն նէ՛ն եմ ես,
Դուն այս ամէնը, այս ամէ՜նը գիտես.

Բայց ունեցածս, ո՜ն, Աստուա՜ծ իմ, կուտամ Քեզ։

Թրգմ. Թ. Ե. Գ. ԲՕԼ. ՎԷՐԼԷՆ

ԵՐԿՈՒ ԱՂԱԻՆԻՆԵՐ

Աղաւնիներ երկու ճնոյշ
Իրար կապուած սիրով անոյշ՝
Կեանք հեշտանքն ու զուարճանս
Կ'անցունէին իրարու մօտ։
Մէկն անանցուն
Զանձրանալով տուն ու տեղ՝
Օր մը խորհուրդ կ'երթայ յիսար
Ուղեւորիլ հեռու աշխարհ.
Ընկերն յուզուած կ'ըսէ անոր.
«Ո՜, սիրելիս,
Ինչո՞ւ մեկնիս,
Եղբայրդ այդպէս
Անմխիթար մնայ ձգես։
Ինձ ցաւալի է բաժանում,
Այդ ոչ ոքի սի՛րտ ապառում.
Գոնէ՝ միտ բե՛ր,
Ճամբորդութեան բիւր վտանգներ
Ու ես կեցիր այդ խորհուրդէդ։
Աչքդ զէր
Ցարմա՛ր բլլար
Այդ քու դժբախտ դիտման համար.
Արտորպու ինչ պիտի ունիս։
Լսէ՛ խօսքիս,
Սպասէ՛ զարնան. կիս ժամ չկայ

digitised by A.R.A.R.@

Դուժկան ձախող ազգաւ տեսայ,
Նշան է սա
Թէ բոյուն մը սեւ ագռաւի
Պիտ՝ հանդիպի,
Եղբայրդդ միշտ ցանց ու բազի
Պիտ՝ երազի։
Զիւնի է օրն, ըսի պիտի,
Իմ սիրելիս արդեօք ունի՞,
Այսպիսի նեղ ատեն ինչ որ
Է հարկաւոր.
Ցարկ, ուտելիք, հուսկ ամեն բան։
Ի սիրբան
Դոցոր այս խօսքեր մեր ճամբորդին
Միտքը փորր ինչ դողդեցին.
Այդ տեսնելու փափաք անուն
Ու անհանդարտ բնաւորութիւն
Ցաղթեցին հուսկ։ ՀԵՂԲԱՅՐ. մի՛ շար,
Կ'ըսէ, երեք-չորս օր չերքար,
Ես կը դառնամ, գիշեր անցած
Առեն դիպուած
Բեզ կը սպասեմ վերադարձիս,
Որովհետև յոյժ պիտ՝ ախորժիս
Ով կեանքի մէջ բան տեսած չի՝
Զուենեար բնաւ բան որ պատմի։
Ճամբորդութեանս նկարագիր
Պիտի ըսես հնչաբերիր։
Պիտի ըսեմ, երբոր այսինչ տեղն էի ես՝
Այս ինչ դիպուած անցաւ գիշեր
Ցաչնեամ դուն ալ
Պիտի կարծես հիշդ հոն ըլլաս։
Ասոր վրայ մնաս բարով
Ըսին իրար շաց ու կոծով։
Բախտախնդիրն երթ ճամբայ։
Սեւ ամպ ե՛ռնս
Սպառնալից, մռրկոյի
Հորիզոնին վրայ տեսնուի՝
Ճամբորդին վրայ դնելով հարկ
Փնտռել իրեն պանդանոց յարկ։
Միայն մեկ ծառ
Մը գտաւ նա՝ պաշտպան տար
Ծագող առաստի փոթորկին դէմ։
Երկար չընեմ,
Օդ բացուելուն՝
Մաած, խրթուած՝
Ճամբայ կ'ելլէ անմիջապէս,
Ադեկ թէ գէշ
Զորցընելով մարմինն իր բաց։
Իրեն դիմաց
Դաշտ մը կ'ելլէ ցորեն բաղուած.
Ցորենին մէջ մեկ Ագռաւի
Կ'ուզէ անոր մօտ երթալ,
Ու կ'երթայ ալ,
Այդ փարմի մէջ կը բռնուի։

ԼԱՖՕՆԹԷՆ

Ցորենին տակ
Լարած հին զաղտնի ծուղակ՝
Որ բախտովի մաշ էր ու հին։
Մեր Ագռաւին
Իր կտուցով,
Թաթիկներով
Ու թեւերով
Ձիգ բաղելով,
Փետուրներին վրայ տալով
Հուսկ զայն խզել կը յաջողի։
Նոր փորձանք մի.
Անցող բոյուն՝
Որու ճանկն է անազատուն,
Կը նշմարէ մեր Ագռաւին,
Որ իր վարմին
Լար ու թելեր
Բաշխելով ճամբայ կ'ընէր.
Կարծիր թէ փախստական
Մեկ բիապարտ մը ըլլար ան։
Անցող դաժան
Պիտի նեսէր ճանկը վրան՝
Երբ սատանան Արծիւ մ'անուս
Ամպերեն վար կը խոյանայ։
Դողերու այդ պատերազմին,
Մեր արկածեալն գտաւ պատեն,
Նա կիսատեր
Շենքի մը տակ կը կծկեր։
Հոն պանդուխտած՝
Տուայտանաց
Կը յուսար թէ վերջն էր հասած։
Այդ տեղէ մը չարաձգի
— Մանուկ հասակ ողորմ չունի —
Անոր վրայ իր սարս կ'ուղղի
Ու կիսոմի կը մեռցնի
Արկածակոծ թեղն ագռաւին։
Սա ողբալով հեծեծագին
Հեսաբերիր
Ադեսաբեր բնոյթն իր՝
Անուն ձիգով
Վիրաւոր թեւն խկրտելով,
Կեռ-հաչ ու կոպ, ու կեռ մեռած
Նոր փորձանքի չհանդիպած՝
Վերջապես բոյն կը ժամաներ,
Իրար գտան Ագռաւիներ,
Ու խնդալից՝
Մոռցան ամեն վիշտ ու կսկիծ։
Սիրահարնե՛ր դոմ երջանիկ,
Թէ ճամբորդել կը փափաքիք՝
Մոս խաղաքնե՛ր գազա՛ք միայն,
Իրար հանար աշխարհ մ'եղէք
Միշտ այրազան,
Միշտ նորասքանչ, միշտ գեղեցիկ։

Թրգմ. Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԿՈՏՍԻՆ ԹԱՂՈՒՄԸ

Ֆրա Անձելիքոյ,
Ի՞նչ ոյս կը բախանցիր քու հոգիդ այն սրանուն,
Երբ մեսածումիդ աշխարհին մէջ յայտնուեցար հրաշալի
Այն գաղափարը վանք, քիւրեղային եւ անհուն,
Ու ցաւագին.
Ֆրա Անձելիքոյ, քա՛ն յոյսին այն ոսկի, քա՛ն երկինքն այն կապոյտ
Ո՞ր աստղերուն կրակին մէջը կ'այրի...

Հող կ'իջեցնեն կոյսը որուն կողերուն ծնա աստուածն որերուն,
Այրիներուն, տնանկներուն, հերոսներուն,
Որոր անոնց որ արիւնոս ձեռքերով Յոյսին կառչեցան,
Որոր անոնց որ սպասեցին գիշերներուն մէջ անձայն
Երբեք երբեք չի ծարող արեւներու.
Ֆրա Անձելիքոյ,
Երբ վրձինդ մարմին հոգեւ այն գաղափարն անանունն,
Ըսա՛, ըսա՛, ունեցա՞ր խորհուրդ տենչ մը արտաքուստ...

Եւ հիմա կ'ողորմ՛, կ'ողորմ՛, կ'ողորմ՛
Տղան մայրը, փոքրիկ անոյշ հոգի խանձարուրով պարուրուած,
Իր թեւերուն մէջ այնքա՞ն զգոյշ, մեղմիկ, շուշաններ
Հիւսուած պսակի մը նման.
Օրո՞ր շուտդ հոգիին,
Թեթեւ կապոյտ հոգիին,
Տաղանի մը պես ձեռնակ ասուերին մէջ իրիկուան.
Օրո՞ր, Ֆրա Անձելիքոյ, օրո՞ր...
Ու թո՛ղ մարմինն իջնի գերեզման,
Երբ հոգին իր ոորոցն է գտած, ինչպես թոցանուն իր թոյնն հրեղեն,
Մարմինն ի՞նչ փոյթ իր ամիւնին բնին տակ, իր խորհուրդին մէջ մանուան,
Երբ հոգին կակաչ մը է փրցուած յաւերժութեան ոսկեձաձանչ արեւներեն...

Օրո՞ր, Ֆրա Անձելիքոյ, օրո՞ր հոգիին որ արշալուսուած
Դէպի գիրքերն է մոայլ այս գիշերն վերջ կեանքին.
Տղան իր մայրը կ'ողորմ՛ ինչ խաղրոնն պզտիկցած,
Ինչպես երբ վերածուած ըլար պտուղն իր հրաշալի ծաղիկին...
Ինչպես երբ դարձած ըլար ջուրն աղբիւրին ուր կ'երգեր՝ խորն անոորրիկ սափորին
Չի բանտարկուած իր անհուն ջրութիւնով թիւրեղայ,
Ինչպես երբ վիեւնոյն վանք ցոյնով դանայինի
Մեռած ամբողջ արեւներն երկինքին մէջ շափիւղայ,
Ու կորսուած բոյրերն ամբողջ՝ իրենց կարմիր վարդերուն...

Գանիրէ

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ



digitised by A.R.A.R.@

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

The Annual Bulletin of the Academy of Medicine of Jerusalem, 1926-1927. 8° p. 40. Printed at L. J. S. Press, Jerusalem. N°. 1.

Այս խնամքով խմբագրուած եւ տպագրուած տետրակը կը բաժնուի երկու գլխաւոր մասերու։ Առաջինին մէջ կը պատկերացնայ Երուսաղէմի Բժշկական Ակադեմիայի գործունէութիւնը, իսկ երկրորդին մէջ կը տպարզուի Պաղեստինի առողջապահական վիճակը, մասնագէտ բժիշկներու կողմէն։

Բժշկական Ակադեմիան՝ Երուսաղէմի մէջ գործող բժիշկներու մէկ բնկերութիւնն է, որ կազմուած է թէ՛ բժշկական գիտութեան եւ առուեսին բարիքներ ժողովրդականացնելու ի նպաստ երկրին առողջապահութեան եւ թէ՛ միանգամայն բժիշկներուն յարգն ու վարկը պաշտպանելու համար։ 1926-1927ին անդամներուն թիւն է 51, որոնց շորսը հայ, Տբ. Վ. Գալպիեան, Տբ. Գ. Քէշիշեան, Տբ. Գ. Գրիգորեան, Տբ. Ե. Թորեան։ Իսկ վարչական ժողովին նախագահն է Տբ. Վ. Գալպիեան, որուն նախաձեռնութեան արդիւնքն է այն գիտական տեղեկագրին պատրաստութիւնը։

Տետրակիս երկրորդ մասը կ'սկսի Ակնարկով Dr. A. Tichoի կուռ եւ գիտական տեղեկագրովը՝ Պաղեստինի մէջ կուրութեան հիւանդութեան մասին։

Dr. Ticho կ'ըսէ թէ Եգիպտոսի նայելով զրեթէ 36,000 կոյր կայ Պաղեստինի մէջ։ թէ՛ մէկ եւ թէ՛ երկու աչքերով միանգամայն եւ վերջինիներուն համեմատութիւնը առաջինիներուն հետ զրեթէ 4 առ 3 է, ուրիշ խօսքով 10,000ին 166,6 կոյր է երկու աչքով։ Եւրոպայի մէջ ամենէն կոյր ունեցող երկիրը Փարուկայ է, կ'ըսէ, բայց Պաղեստին ուրիշ անգամ աւելի կոյր ունի քան Փարուկայը։

Պաղեստինի մէջ կուրութեան գլխաւոր պատճառներուն մէջ corneal scars, staphylomae, trachoma, եւայլն։ յետոյ կուգան glaucomas եւ cataract. վերջապէս uveitis եւ tuberculosis մասնաճիւղ եղած են կուրութիւնը յառաջ բերող պատճառներու շարքին, իրենց արդիւնքի կեանքին, ապրելու ատենի պայմաններուն եւ զէնսենդաութեան։ Նապլուս մասնաճիւղ եղած է այս կողմէ։ Էջ 22 ը կը գրաւէ մանրամասն վիճակագրոյց մը կուրութիւն պատճառող հիւանդութեանց թիւին եւ առ հարիւր համեմատութեան։

Կուրութիւնը տարեկան սեռին մէջ աւելի տարածուած է քան թէ իգականին մէջ։ Ուշագրաւ է նաեւ սա դիտողութիւնը թէ կոյրերուն բացարձակ մեծամասնութիւնը, Արաբ են. այսինքն հարիւրին 91,5. իսկ 8°/₀ Հրեայ։ Միայն երեք հիւանդանոցներ կան որ 100 հոգի կը պահեն այս հազարաւոր կոյրերէն։

Dr. A. Ticho սա՛ բառերով կը վերջացնէ իր տեղեկագիրը։

—«Պէ՞տք է որ կոյր զնուի Պաղեստինի մէջ։

Ապրելու բարեմասնչափանիշներ, ջուր, դրպրոցներ, ժողովուրդին լուսաւորութիւնը, վարպետի ձեռքով եւ ժամանակին եղած դարմանումը պիտի խափանէ կուրութիւնը 75°/₀ համեմատութեամբ։ Ես կը տեսնեմ **վարպետ** (expert) եւ **ժամանակին** (timely) բառերը»։

Աւար կը յաջորդեն հետեւեալ տեղեկագիրները.

The Characteristic symptoms of Typhoid Fever in Palestine, Dr. Salkind-էն։

—The Plagues, Colonel G. W. Heron-էն, որ Պաղեստինի կառավարութեան առողջապահական Տնօրէնն է։

—Brief Resume of the History, Anatomy, and Physiology of the Thyroid Gland with the Distribution and Classification of Goitre, Prof. B. F. Avery, Պէյրութի Համալսարանէն։

—«The Treatment of Goitre, Prof. Stanley Harris, Պէյրութի Համալսարանէն։

—Collaspe Therapy in Pulmonary Tuberculosis, Dr. N. Nucho, Պէյրութի Համալսարանէն։

Ս. ՍԱՊԱՀ-ԴԻՒԼԵԱՆ, ՄԱՔՍԻՄ ԵՒ ԵՂԲԵՐԻՆ ԲԱՑԱՏՐԱԻԹԻՒՆՆԵՐ, Հրատ. Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի Շրջանի Կեդր. Վարչ Մարմնի։ Մասնաշար «Երիտասարդ Հայաստան»-ի, Թիւ 30. Հրատարակեալ 1927, 8° էջ 173+3. Գին 1 Տալար։

Սապահ-Դիւլեան ծանօթ անուն մըն է մեր մէջ՝ ամէնէն յառաջ իբրեւ ուսուցիչ, եւ յետոյ՝ իբրեւ «յեղափոխական» բարոյիչ եւ հրապարակագիր. բայց «յեղափոխական» մը՝ տիրող ընկերաքաղաքական զաղափարներու եւ կարգերու հանդէպ, որ զէնքի, արիւնի հետ գործ չունի, գոնէ սկզբունքով։

Սապահ-Դիւլեան ո՛րչափ իր գրչով, բայց աւելի շատ իր խօսքով ալ աշխատած է ընկերվարական Մարքսի սկզբունքները քարոզել հայ ժողովուրդին մէջ։ Թէ՛ ինքն՝ Սապահ-Դիւլեան՝ իբրեւ զաղափարի մարդ, եւ թէ՛ իր կուսակցութիւնը, իբրեւ Մարքսի սկզբունքները ժողովրդականացնող կազմակերպութիւն մը, ո՛րչափ լաւ հասկրցած են Մարքսը եւ ո՛րչափ յաջողութեամբ կրցած են իրենք զիրենք հասկնալի ընել Հայ ժողովուրդին, ասիկա բաւական փափուկ հարցում մըն է, որուն պատասխանը կամ պատասխանները տալու համար է որ Մարքսը ամէնէն լաւ սերտող Նոյն ինքն Սապահ-Դիւլեան գրած է այս գիրքը, որ հետաքրքրական է շատ կողմերով։

Մարդիկ ընդհանրապէս դժգոհ են ընկերային կեանքի պայմաններէն։ Կարելի՞ է ստեղծել ա՛յնպիսի վիճակ մը մարդկային ընկերութեան համար, որ եթէ կարելի է, ամէն մարդ գոհ ըլլայ։ Ինչո՞ւ համար, կ'ըսեն, ոմանք շատ հարուստ պիտի ըլլան, ոմանք ալ շատ ապրատ։ ինչո՞ւ համար ժողովուրդին մեծ մասը իր ժամանակը, իր կորովը պիտի սպառէ շատ փոքրիկ, բայց առանձնաշնորհեալ մասի մը գործերուն մէջ, իբրեւ մշակ, իբրեւ բանուոր, իբրեւ ծառայ, եւ այդ ալ ոչ-արդար վարձքով, կարելի չէ՞ այս անարդարութիւններն ու անհաւասարութիւնները զարմանելու կերպ մը գտնել, եւայլն, եւայլն։ Ասոնց հետ նաեւ ընկերային կեանքի մէջ ազատութիւններ ընտանիքի եւ ընտանիքի անդամներուն համար, ինչպէս նաեւ կրօնական զաղափարներու եւ կարգերու մէջ արմատական յեղափոխութիւն մը, քանի որ եկեղեցին իբրեւ կազմակերպութիւն, իր պատմութեամբ եւ իր աւանդութիւն-

digitised by A.R.A.R.@

ներով, կը տիրէ բնկերային կեանքի վրայ, — մարդիկ հաւատալո՞ւ են Աստուծոյ, յարգելո՞ւ են եկեղեցական կարգուկանոնը, եւայլն, ուրեմն եկեղեցին ալ, իբրեւ կազմակերպեալ հաստատութիւն, բանի որ իր հակակշռին տակ առած է բնկերային կեանքին կարեւոր կողմերը, պէտք է տարածել զայն ալ, խզմի ազատութեան եւ անհատներու բնկերային կեանքին անկախութեան անունով, եւայլն, եւայլն։

Ինչ որ մենք շատ պարզ բառերով եւ բացատրութիւններով ուզեցինք հասկնալի բնել, ատոնք բնկերաբանական գիտութեան յատուկ բառերով եւ բացատրութիւններով բանաձեւուած ատեն, իրենց մասնաւոր բառագիտութիւնը (Terminologie) ունին, որուն շիտակ հասկըցողութիւնը մասնագէտներուն գործն է, եւ միշտակ եւ միջակէ մարդ զարգացում ունեցողներ բան մը չեն հասկրնար եւ չեն կրնար հասկնալ։

Եւ Ս. Դ. Հ. Կուսակցութիւնը այս անհատկրցողութեան համար է որ Բաղաքական յեղափոխական կուսակցութիւն մը նկատուած է Հայ ժողովուրդին մէջ, այնպէս որ նոյն իսկ կուսակցութեան անդամներէն շատեր Ս. Դ. Հնչակեանութեան յարած են իբրեւ ազգային կազմակերպութեան մը, որուն նպատակն է, ուրիշ բաղաքական կուսակցութեանց պէս, Հայ ազգին բաղաքական ազատութեան եւ անկախութեան համար աշխատիլ։

Եւ իրողութիւնն ալ այն է որ Ս. Դ. Հ. Կուսակցութիւնը իրբեւ բաղաքական կուսակցութիւն գործած է Հայ ժողովուրդին մէջ, թէեւ թերեւ չէ ծրած Մարքսի անունը եւ բէօրին։

Ես 1918, Հեկտ. 23, Դշ. օր Ամերիկայի Սիէթլ բաղաքն էի, ինծի այցի եկաւ Գ. Դ., լեռը երկաթուղի շինող խումբ մը հայ գործաւորներու կողմէն (Բղիի գիւղերէն), գինուորցու երիտասարդ մը, մաքուր սրտով պատուական հայ մը, գիս իրենց մօտ հրաւիրելու հոգեւոր մխիթարութեան համար, եւ այս առթիւ խնդրեց որ Սիէթլի հայ գաղութին մէջ տարբ երկպառակութիւնն ալ վերցնեմ եւ հաշտութիւն զոյացնեմ, այնպէս կարծելով որ երկպառակութիւնը արդիւնք է գժտութեան մը։ Կուսակցական կիրքի եւ պառակտումի մասին գաղափար չունէր ան։ Բայց ես հարցուցի իրեն, — Դուն կուսակցութեան մը կը պատկանի՞ս։ — Այո՛, Հնչակեան եմ, պատասխանեց։ Ինչո՞ւ Հնչակեան եղած ես, ի՞նչ է Հնչակեանութիւնը, գիտե՞ս։ հարցուցի։ — Չէ՞ որ բանի մը պիտի պատկանիս, ազգին ծառայութիւն մը ընելու, անոր համար կուսակցական եղած եմ, պատասխանեց։

Եւ այսպէս են շատեր եւ շատեր, որոնք կը պատկանին բնկերվարական կուսակցութեանց, այն միամիտ հաւատով թէ ազգային ծառայութեան պարտք մը կը կատարեն։

Սապահ-Գիւլեան իր այս գիրքին մէջ կը ճշդէ ու կը ճշգրտէ Մարքսիստեան գրութեան յատուկ բառերն ու եզրները, մասնաւորապէս ուզղելու համար իր կուսակցութեան շուրջ զոյացած թիւրիմացութիւնները։

Սապահ-Գիւլեան իր Բառաչարանին մէջ կը գրէ սա ուշագրաւ տողերը։

— «Այդ թիւրիմացութիւնները՝ մեր Կուսակցութեան նկատմամբ՝ դեռ կան։

Թէեւ վստահ ենք որ ազգասէր հետգհետէ ցոյց պիտի տայ՝ մեր Կուսակցութեան զուտ եւ անխառն մարքսիստական լինելը։

Կոմմունիզմը կ'իրականանայ, երբ Սոցիալիզմի տիրապետութեան առաջին շրջանին մէջ՝ իւրաքանչիւր աշխատաւոր կըստանայ իր աշխատանքի համեմատ վարձ։

Լենինը Մարքսի գաղափարը չընդունեց. եւ առաջին օրից իսկ՝ գրեց. «Իւրաքանչիւր աշխատաւորի իր կարիքին համեմատ վարձ» սկզբունքը։

Մենք անհամակարծիք դտնուեցինք Լենինի հետ՝ միայն այս կէտի մէջ. թէ չէ դասակարգային կռիւը եւ պրոլետարական դիկտատուրան մեր պաշտպանած սկզբունքներն են եղել, անընդհատաբար, մեր գոյութեան տարիների ընթացքում։

Իսկ Սոցիէդական կարգերը՝ մենք ամենայն անվերապահութեամբ ընդունեցինք ու նրա պաշտպանը հանդիսացանք մինչև այսօր եւ այսուհետև էլ պիտի շարունակենք»։

Դիրքին Ա. Մասին մէջ Սապահ-Գիւլեան բառերը եւ եզրները բացատրելէ ետքը, դիտել կուտայ.

— «Մեր դիրքը է՛լ աւելի լաւ հասկնալի լինելու համար՝ առնենք Երբորդ Միջազգայինի նախագահութեան մեր այս վերջին խօսքն էլ թէ՝ մեզ համար դեռ Արեւելեան խնդիրը վերջացած, փակուած չէ. նա բաց է. եւ Հայ վտառանգի, բնաւեր պրոլետարիատը, գիւղացին, ուշադրաւորը այդ «Խնդրի» վրնուաելու ազգակ-պանանգաստէրներից մէկն է մնում» (էջ 87)։

Դիրքին Բ. Մասը (էջ 90—173) նուիրուած է հերքելու այն դիտողութիւնները, որոնք ուղղուած են Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Վեղրոնական Կոմիտէի բարեւուզարի կողմէն Ս. Դ. Հնչակեանց հասցէին, ամբաստանելով զայն մանր-բուրժուազական (էջ 93) եւ ազգայնական (էջ 104)։

Սապահ-Գիւլեան կը ջանայ հերքել այս դիտողութիւնները, բայց ստոյգ է որ Ս. Դ. Հ. Կուսակցութիւնը միշտ խանգուած է ազգային գործերու, եւ նոյն իսկ Ազգային-Միութիւն կազմելու համար Ամերիկայի մէջ, ինքն Սապահ-Գիւլեան անձամբ Ամերիկա գնայ Տամասեանի եւ Խանդամեանի հետ, եւ Ս. Դ. Հ. Կուսակցութեան ներկայացուցիչները ամէնէն անհանդարտ անդամներն եղան Ազգային-Միութեան նիստերուն մէջ։ Եւ հակառակ այն իրողութեան թէ Ս. Դ. Հ. ո՛չ միայն իրբեւ մարքսիստական գործած է Հայ ժողովուրդին մէջ, այլ գործած է նաեւ միւս կուսակցութեանց նման բաղաքական եւ ազգայնական կերպերով, Սապահ-Գիւլեան կ'ըսէ.

— «Իրողութիւն է որ Սոցիալ դէմոկրատ Հընչակեան Կուսակցութիւնը երբեք չէ փարած «ազգայնական պրոպականդա», Նրա անդամները ո՛չ մի ժամանակ եղել են «Ազգայնականներ», այլ համոզուած և անվերածելի Մարքսիստներ՝ Հայ իրականութեան և միջավայրի մէջ» (էջ 107)։ Եւ հերքելու համար ազգայնական շարժումները, խմբա-

digitised by A.R.A.R.@

պետական գործունէութիւնները, որոնց մէջ նաեւ թիւրք փոստային զարնուիլը եւ կոզոպատումը, Սապահ-Գիւլեան, կ'ըսէ. «Դրանք սկզբնական անհրաժեշտ տարրեր էին զանգուածային ընդհանուր շարժումները հասնելու համար։ Եւ ո՞ր երկրի մէջ կատարուած յեղափոխական շարժումը այդ սկզբնական փուլերից չի անցել՝ որոշեալ եզրակացութեան, յառաջադրուած նպատակին հասնելուց յառաջ» (էջ 110)։

Սապահ-Գիւլեան իր Կուսակցութեան կողմէ կը հաշակուի իբրեւ «տեսարան» մարքսիստեան վարդապետութեան, եւ նա այս գիրքին մէջ կ'արդարացնէ այդ տիտղոսը, այնքան պարզ եւ յստակ են իր զարգացումները, եւ լեզուն ալ գրաւիչ։

Անշուշտ տարրեր եւ աւելի կենտրոնական խնդիր մըն է գիտնալ թէ Հայ ժողովուրդը իր բաղաքական, իր ընկերաբանական միտքով ո՞ր չափ պէտք ունէր այսպիսի շարժումի մը։ — Իրողութիւնը այն է որ Ս. Դ. Հնչակեաններ միշտ նկատուեցան իբրեւ ազգային գործիչներ, իրենք ալ այնպէս գործեցին, եւ առաջ համար ալ հրաժարուեցան, եւ իրենց լաւագոյն այժերը կախաղաններու վրայ մահացան իբրեւ հայ Էնտայիներ եւ պետական գաւառաններ, եւ ո՛չ թէ մարքսիստեան վարդապետութեան գործիչներ. վարդապետութեան մը, զոր, օրինակի համար, ոչ-թիւրք պետութիւնը գիտէր, ո՛չ ալ հայ գիւղացին կը հասկընար։

Սապահ-Գիւլեանի գիրքին պատմական դասը այն է որ, ուրեմն Հայ ժողովուրդը, Եւրոպայի մէջ ծրած ծագկած ընկերաբանական նոր վարդապետութեան մը Արեւելքի մէջ տարածման գաղափարին ալ արուած էր իր զոհողութեան բաժինը՝ Ս. Դ. Հ.-ի միջոցաւ։

Հայութիւնը պէտք ունէ՞ր այսպիսի պատասխանատուութեան մը ենթարկուելու, բանի որ ցրուած տիտուած ժողովուրդ մըն է ինքն աշխարհի ամէն կողմը։

Եւ այսոր ալ, այնքան փորձերէ եւ փորձառութիւններէ ետքը, Հայ ժողովուրդը ի՞նչ պէտք է ընէ իր գոյութիւնը պահելու համար, թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Հայաստանէն դուրս գաղթավայրերու մէջ։ Ասոնք խնդիրներ են, որոնց լուծումը չենք կարծեր որ կախուած ըլլայ ընկերաբանական **թէորիներէ**։

Սապահ-Գիւլեան իր այս գիրքին **Առաջաբան** գրած է 1927 Հկտմ. 23ին. իսկ ինքն փախճանեցաւ անկից վեց ամիս ետքը, 1928 Ապրիլ 28ին. տարիներով բաշխելէ ետքը ոչ-մարքսիստեան կեանքի մը տառապանքին շղթաները՝ զրկանքի տուայտումներուն մէջ։

Մարքսիստ «Տեսարան» Սապահ-Գիւլեան մեռաւ **ազգայնական** մթնոլորտի մէջ, իր ազգային Մայրենի եկեղեցւոյն թաղման կարգին ալ արժանացաւ։

Ի զուր չէ բուած որ մարդոց կեանքը հակասութիւններու շաբ մըն է։ — «Տեսարան» Սապահը մեծ հակասութիւն մըն եղաւ։ Խօսքով, գրչով մարքսիստ, իսկ կեանքի մէջ, գործի մէջ ազգայնական հայ։

Բ. Ե.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ

«ԱԶԳՍ ՄԵՐ»Ը

Մեզի կը հարցուի՝ թէ Ագաթանգեղոսի ա՛յն տողերուն մէջ՝ ուր Տրդատ կ'ըսէ Անահիտի համար «որ է փառք ազգիս մերոյ», եւայլն, ի՞նչ պէտք է թարգմանել այդ «ազգս մեր»ը տեղւոյն վրայ։ Փութանք բացատրութիւն մը տալ համառօտիւ։

Իրաւ է որ՝ առաջին նայուածքով՝ ա՛յնպէս կը հասկցուի, ինչպէս պիտի հասկընայինք, զոր օր. Եսայենացիին նոյն բառերը սա տողին մէջ. «(Արչակ գ'Վաղարշակ) մերոյ ազգիս թագաւորեցոյց» (Պատմ. Բ. 1), և, եթէ չենք սխալիր, բոլոր հին և նոր հայ ու եւրոպացի թարգմանիչներ Ագաթանգեղեան սոյն «ազգ» բառը, nation նշանակութեամբ կ'իմանան առհասարակ։

Ճի՞շդ է սակայն այդ հասկացողութիւնը. չենք կարծեր։ Վասն զի Տրդատ ըսել չուզեր՝ թէ Հայոց ազգին փառքն է Անահիտը, զոր, իր իսկ խօսքով, կը պատուեն բոլոր թագաւորները, մանաւանդ Յունաց թագաւորը. ու կ'աւելցնէ նաև թէ դիցուհին «արարեալ է ամենայն մարդկան բնութեան»։ Բիչ վերջը՝ երբ թագաւորը կը կրկնէ իր դաւանութիւնը՝ թէ «նոցա կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»՝ Անահիտի խնամակալութիւնը կը մասնաւորէ մեր երկրին համար, մինչդեռ «ազգիս մերոյ» բառերը Դիցուհիին բոլանդակ մարդկութեան բարերարելու դերը կ'ընդգրկեն ապահովապէս։

Շփոթութիւնը առաջ կուգայ անով որ՝ ազգը nation նշանակութեամբ տարբերուած ըլլալով մեր բառագիտութեան մէջ, բառին միւս հին առուիները սեռ, սերունդ, ցեղ, եւայլն, երկրորդական կարգի մը վրայ կը մնան միշտ։ Պէտք է գիտնալ որ՝ յատնականին համեմատութեամբ՝ մեր ազգ բառը չորս տարբեր բառերու թարգմանութիւնն է, զոր օր. Նոր Կտակարանին մէջ.

ἔθνος ազգ (nation)
γένος ազգ (սեռ)
γενεά ազգ (սերունդ)
φυλή ազգ (ցեղ)

Արդ՝ Ագաթանգեղոսի ծանօթ հատուածին «ազգիս մերոյ»ն՝ համաձայն յոյնին՝

digitised by A.R.A.R.@

— τῷ ἡμετέρῳ γένει — կը նշանակէ, ո՛չ թէ մեր ազգին, այլ՝ մարդկային ազգին։

Հետևեալ ցուցումները կը հաստատեն մեր բացատրը.

Առնենք ՈՍԿԵԲԵՐԱՆԻ սա խօսքը (ա). (¹)«Համարեա՛ց զաւանեալս բնութիւն մարդկան իբրև զմի հասակ, և զառաջին ժամանակսն զմանկուսոյ կարգ ունել ազգիս մերոյ — τὸ γένος τὸ ἡμέτερον —։

Նոյնէն (բ) (²). «Եւ զի՞նչ չահ իցէ ի նորա (նեռին) զալսանէն, զի յապականութիւն ազգիս մերոյ լինիցի» — τῆς ἡμετέρας γενεᾶς —։

Դարձեալ՝ (գ) (³). «Եւ զգնեցն ասելով զառաւել պատիւ և զփոյթն զոր ունի ընդ ազգիս մերում ակնարկէ»։ — τοῦ γένους (ἡμῶν) —։

ՓԻԼՈՆԻ Յաղագս Նախախնամութեան Բ հատէն. «Զի սրբեսցէ զազգ մեր — ἵνα καθάρῃ τὸ γένος ἡμῶν — (Տպ. Վենետ. էջ 70, նաև՝ 93, 103, 107, եւայլն։

ՅՈՎՍԵՓՈՍԷՆ. «Նովքոս (Նոյ) նախնին մերոյ ազգիս ապրեցաւ» — ὁ τοῦ γένους ἡμῶν ἀρχηγός —(⁴)։

ՊԻՏՈՅԻՑ գիրքէն. «Զայս (զձի) մերումս շնորհեաց ազգիս։ (Մատենագիր. Մ. Խորենացոյ, Տպ. Վենետ. էջ 452)։

ՅՈՎՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հատէն. «Դուստր ազգիս մերոյ Աստուածածնին կոչեցաւ (Դէր Թղթոց, էջ 86), հաւանաբար յոյն բնագրի մը հետևողութեամբ — ἡ τοῦ ἡμετέρου γένους Θυγάτηρ —, եւայլն, եւայլն։

Տարակոյս չիկայ որ այս հեղինակները, յոյն՝ հրեայ կամ հայ, ո՛չ թէ իրենց ազգին, այլ մարդկային ազգին կ'ակնարկեն իրենց այս տողերովը։

Կարելի էր բազմապատկել սոյն վիկայութիւնները, բայց պէտք չենք տեսներ աւելի ծանրանալու։ Գուցէ ընթերցողը այսչափն ալ շատ գտնէ՝ մերոյ ազգիս կամ ազգիս մերոյ բառերը ըստ տեղւոյն ճիշդ հասկնալու համար։

(¹) Մեկն. Թղթ. Պողոսի Ա հատոր, էջ 569, Տպ. Վենետ.։

(²) Նոյն. Բ հատոր, էջ 464։

(³) Մեկն. Մատթէի էջ 343, Տպ. Վենետիկ.։

(⁴) Հ. Թոռնեան՝ որ իր «Հաստատիքքի երկու հատորներուն մէջ հիւրընկալած է թէ՛ Ագաթանգեղոսի՝ թէ Ոսկեբերանի (ա) եւ թէ Յովսեպոսի հոս յիշատակուած կտորները, ուստանդին ուշադրութիւնը չէ հրաւիրած ազգ բառին մասնաւոր առումին վրայ։

Կ'արժէ գիտել տալ սակայն՝ որ սխալ հասկացողութիւն մը կրնայ իրականին մէջ գուցա բանալ անտեղի վարկածներու կամ թիւր ըմբռնումներու։ Օրինակով մը խօսինք։

Ակէ քառորդ դար մը առաջ, 1902ին, Revue de l'Orient Chrétien ի մէջ, Թոգաթի լատին միսիոնար M. D. Girard ի «Հայոց մատաղը» վերնագրով յօդուածը մեր ուշադրութենէն չէ՛ վրիպած։ Զանց ընելով յօդուածին նկարագրական մասերը, որոնք կրնան հետաքրքրական ըլլալ, կ'ուզենք կանգ առնել միայն այն հետևութիւններուն վրայ՝ զոր յօդուածագիրը՝ իբ կամ ուրիշի մը հայագիտութեան վատահելով՝ Մայր Մաշտոցի մէջ Մատաղի մասին գրուած աղօթքին «հաճեցար, (Տէր), մերոյս ազգի բարեպաշտել առ քեզ սեղանօք եւ պատարագօք» խօսքը կը թարգմանէր սա՛պէս. "Vous avez daigné, Seigneur, que NOTRE NATION (գլխագրումը յօդուածագրինն է) vous rendît un culte en dressant des tables et en offrant des sacrifices„: Եթէ լատին միսիոնարը այդ խօսքէն անմիջապէս առաջ գրուած «ի սերանալ եւ ի բազմանալ մարդկան ի վերայ երկրի» տողը նկատի առած ըլլար, ո՛չ «մերոյս ազգի» բառերով Հայ ազգը պիտի հասկնար, և ո՛չ ալ պիտի կարծէր թէ ատով Հայերը, ուրիշ ազգերէ զատուած ըլլալուն պատճառաւ, իրե՛նց միայն կը սեպհականէին Մատաղի սովորութիւնը, որպէս թէ Աստուած մասնաւորապէս Հայոց ազգին պատուիրած ըլլար վճարել այդ բարեպաշտական հարկը(!)։

Գործնականապէս ցոյց տալու համար թէ ո՞րքան կարեւոր է չշփոթել բառի մը ա՛յս կամ այն առումը, հնար չէր աւելի հրատանգիչ ու զուարճալի օրինակ մը գտնել քան լատին միսիոնարին այս չքնաղ գիւտը։

Ե. Ե. Դ.

digitised by A.R.A.R.@

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՒ ՃԱՌԵՐՈՒՆ ՍԷԿ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐԸ

(Շար. ՍԻՈՆ, Թիւ 7. 211 էջ)

	Տպագիրը	Ձեռագիրը
էջ 145 տ. 38-39	ոչ տեսանեմ զանասունս ի մարդոյ բնութիւն ախորժեալ	ոչ երբեք տեսանեմք զանասունս որ զգաղանաց ախտից ցանկանայցեն
» 146 » 2-3	Զի չունք իւրեանց նմանութեան ախորժին	Զի չունք յիւրեանց նմանիսն ախորժին
» — » 6	զանցուցանեն	ցուցանեն
» — » 8	Ով ահեղ երկայնմտութեանն Աստուծոյ	Ո՜վ անչափ ներողութեանն և երկայնմտութեան Աստուծոյ
» — » 12	զապականեալսն և զծանրացեալսն	զապականեալսն և զժանդազարծսն
» — » 15	Եւ արդ . . .	Եւ անդ . . .
» — » 17-18	քանի՞	քանզի
» — » 24	յիմար կուսանացն (այլք գ-ր-ի-ա-նացն)	տարակուսանացն
» — » 28-29	ոգիդ . . . ի ներքս զառնալ ջանայ և զոգեալ . . .	ոգիդ . . . ի ներքս ի մարմինդ ջանայ մտանել, խուսափել և զաւդել . . .
» — » 30	հայել ընդ դէմս . . .	հայել ի դէմս . . .
» — » 34	երկիւղ տարակուսանաց չարաղէտիցն տանջանաց:	երկեղ տարտարոսական տանջանացն. Կ՚-ա-ել-ցնէ որ ցրտագոյն է քան զամենայն սառամանիս ձրմռնային, և տապ տագնապի սաստկացն հրեղինաց յոր մեծատունն ըմբռնեցաւ:
» 147 » 2	ողորմութեամբ	ողորմով
» — » 4-5	զի մի՛ եկեալ օրն յափշտակիցէ	զի մի՛ եկեալ աւրն վախճանին եւ յափշտակիցիս
» — » 6	այլ փութա զերծանել ի պղծութենէդ	Այլ փութա պահաւք և յորդ աղաւթիւք և տրաւք տնանզաց քաւել զյանցանս, զերծանել ի պղծութենէ անձին քո
» — » 11	գեռաթաթախ տղմով	գեռհաթաթախ տղմով
» — » 15-16	թէպէտև ներկեալ նեխեցար ի սեւաթոյր ամբարչտութիւնս քո	թէպէտեւ ներկեալ թխացար ի սեւութեան ամբարտաւանութեան քո
» — » 20-21	այլ կանխեա խոստովանութեամբ, և ընդունիս որպէս զանառակ որդին	այլ կանգնեա խոստովանութեամբ (հ-ա- -ղ-ա-ղ-ա-ր գ-ա-ղ-ի- -ն դ-ր Զ-ա-ք-ի-ա-ն), և նա բարեբարութեամբն իւրով ընդունի զքեզ որպէս զանառակ որդին
» — » 25	և ջերմութիւն աղօթից	ջերմեռանդն յորդութիւն աղաւթից
» — » 26	. . . կապանաց սատանայի	և լուծանէ զկապանս սատանայի
» — » 28	հայցումն և հառաչումն	տարաձումն(.՞) և հառաչումն
» — » 33	արդ սրբեցիր . . .	արդ սրբեսցիր արտասուաւք . . . Կ՚-ա-ել-ցնէ զանանխչտի անկողնաւք
» — » 37-38	. . . մաքրել վարիւք առաքինու-	. . . մաքրել արդարութեամբ, առա-

digitised by A.R.A.R.@

			թեամբ և հանոյանալ Աստուծոյ	քինութեամբ հանոյանալ Աստուծոյ
»	—	»	38 ազատելն մեղաց չարանելի փնտռելոցներ զմարմինդ քո	ախտիւ մեղաց պղծելոցներ զմարմինդ
»	—	»	39 և շաղախեալ ծրդեալ	և շաղախեալ ծմրեալ
»	148	»	7-9 և դարձեալ յաղթութիւն զորձեցին. բազումք ազգատացեալք ի նաւարեկութենէ դարձեալ մնացան.	և ոգեցուցեալ յաղթութիւն զորձեցին։ Բազում ընչաւէտք ազգատացան, և դարձեալ ժրութեամբ և բուռն աշխատութեամբ մնացան առաւել քան զառաջինն
»	—	»	10-11 եւ միւսանգամ արդարացան ապաշխարութեամբ	և միւսանգամ ճշնութեամբ արդարացեալք՝ ընդ երկինս թռեալք(՝) և վերացան ի խորանս լուսեղէնս
			Ի ձառ	Ժ ձառ
»	149	»	5 յահեղ յանցանացս այսոցիկ	ի յանցանացս այսոցիկ
»	—	»	6 . . . սիրտ իմ	զոփոյ սիրտ իմ
»	—	»	7 վիրաւորիմ յանձանէ յայտմանէ ։	Կ՚ապրիմ, և զեղ վիրիս ոչ ոք որոնէ
3	—	»	29 անապաշաւ անօրէնութեամբ	անապարկեշտ անաւրէնութեամբ
»	150	»	2-3 կամ զարշելի անկողնեաց ամուսնութիւն կատարիլ (տարբերութիւն՝ զօրէն՝ զօրէն) զօրէն խոզի . . .	կամ զարշելի անկողնաւք ամուսնութեամբ կարծելով զօրէն խոզի . . .
»	—	»	8-9 և հաւատաց անօրէն խաբէութեան սատանայի։	և հաւատաց անդրէն սատանայի։
»	—	»	13 վասն չհրաժարելոյ մեր	վասն հրաժարելոյ մեզ(՝)
»	—	»	23 ո՞ր պատասխանատուութիւն կայցէ	զի՞նչ պատասխանի տայցեմք
»	151	»	2 տրամեցայ	տրամեցայ և մաշեցայ
»	—	»	8 ահա և սա զնոյն բողոքէ	և սա զնոյն ասէ
»	—	»	19-20 այլ և քինանայ եւս ընդ նմա եւ ոխայ	այլ քինահան, և ոխանայ
»	—	»	37 եւ այժմ ոչ ինչ համարին զայն բազումք	եւ արդ ոչ ինչ զայնմանէ(՝) համարին բազումք
»	152	»	7 հաւատար անասնագիտաց անուանեն զանձինս	հաւատար անասնագիտաց առնեն զանձինս
»	—	»	14 յօձից	յաւձի թիւնից
»	—	»	15-16 իսկ եթէ ընդ չարակն չհրամայէ հաց ուտել, ո՞րչափ եւս առաւել ընդ չարագործելն . . .	Զի եթէ ընդ չարականն չհրամայէ հաց ուտել, ո՞րչափ ընդ չարագործին . . .
»	—	»	19-20 զի եթէ ի դատարկէն փախչել հրամայէ որ դատարկ . . .	զի թէ յայնմանէ խորշել հրամայեաց որ դատարկ . . .
			23 զուցէ ուսանիցին	զուցէ, ասէ, ուսանիցին
			26 . . . չարչարիցիմք	չարչարիմք, Կ՚ապրիցնէ, ընդէ՞ր աւտար տղմալն շաղախիմք
»	—	»	28 և առաւել չփիցի ընդ այնոսիկ . . .	և յառեալ (թերեւս ՝ՀՀ կամ յՀՀ) չփեսցեն ընդ այնոսիկ . . .
»	—	»	36 իսկ մեք ընդ անկնունքն խառնակիմք	իսկ մեք ընդ անկնիքն խառնակիմք
»	—	»	38 բուրէ մեղացն ծանրութիւն	բուրեն մեղացն ժանդահոտութիւնքն
»	153	»	5-6 այլ քրիստոնեայքն միշտամեղք	Իսկ որք զառն եւս դատապարտին
»	—	»	որք առաւել եւս դատապարտին	

digitised by A.R.A.R.@

»	—	»	15-16	չէ նմանութիւն լուսոյ ընդ խաւարի	չիք միաբանութիւն լուսոյ ընդ խաւարի
»	—	»	21	որ սրտիւք աստուածապաշտ է	որ սրտիւ ոք զԱստուած պաշտէ
»	—	»	28	Աղէ հարց ընդ Թագաւորս...	Աղէ հայեաց և ընդ Թագաւորս...
»	—	»	32-33	սէր ընդ Թշնամիս նորա առնիցէ և բարեկամութիւն ընդ նոսա դնիցէ	սէր ընդ Թշնամիս Թագաւորին ունիցի կամ բարեկամութիւն առնիցէ
»	—	»	34	զանիւք և բանիւք	զանիւք և բանիւք(.՝)
»	154	»	9-10	զի թէ մատուցողն պիղծ է, առաւել նորա զոհն պիղծ է, և որոյ վարքն անսուրբ է...	զի թէ մատուցանողն պիղծ է, պիղծ համարեալ լիցի պատարագ+ նորա. և որոց վարքն անսուրբ են...
»	—	»	14	զբարեկամս և զվանատուս նոցա	զբարեկամս և զվանատուս նոցա
»	—	»	17	դատեսցուք յահեղ հուր գեհենին	դատապարտեսցուք հրով գեհենին
»	—	»	18	ի բաց եղիցուք	ի բաց եղերուք
			22	զազրեալ	զազրաց=ղեալ
			25-26	Զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի...և կամ զի՞նչ կայ հաւատացելոյն ընդ անհաւատին	Զի՛նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի...Կ՚=ԷՆԵ, զի խաւար ասելի է լուսոյ և լոյսն հալածիչ խաւարի, և կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին
»	—	»	33	զատուցանեն զմեզ յանօրինաց սիրոյ	զատեն զմեզ յանաւրինացն սիրոյ
»	—	»	37-39	այլ սուրբք զսուրբս խնդրեն և անօրէնք յանօրէնս յարին,	ԶԷ=ՔՐԷՆ ԴԷՂ =ՈՅՆ Ձ=ՈՒՆ ՀԷՐՔ=ՐՈ=ՐԻՒՆԸ ԳՈՒԲԷՐ Է ԲՈՒՐՎԷՆ. այլ արժան է սրբոց ընդ սուրբս բնակիլ, ընդ սուրբս աւթեվանիլ, զսուրբ ծառայս Քրիստոսի պահել, սրբոց հաւատացելոց հնազանդել, և հասանել սրբասաց առաքելոցն և մարգարէիցն և մարտիրոսաց ունկընդիր եղեալ. զի ընդ նոսին փառաւորեսցեն զամենասուրբ Երրորդութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցէ=ՐԿ=Ի=ՐՆ. Տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա Սարգսի հոգւոյն, բարեխաւսութեամբ սրբոյ Աստուածածնին և ամենայն սրբոց և ձեզ յիշողացդ. ամէն:

(Շարունակելի) Ե. Ե. Դ.

Քիչ անգամ կը զրեմ, կ'ուզեմ ա՛յդպէս բնել.
Ո՛չ թէ սովորական ծուլութիւնս է արգել,
Այլ երբ զի՛նչս այդ միտմով ձեռ կ'առնեմ, յիրաւի
Կը թուի ինձ վարել թի մը ցոկանաւի։

Régnier

digitised by A.R.A.R.@

ՄՕՐԸ ԼԵՋՈՒՆ

Դեռ իբր քսան տարիներ առաջ, հեռաւեայլը կը պատմէին Կովկասի Հայերը. մէկ. գարու երկրորդ քառորդին, երբ Պարսիկները Օսմանցիներէն եւ առին Արարատեան գաւառը, քանդեցին Երեւանի թեմին Հայ Եկեղեցիներէն շատերուն զանգակատունները. բայց երբ ապարատակող բանակը մօտեցաւ Վաղարշապատի, Էջմիածնի վեհ տեսարանը, Մայր Տաճարը՝ իր կաթուղիկէոսով, գմբեթներովը և բարձրակառոյց զանգակատուններովը բռնեց ամէնուն նայուածքն ու սիրտը.

— Աչխարհի վրայ ցրուած բոլոր Հայերուն ամէնէն մեծ սրբարանին, իբենց Մայր Եկեղեցիին, Մայր Տաճարին առջեւ հասած ենք. լուր զրկեց Հրամատարը Սպարապետին, պէ՞տք է որ կործանենք անոր զանգակատուններն ալ։

— Ո՛չ, պատասխանը բերաւ սուրհանդակը քանի մը օր ետքը. թո՛ղ գէթ մայրը կարենայ երբեմն երբեմն խօսիլ իր զաւակներուն հետ. մի՛ կտրէք իր լեղուն։

Ու խնայուեցան Մայր Տաճարին զանգակատուններն ու գմբեթները։

Ակէ՛ց է, կ'ըսեն, Էջմիածնի Եկեղեցիին այդ ատենէն Զանկը Քիլիսա (=Զանգակաւոր Եկեղեցի) յորջորջումը. ինչ որ եթէ մէկ կողմէն պատմական եղելութիւն մը կ'արձանագրէ հասարակաց յիշողութեան մէջ, միւս կողմէ կը մատնանշէ Էջմիածնի բարոյական նշանակութիւնը, նոյն օտարներու ըմբռնումին համաձայն. անոր մայրական դիրքն ու սրտախօսիկ դերը բովանդակ Հայութեան վերաբերմամբ։

Հայ զգացման և հայկական պատմութեան համար հաւասարապէս, սիկզբէն՝ մեծ, և հետզհետէ աւելի գեղեցիկ եղած է ան, Էջմիածին։

Անուն իսկ, զոր գերազանցօրէն բարձրը ու փափուկ ներշնչման տէր հոգի՛ մը պէտք է կերտած ու կիրարկած ըլլայ առաջին անգամ, սրտագրա՛ւ պատկեր, պատմութիւն է իր էութեան։— Մեր հաւատքին ըմբռնումովը, Աստուծոյ Միածին Որդին յատկապէս իջած է օր մը Հայաստան, Հայ ժողովուրդին հոգեւոր և ազգային փրկութեան գործը ծրագրելու համար։

Ու այս ամէնը՝ միակ բառի մը մէջ. Էջմիածին։

Առասպել կամ դիցավէպ չէ բնաւ ինչ որ այդ պզտիկ բայց շքեղ բառը կը շրջանակէ իր ծոցին մէջ, այլ առնուազն ապրուած մէկ տեսիլքը լուսաւոր մեծ սրտի մը, որուն մէջ իր ցեղին՝ իր պզտիկ ցեղին մեծ հոգին ապրեր էր օր մը հզօր բարբառներով։— Իր ապագային խորունկ ու անթեթեւ հաւատքը ունեցող ազգի մը հոգեբանական ամէնէն կարեւոր մէկ պահը եղած է այդ տեսիլքի երկնումին վայրկեանը։

Լուսաւորիչէն առաջ, շուրջ երեք դարեր, Քրիստոնէութիւնը տարաբնական քարոզութեամբ տարածուած և հաստատուած էր Հայաստանի մէջ. իրողութիւն է այս՝ անառարկելիօրէն ապացուցուած։ Բայց նոյնքան իրական և ստոյգ է թէ Աւետարանի հաւատքը, իբրեւ կազմակերպուած դրութիւն, իբրեւ ուրոյն նուիրապետութիւն, իբրեւ Հայոց Եկեղեցի, իր գոյութիւնը կ'սկսի Լուսաւորչի օրէն, Ան մանաւանդ եղած ըլլալով դայն իբր այդպիսի ինչ կազմակերպող և կնքող առաջին ձեռքը։

Արդ, կ'արժէ դիտել թէ Լուսաւորչի Տեսիլքին նկարագիրն ինքնին կը յայտնէ որ Հայ Եկեղեցին, իր կազմութեան առաջին վայրկեանէն իսկ. զինքը ծրագրող մտքին մէջ գոյացուեցաւ իբրեւ Ազգային Եկեղեցի, (այս ստորոգելին ըմբռնելով պատմական նշանակութեամբ միայն՝ առանց որեւէ վարդապետական առումի) այսինքն, իբրեւ կրօնական հաստատութիւն մը, որուն կոչումը պիտի ըլլար, նաեւ, քաղաքականապէս վտանգուած ազգի մը գոյութիւնը ապահովել և ամրապնդել բարոյական և հոգեւոր փրկութեամբ։

Այս սկզբունքը, քայլ առ քայլ բայց միշտ աւելի ճենցուն արդիւնաւորութեամբ գործադրուեցաւ, Լուսաւորչի անմիջական և արեւանատու յաջորդներուն օրով, հետագայ երկու դարերու ընթացքին, Նախ՝ Ս. Վրթանէսի ժամանակ, երբ Ազգին համար քրիստոնէական հաւատքով նահատակուած քաջերը իր հրամանաւ սրբոց կարգը դասուեցան։

digitised by A.R.A.R.@

ունեցան. յետոյ, Ս. Ներսէս Պարթևի տունն, եկեղեցւոյ իշխանութիւնը, բարեգործական հիմնարկութեանց հաստատումով՝ Ազգին բարոյական կեանքը ուժաւորելու մեծ գործին լծուեցաւ անձնուիրութեամբ. եւ ի վերջոյ, Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի թուականին, երբ Ազգային վերկենցաղումին ոսկեդարը հրաշակերտուեցաւ հայերէն գիրերու գիւտով եւ հայ գրականութեան ստեղծումով եւ մշակութեամբ։

Եւ այս ամէնը, Լուսաւորչի տեսիլքէն մինչեւ Սահակի տեսիլքը, ազգային տեսլականին իրականացման համար թափուած բոլոր ճիգն ու ջանքը կատարուեցան Վաղարշապատի, Արշակունեաց այս վերջին մայրաքաղաքին մէջ, որ երկնային անուրէնութեամբ հիմա կը լինէր այսպէս ուռաջին քաղաքամայրը ազգին նուիրապետական իշխանութեան, և ատով իսկ՝ հոգեւոր արգանդ վերածնութեան բովանդակ Հայութեան։

Այս պատճառաւ, ա՛լ այնուհետեւ, ժողովուրդը անոր վրայ տեսաւ միշտ խանդակաթ եւ փարելի մօր մը պատկերը. ու Մայր-եկեղեցի, Մայր-Տաճար, Մայրավանք եւ Մայր-Արոտ բացատրութիւնները, որոնց մէջէն իր արտին վրայ կը ծիածանուէին անոյշ եւ մաքուր լոյսի մը շողիւնները, ամէնուն հոգիներուն մէջ տպաւորուեցան անփոխարինելի քաղցրութեան մը ամէնէն սուրբ ազդուիներով։

Յետոյ, երբ քաղաքական հանգամանքներու եւեւէն, Հայոց Հայրապետանոցը իրը տասը դարեր փոխադրուեցաւ դէս ու դէն, Ազգին զգացումին մէջ Էջմիածին պահեց դարձեալ և միշտ իր նըշանակութիւնը։ Աթոռին այս տարուբերեալ վիճակը կը համարուէր դէպքերու հարկադրանքէն յառաջ եկած թափառականութիւն միայն, ու հայրապետները, թէև հեռու Էջմիածինէն, յաճախ կ'ստորագրէին Կաթողիկոս Էջմիածնի, պանդխտեալ ի։ . . . ։։

Սիրտերը չէին փրթած երբեք Լուսաւորչի Տաճարէն. հասկնալու համար թէ ո՞րչափ ճշմարիտ է այս մտածումը, պէտք է պատմութեան մէջ դիտել արտակարգօրէն խանդավառ այն ոգեւորութիւնը, զոր հայրապետական աթոռը Սիսէն Էջմիածին վերադարձնելու ձեռնարկը 1441ին յառաջ բերաւ ամբողջ Հայութեան մէջ, ու ընդհանուր գոհունակութիւնը, զոր այդ ձեռնարկին յաջողութիւնը պատճառեց։

Ատոյգ է թէ այս եղելութիւնէն ետքը, դեռ մինչեւ երկու դար, քաղաքական իրադարձութեանց հետեւանքով, Էջմիածնի վրայ օր մը չծագեցաւ բարի ատոյգ մը, ծնունդ տալու համար բարգաւաճ կեանքի նոր շրջաններու. այսու ամենայնիւ իր սէրը վառ մնաց միշտ ժողովրդին սիրտին մէջ, ու նոր ժամանակաց Յովհաննէսին՝ Առաքել Դաւրիժեցի՝ երբ կը գրէր ժէ. դարուն «Ի վերայ Աջոյն եւ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ», որքան պատմական՝ նոյնքան բարոյական ճշմարտութիւն մը կ'արտայայտէր։

Սուրբին արցունքներէն՝ այսինքն ազգին վիշտէն իր բոցին սնունդը առնող կանթեղը, ազգային յոյսը, ժողովրդին երեւակայութեան մէջ անչէջ մնաց միշտ Արարատի բարձունքին վրայ. ու Էջմիածին, սգաւոր այլ որդեսէր մայր, իր զաւակներուն՝ ի սփիւռս աշխարհի ցրուած Հայութեան խօսեցաւ միշտ իր յիշատակին քաղցրութեամբը, իր աւանդութիւններուն արդարութեամբը, իր մեռոնին շողակաթ օծութեամբը, իր սրբատաւ կոնդակներով, իր հայրենաքարոզ նուիրակներով, իր տարերոյն ու շարականովը, իր շնորհաշնութիւններով, իր զարգացումն ու ճեմարանովը, իր գրչագրերոյն ու տպարանովը, իր Արարատոյն ու բազմազան հրատարակութիւններով։

Վերջին պատերազմի ամէնէն բուռն ասպարէզներուն մէջտեղին, երկինք այնպէս կամեցան որ դարձեալ կանգուն մնայ Հայոց Մայրավանքը, Էջմիածին, Լուսաւորչի Մայր Տաճարը, իր գմբեթովն ու զանգակատուններովը, որոնց՝ վերջին պահուն նորէն խնայեր էր թնդանօթը, անդամ մը իր հրաշունչ երախը անոնց ուղղելէն ետքը։

Ազգն համօրէն իրաւունք ունէր այս դէպքին մէջ ևս տեսնելու խորհրդանշական եղելութիւն մը. Ատուած նորէն պահեր էր մօրը լեզուն, որպէս զի անիկա խօսի իր մտաց և հեռուն, աշխարհի չորս ծայրը ցրուած վշտահար զաւակներուն, վշտահար Հայութեան։

digitised by A.R.A.R.@

Բայց ան լուռ է ահա տարիներէ իվեր . . .

Ու լռութիւնն է նաեւ որ կը տիրէ միշտ իր շուրջը. ինչ որ կ'իմանանք իր մասին, տարտամ լուրերու և տարաձայնութեանց այն փշրանքներն են միայն, զորս հովեր մերթ ընդ մերթ կը նետեն մեր մէջ այս կամ այն անկիւններէն։

Ո՞վ է համբացուցեր մօրը լեզուն. եւ ինչո՞ւ կերպով մը հարկադրուած այդ լռութիւնը իր մասին։

Այս հարցումներուն պատասխանը, ամէն Հայու համար ո՛րքան խոռոչիչ նշանքան չիկնեցնող, սիրտերնուս մէջ է արդէն։ Պէտք չունինք այժմ մանուաւորութիւններով զբաղելու. բայց ամէնքս պարտական ենք կարծեմ մտածելու թէ այդ լռութիւնը աւելի քան ահաւոր, այսինքն մահացուցիչ բան մը ունի իր մէջ։ Անիկա կը նշանակէ, Կիլիկիոյ Շնորհաւոր կաթողիկոսը կ'ահազանգէ ԿՏԱԿ տիւղասին ներքև արտասարգած իր տոգերուն մէջ, թէ Հայ եկեղեցւոյ նուիրապետութիւնը ի վտանգի է, նախ իր կեդրոնին՝ Էջմիածնի մէջ նոյն իսկ։

Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռանիստ սրբավայրը կը թուի մատնուած ըլլալ սև կէտի մը, որմէ անգին անիկա պիտի դադրի այլ ևս Հայաստանեայց եկեղեցւոյ կեդրոնն ըլլալէ։

Տխուր է անշուշտ այս մտածումին տրուած տպաւորութիւնը. բայց իմ համեստ դատումովս, շա՞տ աւելի տխուր է այն տրամադրութիւնը որ կարծես թէ սկսած է ուրեք ուրեք միտքերը նախապատրաստել համակերպելու ի վերջոյ այդպիսի կացութեան մը, և այժմէն խորհելու նոյն իսկ թէ ո՛ւր պիտի փոխադրուի կամ ինչո՞վ պիտի փոխանակուի Էջմիածինը, երբ այլ ևս տեղ ցոյց չտրուի իրեն Արարատեան դաշտին մէջ, Վաղարշապատի տաճարներ։

Այսպէս, լուսեցաւ թէ մտածուած է ոմանց կողմէ որ, այդպիսի պարագայի մը մէջ, Մայր Աթոռոյ տեղափոխութեան յարմարագոյն վայրը պէտք է նկատել Արտազու Ս. Թադէի վանքը, ի Պարսկաստան, իբրև ազգին նախալուսաւորչեան աթոռներէն մին։

Ուրիշներ խորհեր էին Խորհրդային Հայաստանի արտաքոյ մնացած Հայութիւնը նուիրապետօրէն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթարկելու հնարաւորութեան մը վրայ։

Եղան դարձեալ ոմանք, որ թէ՛ Էջմիածնի և թէ՛ Կիլիկիոյ հայրապետական աթոռներուն մօտալուտ եղերական վախճանին մասին միանգամայն երկիւղալից, ազգային խմաստութիւն նկատեցին Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութեան համազգային գահուն դիրքը փոխանցել Հայոց Երուսաղէմի Առաքելական Աթոռին, աչքի առջև ունենալով Ս. Գաղաքին ներկայ առաւելութիւնները, և Ս. Յակոբեանց վանքին արդի ուսումնական եւ վաղեմի մշակութական բարգաւաճ դրութիւնը։

Այս երեք միջոցներուն վրայ առանձին անդրադառնալէ առաջ, կ'ուզէի սակայն երկու տողով նկատի առնել նախ սա պարագան թէ ո՛րքան հիմնաւոր կրնայ ըլլալ Էջմիածնի մասին զգացուած այդ մտավախութիւնը։

Հայութեան ամենամեծ մասը այժմ կ'ապրի Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միութեան սահմաններուն մէջ։ Ու գիտենք թէ ամենատուար այդ մեծամասնութեան մէջ դոյզն փոքրամասնութիւն մը կայ որ, առաջնորդուած Ազաս եկեղեցի կոչուած վատառողջ շարժումէ մը, զաղջ՝ եթէ ոչ ընդդիմադիր վերաբերմունք մը ունի Մայր Աթոռոյ հանդէպ. իսկ այդ կերպ վերաբերմունքը ուղղուած է — ինչպէս իրենք իսկ այնքան ճիգ կ'ընեն հաւաստելու — ո՛չ թէ Էջմիածնի գաղափարին, Մայր Աթոռոյ նուիրապետական կազմին և դրութեան, այլ Հոգեւոր Գերագոյն Խորհուրդի ձեւին, եւ աւելի անձնական շարժառիթներով, հաւանաբար անոր անդամներու անձին դէմ։

Պարզ է ուրեմն թէ բովանդակ Հայութիւնը, Հայաստանի մէջ եւ անկէ դուրս, հոգեւին փարած կը մնայ միշտ Էջմիածնի անուան և այդ մտածումին՝ որուն պատկերն է միայն իր բառը։

Արդ, հնա՞ր է միթէ, կամ ներելի՞ է մտածել նոյն իսկ թէ Հայաստանի ներկայ կառավարութիւնը, բախտորոշ վայրկեանի մը մէջ, Հայութեան հոգեւոր կեանքին ազգային ոգին ներկայացնող Հաստատութեան նկատմամբ պիտի ուզէ ունենալ այն-

digitised by A.R.A.R.@

պիսի կեցուածք մը, որ խարանակ վիշտ միայն պիտի պատճառէ ամբողջ այս ժողովուրդին։ Հայաստանի կառավարութիւնը Հայութեան սրտին դէմ պիտի առնո՞ւ այնպիսի քայլ մը. — կը փափաքիմ տարակուսիլ դեռ այս մասին։

Ոգին՝ զոր անիկա շարունակ պարզեց Հայ հայրենիքին անառական եւ քաղաքակրթական բարգաւաճումի ընդհանուր աշխատութեանց միջոցին, արդարամիտ այն վարմունքը, զոր կը թուի ան ցոյց տալ, հայկական ուղղագրութեան մասին եղած հապճեպ եւ սխալ անորինութեանց վրայ ուղելով անդրադառնալ վերատին, և վերջապէս այն իրողութիւնը թէ, հակառակ մեր զգացումները դառնացնող ինչ ինչ դէպքերու, Յորհրդային Միութեան պարագրութեան մէջ ստեղծուած հակակրօն պայքարի միջոցին, Հայաստանի մէջ և էջմիածնի հանդէպ տեղի չունեցան այն սաստկութիւնները, որոնք նոյնքան անոպայ խժդժութեամբ ի յայտ եկան Մոսկուայի և Տփղիսի եւ իրենց շրջանակներուն մէջ, անոնց եկեղեցական դպրոցական եւ նուիրապետական իշխանութեան դէմ, այս ամէնը կը թելադրեն զմեզ պարզապէս բոլորովին անձնատուր չըլլալ տակաւին տխուր յոռետեսութեան մը։

Ինչ որ ալ ըսուի, երեւոյթները ի՛նչ գոյներու տակ ալ ներկայացնեն իրականութիւնը, պէտք է ընդունիլ թէ Հայաստանի Հանրապետութեան արդի վարիչները Հայ են ամէն բանէ առաջ, եւ անկարելի է որ Հայեր, որոնք ազգին պատմական ինքնութեան և բարոյական առաքինութիւններու փասան ունին իրենց գիտակցութեան մէջ, ուզեն չհասկնալ թէ անհնար է տապարի հարուածով մը կոծանել ժողովուրդին ճակատագրին վրայ այնքան մեծ և բարի ազդեցութիւններով եւ արդիւնքներով յայտնագործուած դարաւոր զօրութիւն մը. անկարելի է որ այսպիսի համոզումներով սրտապնդուած, անոնք չուզեն այդ ուղղութեամբ մշակել նաև Յորհրդային դրութեան գերագոյն եւ իրաւասու շրջանակները։

Մեր համոզումը, աւելի անկեղծօրէն մեր իղձն ու ակնկալութիւնն է տարկա։

Հայ Եկեղեցւոյ նուիրապետական իշխանութիւնը կարծուածին պէս ի վտանգի չի կրնար եղած ըլլալ իր կեդրոնին մէջ իսկ։ Կիլիկիոյ մեծհոգի այլ դժբախտ Կաթողիկոսը, որուն դժխեմ նախազգացումներէն ոչ մին սակայն ստած է ցարդ իրականութիւնը, որտաղինս կը փափաքինք որ զէթ այս անգամ սխալած ըլլայ իր այդ թուքին մէջ։ Եւ թոյլ կուտանք նոյն իսկ մեզի, ըստ ոմանց թերեւս չափազանց միամիտ յոյսով մը, խորհելու թէ ազգին ընդհանրական Հայրապետը, եթէ կարենար, այդ նոյն յուսադիր ոգիով պիտի խօսէր մեզի։ Էջմիածին, այս խնդրոյն համար, լաւատեսութեան ազդիւր մը պիտի ըլլար, եթէ մայրը կարենար խօսիլ իր զաւակներուն հետ։

Ու մեր միտքը ընդունայն թափառումներով պիտի չշարժակոծուէր նոյն ատեն այլազան ուղղութիւններու վրայ, ի վտանգի համարուած կացութեան դարման փնտռելու համար այս ու այն պատմական կամ նուիրապետական դիրքերէն. դարման՝ զոր անոնք պիտի չկրնային մատուցանել, որեւէ այն պայմաններուն մէջ, ուր կը գտնուին այժմ իրենք։

Դաւիթ ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԵՐԵԶՄԱՆՆ ՈՒ ՎԱՐԴԷ

Գերեզմանը Վարդին ըսաւ.
Սիրո՛յ ծաղիկ, ինչ կ'ընես դուն
Ըզմեզ բրջող արցունքին այգուն։

Վարդն ալ հարցուց Գերեզմանին,
Դուն ինչ կ'ընես՝ որոնք կ'ընկնին
Քու մշշաթաց խորքիդ մէջ սեւաս։

Վարդն ըսաւ. Ո՛վ Գերեզման գէջ,
Այն ցողերով կը շինեմ ես
Մեղրի՝ յանկրի բոյրեր պիսպիս։

Ու Գերեզմանն. ա՜ռ այն հոգիին՝
Որ ինձ կու գան, ցաղ՛ ծաղիկ,
Հրեշտակ կ'ընեմ երկնքի մէջ։

Վ. ՀԻԻԿՕ

---

digitised by A.R.A.R.@

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԷ ԱՒԵՏԱՐԱՆ

Ամէն անոնք որ կը հետեւին Պատերազմէն ապին աշխարհի իրադարձութիւններուն, և կ'ուզեն տեսնել արդի աշխարհի ընդհանուր վիճակը, ո՛չ միայն պիտի լսեն իրատեսներու աղաղակը թէ աշխարհի բարոյական և մասնաւորապէս ցարդ հաստատուն ընդունուած չէնքերը կը խարխըլին, այլ նաև իրենք անձամբ պիտի զգան և հասկնան թէ ի՞նչ ահաւոր և խուլ շառաչումով մը անհիւթական երկրաշարժ ուժեր կ'ապառնայ մարդկային ընկերութեան։

Ամէն խորաթափանց միտք կը տեսնէ այս բանը. և մարդկութեան առաջնորդող դասակարգը կ'ուզէ սպառազինուիլ ասոր դէմ, և ինքնապաշտպանութեան միջոցներու կը դիմէ։ Ինքնապաշտպանուելու այս նախազգացումին արդիւնքն է աւանդի մէկ կողմէն ազգայնականութեան գաղափարին բարգաւաճումն ու շատ տեղեր տիրապետութիւնը, և միւս կողմէն այս կազմուող ու կազմուած ազգութեանց միջև բարձր յարաբերութիւնները յաւերժացնելու համար յարատև ու յամառ ջանքերը, ըլլան անոնք դիւաններու մէջ կնուած բանակցութեանց և դաշնագրութեանց միջոցաւ, ըլլա՛ն վաճառականական և առեւտրական ձեռնարկութիւններով, կամ ըլլան գիտական նուաճումներու համամարդկային հանգամանք տալու ձգտումով։

Մեր ազգն ալ, միշտ չմոռնալով իր չափը, կրցածին չափ ճիգ կ'ընէ պաշտպանուելու, քայքայումի մը նախազգացումէն առաջնորդուած. և ոչովհետև իր բացարձակապէս միակ ապաւէնը ազգայնականութիւնն է, (պատմութիւնը լաւ կը ցուցնէ ասիկա), կ'ուզէ լիովին փարիլ այդ գաղափարին, և ատով հետք մը բանալ իրեն համար այս անլոյս լաբիւրինթոսին մէջ, ուր ամէնքը կը խարխափեն ուղղութիւն մը գտնելու ճիգով։ Վատնդի յաւերժացումի անչէջ այդ տենչը անհատներուն հետ ազգերո՛ւն ալ է։

Ազգայնականութեան գաղափարը, սակայն, չ'ուժաւորիր լոկ տենչով և անոր արտայայտութեամբ. պէտք է հիմնաւոր եւ վաղնջականութեան դրոշմով վաւերացուած ու նուիրականացած հաստատութիւն մը գտնել և անոր յենուլ։ Վատնդի անհիմն ամէն նորոյթ ընդունելութիւն չի գտներ ամենուին՝ երբ ազգի մը խտէալ տալ պէտք ըլլայ, մանաւանդ այնպիսի ժամանակ մը՝ յորում միտքերը երերուն, անհանդարտ ու անդիկ վիճակ մ'ունին և եղած ձկտումին ու ճիգին նպատակն իսկ է խախտուած այդ միտքերը հաստատել, հանդարտել և զեկավարել։

Անձկալից այս որոնումին մէջ մեր առաջնորդող և մտածող ազգայինները, որոնք Հայութեան իբր ազգ գոյութեան նախանձախնդրութիւնն ունին, երբեմնիկ դիւա՛ մը ըրած ըլլալ կը կարծեն, անգիտակցաբար տարուելով որոշ դասակարգի մը գիտուինաւոր ուղղութենէն, երբ իրենց մտաբ կը դնեն Հայաստանեայց Եկեղեցին վրայ։ Եւ չեն վարանիր ըսել թէ Եկեղեցին է այն հաստատութիւնը որ մեր ազգայնականութիւնը պիտի հիմնաւորէ և հոգեւորէ։ Այսպէս կ'ըսեն շատեր՝ վասն զի բաւական զօրաւոր և արժանի հաստատութիւն մը կը գտնեն զայն այդ դերին համար, Անոր հնութեան և հասարակ հայուն վրայ Անոր—Եկեղեցիին—ունեցած ազդեցութեան հետևանքով, և բաւական տկար կը գտնեն զայն՝ ուրիշ լաւագոյն դերի մը համար, դերի մը՝ զոր տեսնելու և գնահատելու չափ հեռուներ չեն երթար։ Ուրիշներ՝ չարամիտ շնականութեամբ մը՝ չեն ուզեր Հայ Եկեղեցին աւելի մեծ գործ մը ստանձնած տեսնել, զայն անկարող կը գտնեն ուրիշ բան մը ընելու, և լսելեայն կը հրճուին ասոր համար։ Իսկ ոմանք ալ՝ բաւական ծոյլ և անտարբեր, կը բաւականան Եկեղեցիին թաղով «ազգը պահպանելու» պաշտօնը։

Հասարակաց այս արմատացած կարծիքը, այսինքն թէ Հայ Եկեղեցին իր գոյութիւնը կ'արդարացնի իր ԱԶԳԱՅՆԱԿԱՆ հանգամանքով միայն, առաջին ակնարկով ծափահարելի մեկնակէտ մը կը թուի թէ՝ կարգ մը հայ-քրիստոնեաներու և թէ՝ հայ-անքրիստոնեաներու։

Արդարեւ ճշմարտութիւն մը կա՛յ այս տեսութեան մէջ, և արժանիք մը կա՛յ զայն Եկեղեցիին վերագրելուն և Եկեղեցիին ալ զայն ընդունելուն մէջ։ Սակայն ո՛չ ամ-

digitised by A.R.A.R.@

բոզջ ճշմարտութիւնն է այն, ո՛չ ալ մեր եկեղեցիին իրական արժանիքը։ Եթէ մեր եկեղեցին մէկ է մեր ազգութեան հետ, եթէ Հայ եկեղեցին մեր ինքնուրոյնութեան միակ պաշտպանն ու հովանին է, ապիկա եկեղեցիին նպատակը չէ եղած և պէտք չէ ալ ըլլայ երբեք։ Ընդհակառակը՝ մեր եկեղեցիին այդ հանգամանքը անոր մասնակի մէկ յատկութիւնն է, իր գործունէութեան պարագաներէն յառաջ եկած արդիւնք մը, և մերթ ալ աւելորդ պաշտօն մը զոր ստանձնած է առ ի չգոյէ ուրիշ ազգայնական հաստատութեան մը, զոր հնար չէ եղած ծնուցանել քաղաքական դժբախտութեանց հետեւանքով։ Այսինքն, զօրաւոր ա՛չ պետութիւն մը, ո՛չ մշակոյթ մը ունենցանք, ո՛չ ալ ամփոփ ազգ մը կրցանք ըլլալ։ Աւելի յառաջ երթալով՝ մեր եկեղեցիին շեշտուած ազգայնականութիւնը արդիւնքն է արտաքին առաքելութեան յձուելու իր քրիստոնէական առաջնակարգ պարտականութեան մէջ թերանալուն, այլ և այլ պատճառներով։

Եւ այժմ, ինչպէս դիտել տուինք, ոմանց տգիտութեան, ուրիշներու դիտումնաւոր խեղաթիւրումին, և ոմանց ալ, որոնք ամէնէն աչալուրջը պէտք էր ըլլային, անտարբերութեան հետեւանքով, մեր եկեղեցիին երկրորդական մէկ արդիւնքը իր միակ նպատակն ու կոչումը կը դրուի, և այս թիւրիմացութիւնը կ'ընդհանրանայ և կ'արմատանայ միտքերու մէջ, ի հարկէ թէ՛ ի վնաս Հայ ազգութեան և ազգայնական զաղափարին, և թէ՛ առաւելապէս Հայ եկեղեցիի իրական ու խսկական կոչումին, զոր հասկնալէ և իրագործելէ, ուստ՛ ճշմարտութի՛ւնը բանք, հեռու է տակաւին։

Մեր ժողովուրդին հայրենասէր և լուսամիտ հատուածը թո՛ղ սթափի։ Այն դասակարգը, որ խրատուցիչ քմծիծաղով մը յառաջ կը քշէ վերոյիշեալ թիւր տեսութիւնը, պէտք է ծանօթ ըլլայ իրեն։ Թո՛ղ յիշէ ան թէ մեր եռանդն ան այն ժամանակները ուր իրենց գանկերը նորոյթի գաղափարներով խռնած դասակարգ մը ունէինք, որ եկեղեցին Ազգութեան գերեզմանը կը նկատեր, որ չէր քաշուեր նախատելէ զայն՝ փոխանակ ցաւակցելու և գործակցելու անոր, որ մեր մեծ ազգասէրներուն վրայ մահափորձ կը կատարէր, որ անաստուածութեան ախոյեան կը կանգնէր ի կորուստ այն ժողովուրդին զոր փրկել կը յաւակնէր, որ քրիստոնէութիւնը խարէութիւն կը նկատէր։ Այս բոլորը թո՛ղ յիշէ ազգասէր հայը և չատուի հիւանդագին մտայնութիւններով։

Պէտք է տեսնել հակասութիւնը անոնց, որոնք մինչ մէկ կողմէն կ'ազմկեն թէ եկեղեցին պէտք է մերկանայ իր այն բոլոր ազգայնական-աշխարհական զոյն ունեցող գործերը, որոնք իր վրայ կը գտնուին, (և այս միակ կէտին մէջ իրաւամբ), և պէտք է զգենու միայն ու միայն Աւետարանի քարոզութեան իր պաշտօնը, միւս կողմէն կ'ըսեն թէ եկեղեցիին արժանիքն է ազգութեան պահպանման հակելը, և այդ պատճառաւ ալ կը լուտանն զայն հալածողներու դէմ։ Գոռացող հակասութիւն մը՝ է այս, և պէտք է անոր մէջ ինկածներուն երեսին դարնել զայն բաց կերպով. վասն զի ազգայնականութեան ծառայման համար չանի բռիկը խաղամսկան գործ մրն է բոլորովին, սխալ բացատրութեամբ մը՝ պետական գործ։ Փակագծի մէջ ըսենք թէ ա՛յս պարագան է որ շեշտել կ'ուզեն անոնք որոնք Պետութեան և եկեղեցիի բաժանման խնդիր կը յարուցանեն. և սխալ կը հասկցուին՝ վասն զի «պետութեան և եկեղեցիի բաժանում» բացատրութիւնը եւրոպական պատմութեան կալուածին կը վերաբերի, եւ այս վերջին հանգամանքով զայն մեր ազգին կիրարկել հնար չէ, ինչպէս որ ապացուցուեցաւ Սիոնի Ամրագրականներուն մէջ։ Անոնք իրենց ուզածը հասկցնելու համար ուրիշ բացատրութիւն մը պէտք է գտնեն։

Ոչ, հայրենակիցներ, եկեղեցին ազգայնականութեան գործիք մը չէ բնաւ, և պէտք չէ երբեք ըլլայ։ Այդ ուղղութեամբ օգուտ մի՛ սպասէք անկէ, ան միա՛կ պատճառաւ որ իր կոչումը, իր նպատակը, իր հաստատութեան շարժօնը (motif) չէ այդ։ անոր կոչումը աւելի բարձր բան մրն է։ Եթէ բեռցնենք անոր վիզին այդ պաշտօնը, ազգայնական զաղափարը կը տուժէ։ Եւ այդ տոյժը մեզմէ ոչ մէկուն բաղձանքն է։

Այս մասին պատմութեան դասը պերճախօս է։ Հոն եկեղեցին չ'արգելաբացներ իր ազգայնական դերը, վասնզի ամէն անգամ որ եկեղեցին փորձած է ազգայնականու-

digitised by A.R.A.R.@

թեան ախոյեան կանգնել, տուժել առած է անոր։ Մեր ազգային սուրբերու արժանիքը իրենց խանդավառ քրիստոնեանէր բլլալուն մէջ է, և ո՛չ թէ ազգայնականներ։ Պէտք է լաւ ի միտ առնուլ սակայն։ Անոնք հայ-մարդը Քրիստոսի շնորհիւ դէր բարձրացնելու ճգնեցան ու զոհուեցան։ «Ազգը պահպանելու» միջակ մտայնութիւններով չանա՛ն։

Ուրեմն կա՛մ պէտք է եկեղեցին ինքն իր գլխուն թողու ազգայնականութիւնը, և ինք Հայ ժողովուրդին Քրիստո՛սը բերէ, կա՛մ ալ Քրիստոս և Աւետարան մէկ կողմ թողու՝ և ազգայնական հաստատութիւն մը դառնալով զայն՝ ջատագովէ եւ անոր աշխատի։ Եւ այս վերջին պարագան արտաքոց է ի հարկէ։

Ազգը, իր գոյութիւնը յաւերժացնելու համար իրը ազգութիւն, ուրիշ ազգութիւններու պէտք է որ դիմէ։ Այդ ազգութիւնները ցուցնել չէ մեր նպատակը այս տողերով։ Միայն մատնանիշ կ'ընենք մեր Հին Մատենագրութիւնը, իր հնութեամբ, փառաւորութեամբ, շինիչ հանգամանքով, զուտ ազգայնականութեամբ, հզիկնակաւորութեամբ։ և Նոր Գրականութիւնը, որ է և պէտք է բլլայ արդիական, առողջ, լուսաւոր, ազնիւ, և հայրենասիրական։ Հայ Ազգին ազգայնական ձկտումները յառաջ մղելու եւ իրագործելու համար այս ազգութիւնները օգտագործել կրցող հաստատութիւններէ ալ զուրկ չենք։ Կա՛ն կուսակցութիւնները — եթէ անելիք մը պէտք է ունենան անոնք՝ ա՛ւասիկ—, կա՛յ Բարեգործականը որ կրթական ծրագիր որդեգրելով ազգին կենսունակութիւն ներարկած կ'ըլլայ, կա՛ն Թերթեր, կա՛ն Հայրենակցական Միութիւններ, Ուսանողական Միութիւններ, և դեռ ուրիշ մեծ ու փոքր ազդակներ։ Անոնց բոլորն ալ արդէն նոյն ուղղութեամբ կ'աշխատին. կը մնայ դանոնք ուժգնորել, նիւթապէս և բարոյապէս մեր ի ձեռին ունեցած ամէն հնարաւորութիւններով։

Հայ Քրիստոնէական եկեղեցին ուրեմն պէտք է, կը կրկնենք, միանգամ ընդմիշտ թողու որեւէ կերպով ազգայնական պրոպագանդը անոնց՝ որոնք կրնան, և որոնց կը վայելէ որ կարենան։ Մէկ ձեռքի մէջ երկու ձմերուկ չի տարուիր. ան՝ պարագայ մը ուր այս ժողովրդական ճշմարիտ առածը յոյժ կը պատշաճի։

Թէ ի՞նչ է եկեղեցիին կոչումն ու գործը — յայտնի է անիկա։

Սա բացայայտ է թէ եկեղեցին գործիք մը չէ, ինչպէս կ'ուզեն ընել զայն մէկ կողմէն ազգայնականներու որոշ մէկ դասակարգը, գործածել ուզելով զայն իրենց խմբական շահերուն, և միւս կողմէն այլ երբեմն՝ եկեղեցականներ, որոնք իրենց իսկական գործին հաւատարիմ չեն։ Եկեղեցին Աւետարանի գործիչն է գերագանցապէս և բացարձակապէս։ Իր այդ հանգամանքին մէջ կը կայանայ անոր ամբողջ արժանիքը։ Եւ հայ եկեղեցականներ այդ արժանիքը արդիւնաւորելէ զատ ուրիշ ոչ մէկ ուղղութեան պէտք է հետեւին։ Եւ պէտք է հետեւին ուղղակի։ Անուղղակի միջոցներ՝ այն ատեն միայն կ'արդարանան՝ երբ ուղղակի և անհրաժեշտ պէտքեր զոհացուած են արդէն։

Մենք մեր եռին կրօնական մատենագրութիւն մը միայն ունինք. աշխարհիկ մշակոյթէ զուրկ ենք գրեթէ բոլորովին։ Անոր պատճառը ի մէջ այլոց սա՛ է թէ մեր սուրբ Հայրերը Քրիստոսէ և կրօնքէ զատ ուրիշ ոչ մէկ բան հասկնալ ուզած են. կ'երևի նոյն իսկ չեն քաջալերած ուրիշ որեւէ ուղղութիւն։ Ոմանք այս պարագան թերութիւն մը կը նկատեն մեր սուրբ հայրերուն կողմէ։ Մանաւանդ պիտի ըլլար այսպիսի մտածում մը։ Անոնք իրենց գործը կատարեցին։ Այդ կէտին մէջ աշխարհականներն են զատապարտելի— եթէ երբեք կարելի է այդպէս ըսել, քաղաքական և տնտեսական և ուրիշ այլեւայլ աննպաստ և դժբախտ պատճառներ նկատի առնելէ հետ։

Պէտք է հետեւինք մեր հայրերուն. անոնց խմաստութեանը պէտք ունինք այժմ և միշտ։ Ժողովուրդը միայն, ջանալով գտնուս քաղաքակրթութեան հետ քայլը պահել, պէտք չէ որ ամէն պատասխանատուութիւն եկեղեցւոյ վրայ թողու։ Ժողովուրդը իր եկեղեցականներէն կրնայ պահանջել միայն Աւետարան, և եթէ հընար ըլլայ, նաև մատաղ սերունդին կրթութեան ատաբ։

Հայը պէտք ունի ազգային նկարագրի և անհատական նկարագրի։ Շատ յեղյեղուած և հասարակ-տեղիք դարձած է այլ ևս սա իրողութիւնը թէ Ազգը շատ մեծ

digitised by A.R.A.R.@

կորուստներ ունեցաւ Համաշխարհային պատերազմին և գաղթականութեան հետևանքով։ Կորսնցուց հոգեպէս, մտաւորապէս, բարոյապէս և նիւթապէս։ Կարօտ ենք այնպիսի՝ զոր մեր չափով կը ցուցնէինք բարգաւաճ ու տոհմային նոր գրականութեամբ մը։ Տխուր անդրադարձումներով ու շատ ցանցառ և յաճախ միջակ ու անարժէք գործերով չէ որ պիտի նորաստեղծէինք արդի քաղաքակրթութեան գէթ հետևող մշակոյթ մը։ Հոգիի ճախրանք մ'ունենալու և աստուածային իրերով խանդավառուելու ոչ մէկ որոշ և ակներև ձգտում։ Բարոյական չափանիշներու արժէքները կարծես թէ տկարացած են մեզի համար։ Անհամ ակեպտիկութիւն մը ծաւալ գտած է։ Բազմական ազգերու մէջ ցրուած՝ յաճախ հետամուտ ենք անոնց մոլութիւնները կապկելու։ Ընտանիքի այդ քաղցրաբոյր նուիրականութիւնը կը ցնդի։ Իրր ազգ՝ հարստութեամբ ալ փճացանք բոլորովին։ Տնտեսական խոշոր ուժեր թողուցինք Թուրքիա ու տարագիր եղանք։ Այս բոլոր տխուր երևոյթները դարմանելու համար պէտք ունինք նոր կենսունակութեան, կորովի, ազնուութեան, ներշնչումի, մտածումի։ Պէտք ունինք ուրիշ ազգերու համակրութեան, վասնզի ոչ մէկ ազգ պիտի հիւրընկալէր թափառական ժողովուրդ մը, որ Բրիտանիկ Համայնագիտարանին պէս ծաւալ գտած հրատարակութեան մը մէջ կ'արձակուի իրր ցանհամբոյր կատաղարութեան մը ներքև տարկացած, ուղղամտութեամբը թերի, արիութեամբը և անձնավստահութեամբը պակասաւոր։ Մէկ խօսքով՝ պէտք ունինք հոգեկան և բարոյական բարձրացումի։ Ամէն մեծութիւններու հիմն ու խարիսխն է այդ բարձրացումը։ Եւրոպան նիւթականէն աւելի իր բարոյական և հոգեկան ուժին կը պարտի իր քաղաքակրթութիւնը։ Մի՛ ըսէք թէ եւրոպան ապականած է։ Արդէն քաղաքակրթութիւնը՝ ապականած եւրոպայի արդիւնք չէ. անիկա ուտիճն է քաղաքակրթութեան։ Քաղաքակրթութիւնը քրիստոնեայ եւրոպան ծնցուց։

Առողջ բարոյքը և մաքուր հոգին մշակուելու է մեր ազգին մէջ Քրիստոսով եւ Աւետարանով։ Վատհոգի և բարոյազուրկ ազգ մը ըլլալէ խորշելու ենք, վասնզի անկումէ զատ ուրիշ ճակատագիր մը չի կրնար ունենալ այնպիսին։ Հայ Եկեղեցին իր կոչումին պէտք է գիտակցի եւ անով զբաղի միմիայն։ Ազգը նորաստեղծելու միակ կերպն է այդ։ Մեր ազգը կեանք պէտք է ունենայ, և Մեր Տէրը եկաւ որ կեանք ունենանք և աւելին ունենանք։

Մէկ խօսքով մեր փրկութեան միակ ապաւէնը քրիստոնէական կեանքն է, եւ Հայ Եկեղեցին ու ժողովուրդը պէտք է գիտակցին ասոր։

ՆԵՐՍԷՍ ՍՐԿ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՄԱՆՈՒՇԸ ԵՒ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՉ Է Ս. ԳԻՐՔԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Բաց գիրք մըն է Աստուածաշունչը։ Այն կը պատկանի լեռներուն, ծովերուն և դաշտերուն։ Այն ազնիւ է և մեծ՝ դուրսի այս բաներուն պէս։ Այն կը սկսի մեծ քերթուածով մը Աստուծոյ աշխարհը բաստեղծման վրայ, եւ կը վերջանայ ուրիշ քերթուածով մը, որ կը պատկերացնէ այս հին աշխարհը վերածուած նոր երկինքի մը և նոր երկրի մը, սուրբ և փառաւոր. վասնզի Աստուած անոր լոյսն է եւ Քրիստոս՝ անոր Թագաւորը։ Աստուածաշունչը լաւ կարդացողները պէտք է ըլլան մեծ, քաջ, զօրաւոր և ազնիւ մարդիկ, որոնք կը սիրեն ազատութիւնը մաքուր և ընտիր բաները։

Թոյլ տուէք ինձի որ քիչ մը խօսիմ այդ մասին։

Մենք միշտ կը խօսինք Աստուածաշունչի վրայ իրրև մէկ գիրքի վրայ. բայց ամէն ոք գիտէ թէ այդպէս չէ։ Ամիսկա 66 գիրքերէ կազմուած մատենադարան մըն է երկու բաժիներու վրայ շարուած, զոր կը կոչենք Հին և Նոր Կտակարան։ Այլապան են ատոնք. Ծննդոց Գիրքին պէս՝ ժողովրդական պատմածներ եւ աւանդութիւններ. պատմութիւններ՝ Թագաւորաց և Մնացորդաց գիրքերուն պէս. բանաստեղծութիւն, քարոզներ, օրինագիրքեր, իմաստուն ասացուածքներու սքանչելի հաւաքածներ, Նամակներ և նոյն իսկ սիրոյ երգեր։ Ցոբի

digitised by A.R.A.R.@

գիրքին մէջ ունինք աշխարհի ամենամեծ տրամաններէն մին։ Հին Եթ և Նոր Եթ, կարճ պատմածներ են՝ այսօրուան բացատրութեամբ, գրուած մասնաւոր նպատակով մը։ Հոս աւետարանները կը պատմեն մեզի մարդկային պատմութեան Փրկագործն Կեանքը։ Առաքելք, դպրոցներու մէջ գրականութեան ոսկի դասընթացքի մէջ պիտի չկարենայինք կարդալ գիրքերու աւելի մեծ այլազանութիւն մը։

Բնական է հարցնել թէ ինչո՞ւ այս գիրքեր քով քովի բերուած են։ Կը պատասխանենք թէ ատոնք բոլորն ալ կը խօսին մեզի Աստուծոյ մասին և թէ Ան ինքզինքը ի՞նչ կերպով ճանչցուցած է մարդոց, Երբայեցի ժողովուրդին եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ։ Իւրաքանչիւր գիրք կը խօսի այդ պատմութեան մէկ մասը։ Իսկ ամէնքը միասին Քրիստոնեաներու կուտան իրենց հաւատքին գիտութիւնը եւ կեանքի քրիստոնէական ճամբան։ Աստուածաշունչը կը պարունակէ՛ն պատգամը, զոր Եկեղեցին բերելու էր աշխարհին։

Ասիկա պատգամ մըն է որ մեզի կուգայ մասամբ Երբայեցիներու պատմութեան ու աւանդութեան և մասամբ ալ մեծ մարդոց միջոցաւ։ Ասիկա կատարելագործուած է Յիսուսի կեանքով։ Երբոր Երբայեցիներու պատմութիւնը իրապէս կ'սկսէր Մովսէսի ժամանակ, Քրիստոսէ շուրջ տասներկու դարեր յառաջ, անոնք ոնապատի մէջ թափառող ցեղ մըն էին, որ փախած էին Եգիպտոսէն իրենց ազատութիւնը գտնելու համար։ Անոնք շատ բան մը չէին գիտեր Աստուծոյ մասին. Եհովա անունը կուտային անոր. կը հաւատային թէ Ան կ'ապրէր լեռներու վրայ, և թէ Սինա լեռան ամայութիւններուն մէջ Ան տուած էր իրենց օրէնքը։ Ան իրե՛նց Աստուածն էր և ամենայնայնի Աստուածը, բայց Ան չէր միա՛կ Աստուածը։ Ուրիշ ժողովուրդներ և ազգեր ալ ունէին իրենցինները։ Այս բոլորը յստակօրէն կը տեսնենք երբ կարդանք Ելից, Թուոց, Դատաւորաց գիրքերը։ Հին Կտակարանը կը պատմէ մեզի թէ ի՞նչպէս Աստուած, իրրև մեծ ուսուցիչ մը, առաւ իր ժողովուրդը, և հետզհետէ սորվեցուց անոնց թէ Ինքը Աստուած մըն է, միա՛կ Աստուածը արդար և սուրբ։

Մեզի համար աւելի գեղեցիկ պիտի ըլլար եթէ Աստուածաշունչի գիրքերը դասաւորուած ըլլային իրենց գրուած կարգով։ Քիչ մը գիտութեան պէտք կայ այդ գիրքերուն ճիշդ կարգը հասկնալու համար։ Հեղհանրապէս ինչ որ մենք կրնանք ընել սա է. նախ կարդալ պատմական գիրքերը, և յետոյ երբ կը կարդանք միւս գիրքերը, յարմարցնել գտնենք այս թուականներուն, որոնք կը գտնուին շատ մը Աստուածաշունչներու եզերը, կամ ճիշտ այդ նպատակով գրուած գիրքերու մէջ։ Այս կերպով կրնանք հետեւիլ այս ժողովուրդի պատմութեան եւ տեսնել թէ ի՞նչպէս ամբողջ այդ ժամանակի միջոցին Աստուած կը սորվեցնէր անոնց։ Մենդոց գիրքին մէջ գըտնուող հին աւանդութիւններ սատարեցին անոնց ըմբռնելու թէ Աստուա՛ծ էր մարդոց կեանքին աղբիւրը, և Ան էր որ կ'առաջնորդէր իրենց գործին։ Իրրև ժողովուրդ իրենց թշնամիներուն հետ անոնց ունեցած փորձառութիւնը գործածեց Ան իրենց ցուցնելու թէ ազգ մը արդար և հաւատարիմ պէտք է ըլլայ եթէ կ'ուզէ ապրիլ։ Ան առաջնորդեց քահանաներու ու թագաւորներու օրէնքներ դնելու համար։ Ան մարգարէներ կամ քարոզիչներ զրկեց եղիայի և եղիսէի նման, և աւելի հետը՝ անոնց հիանալի յաջորդները Ամոս, Ովսէէ, Եսայի, Եայլն, որոնց քարոզները կը կարդանք իրենց գիրքերուն մէջ։ Ան ներշնչեց բանաստեղծները՝ որոնք Սաղմոսները գրեցին, եւ իմաստուն մարդիկը՝ որոնք հաւաքեցին ժողովրդային Առակները և աւելցուցին ատոնց վրայ։

Վերջապէս եկաւ Քրիստոս և մարդիկ Անոր միջոցաւ սորվեցան թէ Աստուած՝ Արդար Աստուծմէ աւելի բան մըն է. Ան մեր երկնաւոր Հայրն է, որ հոգ կը տանի մեր իւրաքանչիւրին անհատապէս։ Ասիկա Աւետարաններն են որ կ'ըսեն մեզի։ Գործք Առաքելոցը կը պատմէ մեզի թէ ի՞նչպէս Եկեղեցին սկսաւ սորվեցնել մարդոց Քրիստոսը և բերել զայն անոնց կեանքին մէջ, փրկելու համար զանոնք մեղքէն և զօրացնելու համար զանոնք որ բարիք ընեն։ Առաքելական թուղթերը կ'ըսեն մեզի թէ ի՞նչ էր նախկին աշակերտներուն մտածմունքը Քրիստոսի և Քրիստոնէական կեանքի մասին։ Յայտնութեան գիրքը մե՛ծ

digitised by A.R.A.R.@

տեսիլք մըն է, նկարուած արևելեան չքեղութեամբ, բարիի և չարի պայքարին և Քրիստոսի իշխանութեամբ վերանորոգուած աշխարհի վրայ։

Այսչափը գաղափար մը կու տայ թէ ինչ կը բովանդակէ Ս. Գիրքը։ Ամէն մարդ կրնայ գտնել անոր մէջ իր պէտք ունեցած բաները։ Ասիկա լեցո՛ւն է հերոսներով և քաջազործութեանց պատմութիւններով։ Դարձեալ անոր մէջ պիտի գտնէք իմաստալից խօսքերու ճոխութիւն մը, որոնց մէջէն ամէն ոք կրնայ ընտրել իրեն օգտակար եզրակները։

Ասկէ զատ, Աստուածաշունչը մեզ դէմ-դէմի կը բերէ միշտ այն բանին հետ որ ա՞յնքան մեծ տեղ մը կը բռնէ երիտասարդութեան մէջ, իսկայն է ան։ Մենք երբեմն կը կարծենք որ զոհացած ենք իրողութիւններով ինչպէս որ են ատոնք. բայց իրօք չենք զոհացած։ Եթէ մենք քիչ մը աղէկ ենք, աւելի լաւ աշխարհ մը պէտք է ուզենք։ Աստուածաշունչը կ'օգնէ մեզի որ տեսնենք ասիկա։ Ամբողջ Հին Կտակարանին մէջէն մարդիկ միշտ դէպի յառաջ կը նային։ Լաւագոյն բան մը կը փնտռեն անոնք։ Անոնք կ'սպասեն Աստուծոյ Թագաւորութեան և Աստուծոյ Թագաւորին։ Նոր Կտակարանին մէջ ամբողջ լաւագոյն աշխարհը մեր աչքին առջևն է։ Առաջ մէջէն Յիսուս կը խօսի երկնից Թագաւորութեան մասին։ Բոլոր առաջին քրիստոնեաներ Արքայութիւնը կը փնտռեն։ Աստուածաշունչի վերջին գիրքը կը նկարագրէ նոր երկինքն ու նոր երկիրը։ Ոչ ոք, որ կրնայ հասկնալ Աւետարանները, չ'զգար թէ ինքը կ'ուզէ խաչակիր մ'ըլլալ, երթալ դուրս և այնպէս մը փոխակերպել աշխարհը՝ որ պատերազմ և տառապանք, աղքատութիւն և ատելութիւն, մոլութիւն և ագահութիւն իսպառ հեռացուին։

Փորձի համար միայն քանի մը բան պատմեցի ձեզի այն բաներէն, զորս Աստուածաշունչը կը սորվեցնէ մեզի։ Դեռ շատ բան կայ և մենք կրնանք ինքներս գտնել գտնենք և աւելի շատ սիրել, որովհետև մե՛նք գտած ենք։ Այն ատեն պիտի հասկնանք թէ ինչո՛ւ համար Եկեղեցին Աստուածաշունչը կը կոչէ Սուրբ գիրք և կ'ըսէ թէ ներշնչուած է այն։ Ասիկա իրօք սուրբ կը դառնայ մեզի համար, վասնզի այն կ'օգնէ մեզի գտնելու Աստուածը և Յիսուս Քրիստոսը։ Ներշնչուած է այն, վասնզի մեզի կը բերէ այժ, զօրութիւն և տեսիլք, ներշնչուած է այն որովհետև կը ներշնչէ մեզ։

Bishop Parsons Հայոցագր
(The Churchman, Jan. 29, 1927) ԵՂՈՒԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ՓԼՇՏԱՑԻՔ

(ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳՐՈՒԱԾ)

Պաղեստին...։ Տղաք, գիտէ՞ք ուրկէ կուգայ այս անունը։ — Իսրայէլի ժառանգական թշնամիներէն, այսինքն Փղշտացիներէն (Philistins) կուգայ անիկա։

Դողիաթ, եւ ո՛չ թէ Դաւիթ մկրտած է մարգարէներուն երկիրը։ Ահա՛ պատմութեան քմահաճոյքներէն մէկը։

Քանի որ Պաղեստին կուգայ Փղշտացիէն (Palestine=Philistine) քիչ մը քննենք ամէնէն նոր գիտերու լուսով՝ թէ որո՞նք են փղշտացիներ, որոնց մասին շատ կը խօսուի, առանց լաւ գիտնալու անոնց ծագումը և անոնց վիճակը։

Ռամսէս Բ. Փարաւոնը (Սեսոստրիս) իր փառաւոր պատերազմներով և Քետացիներու հետ ունեցած դաշնագրութիւնովը, 1279ին (Ն. Բ.), կը կարծէր յաւէտ հաստատած ըլլալ Եգիպտոսի, քաղաքակրթութեանց այդ Թագուհիին գերագահութիւնը։

Սակայն ահա ԺԳ. դարու մէջտեղը, սկսելով 1230էն, Արիական ասպատակութեան ահեղ ալիք մը՝ գրգռուած եւրոպական յեղափոխութենէ մը, որուն պարագաները անծանօթ են մեզի, կուգայ խանգարելու ժողովուրդներու հաւասարակշռութիւնը, աւրելու Միկենական (Mycénienne) քաղաքակրթութիւնը, ջնջելու քեռական կայսրութիւնը, և վերջնականապէս ջախջախելու եգիպտական գերագահութիւնը Ասիական Մերձաւոր Արևելքի մէջ։

digitised by A.R.A.R.@

Եգիպտական բնագիրներ կը պատմեն այս ազգերը, հիւսիսի եւ ծովու ժողովուրդներուն արշաւանքը անուանով, որոնք կուգան Միջերկրական ծովէն։

Թաթաոը Եգիպտոսի վրայ Լիբիոյ ծովեզերքէն եկաւ, որու բնակիչները բարբարահատակ, կապուտաչուկ եւ խաբեբիշահեր՝ կրնային առաջին արիական արշաւանք մը բրած ըլլալ Ափրիկէ։ Ան կոխեց Դելտան, Մենեփթայի (որդին եւ յաջորդ Ռամսէս Բ.ին) թագաւորութեան հինգերորդ տարին, որ է նոյն ինքն Ելից Դիրքին Փարաոնը (1229)։

Այն ժողովուրդներու մէջ՝ որոնք փորձեցին տիրել Եգիպտոսի բարեբեր երկիրներուն՝ մասնաւորապէս կը զանուէին Եթրուսկացիներ եւ Աքայեցիներ, ցամաքէն կամ կղզիներէն։ Այսպէս սկսաւ եւրոպական ազգերու մուտքը տիեզերական պատմութեան մէջ։ Մենեփթա դէմ դրաւ փոթորիկին եւ յաջողեցաւ Եգիպտոսէն դուրս հանել ասպատակիչները։ Բայց փարաւոններու կառավարութիւնը շատ տկարացաւ այս պատճառաւ։ Անիշխանութիւնը տարածուեցաւ ամէն կողմ, եւ այն ժողովուրդներ որոնք երկար տարիներ գերի մնացած էին Նեղոսի պետութեան մէջ, ինչպէս Բարբեցիներ, Տրովադացիներ, եւայլն, օգտուեցան ասիթէն անկախ ըլլալու Դելտայի արեւելքը կամ իրենց ուզած տեղը հաստատուելու։ Այս ասիթով էր որ Գեսեմի երկրին խարայէլացիները չուեցին դէպի Աւետեաց երկիրը։

1190ին Լիբեացիներ նոր յարձակում մը ըրին եւրոպական ասպատակիչներու հետ խառն։ Առանց ի հարկէ զազթողներ էին աւելի՝ քան թէ աշխարհակալներ։ Անոնց մէջ կային Կիպրացիներ, Եգէական Փոքր Ասիոյ եղերքներէն, և Կրետէէն եկող զանգուածներ, իրենց հետ ունենալով ծներ տայլեր, որոնց վրայ կը դիզուէին իրենց կիները, մանուկներն ու գազթողներու ամէն տեսակ նկարագրեր կահկարասիները։ Անոնք քաջ պատերազմիկներ էին, գրահապատ և իրենց գլխուն վրայ փետրազարդ փաթթոց։ Այսպէս ահարկու կ'երեւէին անոնք։ Եգիպտական արձանագրութիւնը Պուլեստիու (Poulestiou) կ'անուանէ զանոնք, իսկ ուրիշ տեղ կը կոչուին Պելեսատի (Pélesati) կամ Պելիշտի (Pelichti), այսինքն Փղշտացիներ (*)

Ռամսէս Գ., մեծ փարաւոններուն վերջինը, այն ալ իր կարգին յաջողեցաւ ետ մղել ասպատակիչները։ Սակայն 1192ին անոնք նորէն գրոհ տուին և տարածուեցան ոչ թէ Դէլտայի վրայ, այլ Սիւրիոյ եգիպտական նահանգին վրայ։ Հարթաքանդակի մը վրայ կը տեսնենք փղշտացիներու կարաւաններ, որ ծովեզերք ոտք կը դնեն և հոն կը հանդերձեն իրենց չորս եզներով լծուած կառաչարքերը (convoi)։

Ռամսէս Գ. երկու արշաւանքներով փորձեց հանել զանոնք այդ տեղէն, բայց հարկադրուեցաւ անոնց թողուլ Քանանի հարաւային մասը և զոհացաւ զանոնք հարկատու ընելով։ Փղշտացիք փութով հաստատուեցան Սեփելայի, Գազայի, Ասկաղոնի նաւահանգիստներուն մէջ և ներքին քաղաքներէն Դէթի, Ակկարոնի եւ Ազոտի մէջ։ Այսպէս կազմուեցաւ փղշտական հինգ ատրապութիւններ և երկիրը շուտով կոչուեցաւ Փիլիստիա (Philistie), որմէ Պաղեստին (Palestine)։ Յովսեպոս պատմիչը Յիսուս Քրիստոսի ատեն, փղշտացիները կը կոչէ Պաղեստինացի (Palestinoï) խօսքով, Պաղեստինացիք (Palestiniens)։ Փղշտացիք իրենց դրացի Փիւնիկեցիներուն պէս, որոնք հիւսիսային ծովեզերքը՝ կը կազմակերպէին Տիւրոս, Սիդոն և Բիբլոս և այլն նաւահանգիստները, կ'զբաղէին մանաւանդ վաճառականութեամբ, թողլով որ բնիկներ ստրուկ մնան և հողերը մշակեն ի նպաստ իրենց։ Եւ այս ամէնը եղաւ եգիպտական քաղաքակրթութեան աւերակներուն վրայ։

(*) Երկրորդ Օրէնքը (Բ. 23) կը յիշատակէ Կափթորէն (Kaphtor. հայ թրգմ. ունի Դամիրը) այսինքն Կրետէէն եկած ժողովուրդ մը որ կ'ոչնչացնէ Աւացիները (Avvéens. հայ թրգմ. ունի Խեւացիք), կը տիրէ Գազայի երկրին, եւ հոն կը հաստատուին (Համմ. Յես. ԺԳ. 3)։ Այս աշխարհագրական դիտողութիւնը կը հաստատէ այն իրողութիւնը թէ Փղշտացիներ եւ Կափթորացիներ (= Կրետացիք) միեւնոյն են։ Ակէ զատ Հին Կտակարանի Յոյն թարգմանութիւնը (Եւ. Թ. 11) Փղշտացիները կը կոչէ Յոյներ (Hellènes)։ Այս ամէնը կը նպաստեն ապացուցելու թէ Փղշտացիներ նախապէս բնիկներն էին Կարիայի՝ Փոքր Ասիոյ հարաւ արեւմտեան ծայրը եւ եգէական բարբարակրթութիւնը փոխադրած են Քանանի երկրին հարաւը եւ թէ ատոնք խնամիացած էին Յոյներու հետ։

digitised by A.R.A.R.@

Այս ժամանակն էր որ Եբրայեցիք, որ դեռ նոր հաստատուած էին Քանանի մէջ, սկսան կռիւներ ունենալ փղշտացիներուն հետ, որոնք իրենցմէ աւելի բարձր քաղաքակրթութիւն ունէին, որոնց ձեռքին մէջ էր երկաթի մենաշնորհը, և որոնց Աստուածը, Դագոն միայն մեհեաններ ունէր. մինչդեռ Եհովա կը պաշտուէր վրանի մը տակ, և Քանանեան աստուածութիւններուն պաշտամունքը կը կատարուէր բացօդեայ, բարձրը տեղերու վրայ։

Եբրայեցիներ Գիլգալի կ'ըսէին փղշտացիներուն և անոնց վրայ կը տեսնէին կռռնտէէն եկած յափշտակիչներ (Ամօս Թ. Երեմ. ԽԷ.)։ Իսրայէլ ևս մարդոց աչքին աշխարհակալ մըն էր, բայց զոնէ իրեն ցեղակից երկրի մը մէջ էր, և իրրև Աբրահամի սերունդը՝ ան ինքզինք երջանիկ կը համարէր Աւետեաց երկրին մէջ։

Փղշտացիներ, որ ուրոպական ասպատակութեանց երեսէն կրնտէէն եկած էին, ամենուին չէին ուզեր թողուլ իրենց այս նոր գրաւած երկիրը, և հետևաբար առաջին անգամ յաղթեցին Իսրայէլացիներուն, որոնց հետ սաստիկ կռիւի բռնուած էին այդ երկրին համար։

Իրրև ռազմիկ ցեղ լաւ զինուած էին և յաջողեցան ծովեզերքէն հանել Դանի ցեղը և քշել երկրին խորերը (Դատ. ԺԳ. 2, և ԺԸ. 2-14)։ «Ամենզարի (Փղշտացի իշխան) ժամանակ, ճամբաները լքուած էին, և ճամբորդները զարտուղի ճամբաներէ կ'երթային» (Դատ. Ե. 6), այսինքն՝ Իսրայէլ, ահաբեկած Փղշտացիներէն, չէր համարձակիր այլևս կարաւան կազմել։ Հեբոս Սամսոն, ծնած ըլլալով Փղշտացիներուն ճիշդ սահմանագլուխը, խորունկ քաղաքագիտութեամբ հասկցած էր թէ Իսրայէլ չէր կրնար բարգաւաճիլ մինչև որ Փղշտացիներուն սպառնալիքը չխորտակուէր, և ան զուռզ դրցին դէմ, որ Իսրայէլը անշարժութեան դատապարտած էր, արտասանեց՝ «Գեսֆ է կործանել Կարկեղոնը»։ Սամսոն թերևս յաջողէր իր ձեռնարկին մէջ, եթէ իր բարոյական տկարութիւնները անատակ չընէին զինքը։ Ան զոնէ կրնցաւ մեռնիլ իրրև հայրենասէր, յաղթուած, բայց ոչ զինաթափ (Դատ. ԺԶ.)։

Փղշտացիներ Սամսոնէն յետոյ, յաջողեցան տեղաւորուիլ երկրին սրտին վրայ։ 1100ին, անոնք ընդառնեցին Եբրայեցիները եւ քշեցին մինչև Յորդանան, գրաւեցին Տապանակ Ուխտին, և դժնդակ ճարտութեան մը վերածեցին Իսրայէլի վիճակը։ Ընտրեալ ժողովուրդին զորքը լքնցած պիտի ըլլար առանց քաջալերանքին, առանց խելքին ու հաւատքին Սամուէլ մարգարէին որ. Եհովայի օգնութեամբ, ա՛յնպիսի փայլուն յաղթանակ մը տարաւ Փղշտացիներուն վրայ Մասեփի մէջ, որուն յիշատակարան եղաւ Աբենեզերի քարը (Ա. Թագ. Է.)։

Անհաւատարիմ Իսրայէլ 1030ին մերժեց Սամուէլը և թագաւոր մը ուզեց ամբոխ ազգերուն պէս. ամէն փորձանք նկաւ գլուխը, Սաուղի թագաւորութիւնը ողբերգական վախճան մը ունեցաւ, փղշտական յաղթութեան մը մէջ ի Գեղբուա (Ա. Թագ. ԼԱ.)։

Բայց Աստուած կը հակէր իր ժողովուրդին ճակատագրին վրայ, և արդէն անիկա ծերունին Սամուէլը դրկած էր թագաւոր օծելու երիտասարդ հովիւ մը, Յեսսէի որդին Դաւիթը, որ հաւատացեալ հոգի մըն էր և լաւ կը ճանչնար Փղշտացիները՝ անոնց քով ապրած ըլլալով։

Երբ Փղշտացիներ իմացան որ Դաւիթ թագաւոր եղած է Գեբրոնի մէջ (Բ. Թագ. Ե.), անմիջապէս պատերազմի պատրաստուեցան։ Վախնալով այս երիտասարդ պետին հանճարէն, ուզեցին անոր ուժը ջախջախել Երուսաղէմը գրաւելով Իսրայէլի բանակները երկուքի ճեղքելու համար։ Սակայն Դաւիթ կանխեց զանոնք, Բահաղ-Գերատսիմի (Baal-Peratsim) մէջ կեցուց զանոնք և քիչ ետքը Ռափայիմի հովիտին մէջ այնպիսի պարտութեան մը մատնեց Փղշտական իշխանութիւնը որ այնուհետև կորսնցուց իր կարևորութիւնը։

Հասկնալու համար Փղշտացիներուն ազէտքին չափը, որուն ենթարկուեցան իրենց յամառ ընդդիմութեամբը նախախնամական ժողովուրդին, բաւական է հաւատալ թէ Դաւիթի իշխանութեան վերջը, միապետին թիկնապահներուն մէջ կը գտնենք Փելեթիներ (*) եւ Գեթացիներ (**) (Բ. Թագ. Ժե. և Ի.)։

(*) Péléthiens, ազաւաղումն է Philistins բառին։

(**) Gathiens, Փղշտացի, Գէթ քաղաքին բնիկ զօրագունդերն են։

digitised by A.R.A.R.@

Աւա՜ղ փառաց անցաւորի . . . . . .

Փղշտացի սատրապներուն այս քաջարի հերոսները, այսպէս յաւէտ ինկած, շատ երջանիկ էին Երբայեցւոց Շարլըմանէին հետեւորդներուն մէջ ծառայութիւն բներնուն համար։

Թրգմ. Ֆրանսերէնէ
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ALEX. WESTPHAL

Ս. ՊԵՏՐՈՍԻ ԹԷՍԸ

"The See of Peter„ by James T. Shotwell and Louise Ropes Loomis (Columbia University Press, 10 dollars)

Թերևս բնական էր որ նոր Աշխարհէն լոյս գար Ս. Պետրոսի և Հռոմի Եկեղեցիին քրիստոնէութեան միակ և գերիշխան գիտ լինելուն կնճռոտ հարցին վրայ՝ կողմնակալութեան հուրքէ զերծ և արդարադիր, գիտնական ուսումնասիրութիւն մը, քան թէ ելեւոյթն, ուր ծնունդ առաւ բազմաբանութիւնը և անոր հետ՝ եկեղեցականքաղաքական երկարատև և սուր հակառակութիւններ Հռոմի հետ։

Վերոգրեալ հրատարակութիւնը կը ձեւնարկէ պատմական իրողութիւններ ընթերցողին առաջ դնել քան տեսութիւն մը պաշտպանել, որպէսզի կարող լինի ան փոքր ի շատէ ուղիղ դատում մը ընել Պետրոսի Վէմին վրայ։

Հեղինակները յստակօրէն կ'առաջադրեն իրենց նպատակը, որ է «Հռոմի աթոռին վրայ գիտել գլխաւորապէս, ո՛չ այն հանգամանքները որոնք հասարակաց էին կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող միւս թեմերուն հետ, այլ իրեն առանձնայատուկ երեւոյթները, ինչ որ ունէր ան ինքնուրոյն և բացառիկ իր առանձին և արտաքին գործերուն մէջ. իր թեմական իրաւասութենէն զուրս գտնուող ուրիշ եպիսկոպոսութեանց և եկեղեցիին ուրիշ ճիւղերուն հետ յարաբերութիւնները, եւ հուսկ յետոյ, թէ՛ յԱրևելս և թէ՛ յԱրեւմուտս գտնուող միւս բոլոր եկեղեցիներուն վրայ իր գերակայութեան իրաւունքը քննութեան առնել։

Այս նպատակով կը հրատարակեն ամբողջապէս կամ համառօտած ձեւով վաւերաթուղթերու և հատուածներու մեծ մասը որոնք լոյս կ'արձակեն քրիստոնէութեան առաջին 380 տարիներու Ս. Պապերուն վրայ։

Մինչև Կոստանդիանոսի գահ ելլելը, վաւերաթուղթերուն շարքը ողջ բովանդակ կը տրուի, բայց այնուհետև կարևորները միայն կը յիշուին, շատ մեծ ըլլալով անոնց թիւը։ Հեղինակները կը խոստովանին թէ ապառած չեն ամէն բան, բայց դարձեալ նախաշաւիղ, մեծարգի և պատուական ձեռնարկներ և ծանօթութիւններ կը հայթայթեն ընթերցողին։

Գրքին սիլիրը քննութեան կ'առնեն նոր Կտակարանի մէջ պապական իրաւասութեան հիմը կազմող հատուածները։ Ընդունելով հանդերձ այս հիման վրայ Ս. Պետրոսի եղած յանձնարարութեան նկատմամբ տանց վաւերականութիւնը, առանց պապականութեան համար կրնան զօրութիւն ունենալ՝ միայն եթէ Ս. Պետրոս Հռոմի եպիսկոպոս եղած լինի և իր բացառիկ իշխանութիւնը իր յաջորդներուն փոխանցած լինի։ Ա՛ս այս շատ հատուկտոր է վիճաբանութիւնը, և միայն 354ին է որ կը տեսնենք բացորոշակի և հեղինակօրէն Հռոմի եպիսկոպոս յորջորջուիլը Ս. Պետրոսի։

Ինդիրը ուրեմն հոս է. 392ին Ս. Հերոնիմոսի գրով նշանակած աւանդութիւնը մինչև ո՞ր աստիճան կը համապատասխանէ իրողութեանց որ այնքան յայտնի և ծանօթ եղած լինին առաջին դարերու եկեղեցիին որ չյիշուէին գրով։ Դարձեալ, եթէ արդարև Ս. Պետրոս եղած է Հռոմի եպիսկոպոս, «այս Վէմը» Ս. Պետրոս ինքն էր թէ հաւատը զոր խոստովանեցաւ։ Ընկերները այս վերջին հայեցքն էր որ գերազոյն էր։ Ցաչս Տերտուղիանոսի «ամէն ոք որ զԲիբլիատոս կը խոստովանի, երկնքի բանալիները կը կրէ ինչպէս նա՛»։ Ս. Հիպպոլիտոս կ'այպանէ Կալլիստոս պապը՝ իբր Ս. Պետրոսի յաջորդը Եկեղեցիին մէջ նոր բաձեւութիւններ մուծանելու իրաւունքը իր անձին սեպհականելուն համար, և երբ Ստեփաննոս պապը համարձակեցաւ եկեղեցիին հրամանները պարտադրելու, Կար-

digitised by A.R.A.R.@

Թագինէի եպիսկոպոսը Ս. Կիպրիանոս ամբաստանեց անոր «ժպրհութիւնը և անպատկառութիւնը», և օրինակ բերաւ Ս. Գողոսի վէճը Ս. Պետրոսի հետ՝ հետեցնելով թէ Ս. Պետրոս ինքը այդպիսի իշխանութիւն չունէր թեկնածութեան։

Բայց թէպէտ այս վկայութիւնները և դեռ ուրիշ շատեր կ՚ապացուցանեն թէ իրը 300 տարի միւս եկեղեցիները Հռոմի եկեղեցիին որևէ գերիշխանութիւն ունենալը կը մերժէին, չի պակսիր վկայութիւն թէ Հռոմի եկեղեցին առանձնայատուկ պատիւ—, նախակարգ (prestige) գիրք կը վայելէր, գլխաւորապէս կայսրութեան Մայր Քաղաքին եկեղեցին լինելով, և նահատակուած երկու Առաքեալներուն Ս. Պետրոսի և Ս. Գողոսի աւանդութեամբ նուիրագործուած լինելով։ Յարևմուտս, Հռոմ միակ «առաքելական» թեմն էր, և հետևաբար սկիզբէն ինքնուրոյն իշխանութիւն կը վարէր, ինչպէս Իրէնիոսէն յառաջբերումը կը ցուցնէ։

Թէ ինչպէս ասի տակաւ աճեցաւ և բարգաւաճեցաւ թէ յԱրևելս և թէ յԱրևմուտս գերագոյն իշխանութեան իրաւունքին, շատ շահեկան հարց մըն է։ Վաւերաթուղթերէն յայտնի կ՚երևի թէ ո՞րքան մօտ եկան Հռոմի եպիսկոպոսները իրենց այս գերիշխանութեան պահանջումը հաստատելու այնպիսի ատեն երբ Զորրորդ դարու մէջ Արիոսական հակաճառութիւնը Արևելքը աղմկեց խռովեց ու ծայրագոյն չփոթութեան մատնեց, դի հակառակ Էլիբերիոս պապի առժամանակեայ սխալանքին, Արևելքի եպիսկոպոսները ճարահատ կը դիմէին Հռոմի եկեղեցիին, որ սնոտի վարդապետութեան այս ու այն հողմէն տարուբերիլ չէր թոյլատրած իրեն։

Դրատիանոս, Վալենտիանոս և Թէոդոս կայսրերը նոյնպէս Հռոմի Եկեղեցիին դիմեցին և 380ին հրամանագիր հանեցին, որով Դամասոս պապին պարգևեցին պաշտօնը գերակայ բացայայտիչի «Սրբոյն Պետրոսի հռոմայեցւոց վարդապետած կրօնին», որուն հետևիլ կը հրամայուէր կայսրութեան ամէն հպատակներուն։ Այսպէս, Կոստանդիանոսի "Summus episcopus„ի պաշտօնէն հրաժարեցան իր յաջորդները՝ տալով զայն Հռոմի եպիսկոպոսին։ Բայց Դամասոս պապը, ինչպէս վաւերաթուղթերէն յայտնի կ՚ապացուցուի, այդպիսի մեծ պատեհութեան մը չափին բարձրանալու առակ մարդ չէր, և «իր խրոխտութեան և բռնութեան» պատճառով, այդ պատեհութիւնը կորսուեցաւ։

Այս էջերուն մէջ իրաւ է թէ շատ փոքր նշան մը տեսնուի այդ առաջին դարերու մէջ ճշմարիտ «Քրիստոնէական ոգի»ին գոյութեան։

Մանչեսթր Քաղուածորեն
Գ. Ֆ.

ՆԵՌՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

ՅԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ

Յովհաննէս Առաքեալ յառաջնում Կաթող. թղթին, գլ. 2, 18 կը գրէ՝ «Որդեակք, յետին ժամանակ է, եւ որպէս լուարուք՝ եթէ նեռն գալոց է, եւ արդէն իսկ նեռին բազումք եկեալ են, որով մարթիմք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է»։ Եւ յետ սակաւու մերոյ կը յարէ՝ «նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր եւ զՄորդի» (ա. 22)։ Եւ գրածեալ ի գլ. 4, 3 ասէ՝ «եւ ամենայն հոգի՝ որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ՝ չէ՝ նա յԱստուծոյ, եւ այս նեռինն է, զորմէ լուարուք եթէ գալոց է, եւ արդէն իսկ յաշխարհի է»։ Միւսանգամ եւս յԵրկրորդ թղթին Կաթող. 7 կը գրէ այսպէս՝ «զի բազում մոլորեցուցիչք ելին յաշխարհս. որ ոչ՝ խոստովանի զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է և նեռն»։

Ըստ այսմ վարդապետութեան Յովհաննու Առաքելոյ ի յետին ժամանակի, յառաջ քան զգալուստն Յիսուսի Քրիստոսի, մոլորեցուցիչ նեռն պիտի երևի։

Արդ, գիտելի է՝ թէ ի չորեսին վերոյն նշանակեալ տեղիս Յուսնարէն բնագիրն ունի՝ անտիքրիստոս փոխանակ նեռն անուան։— Ուստի խնդիր այն է՝ թէ ընդէ՞ր Հայ թարգմանիչն զանտիքրիստոսն Յուսնարէն նախադասադրարին փոխանակէ ընդ անուանդ նեռին. ո՞չ ապաքէն դիպուածոյն էր անփոփոխ թողուլ զյուսնարէն անտիքրիս-

տան, կամ զէթ բառիս հակաքրիստոս կամ հակառակորդն Քրիստոսի ճշգրիտ յեղուլ զայն ի Հայ բան։ Անշուշտ Հայ թարգմանիչն զիտամբ եւ խորհրդաբար ընտրած է զայդ փոփոխումն։ Արդ, ուստի՞ առած է նա զանուանդ նեռն, զի՞նչ է ծագումն զորին, եւ զո՞վ կամ զի՞նչ նշանակէ։

Յառաջել բացայայտութիւն խնդրոյս հարկ է ասէն ի համեմատութիւն առնուլ զկարծիս կամ զվարդապետութիւն Պաւղոսի Առաքելոյ յաղագս յետին ժամանակի եւ գալստեանն Յիսուսի Քրիստոսի։ Յերկրորդ թղթին առ Թեսաղոնիկեցիս, ի գլ. 2 կը գրէ՝ «Ապաշեմ զձեզ, եղբարք, վասն գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. . . մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ի մտաց եւ մի՛ զարհուրիլ, մի՛ հոգւով եւ մի՛ բանիւ եւ թղթովք՝ իբրեւ թէ ի մէնջ, որպէս թէ եկեալ հասեալ իցէ օրն տեառն» (այսու կ'ակնարկէ յայտնապէս առ որ ինչ գրեալ է 1 Թես. 4, 12—5, 11)։ Ի սոյն յարեալ ասէ՝ «Մի՛ ոք զձեզ խաբեսցէ եւ մի՛ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան, որդին կորստեան, հակառակորդն» եւ որ ի կարգին։ Եւ սակաւ մի յետոյ կը շարունակէ այսպէս ապի խորհուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ [այս բառ ջնջելի է] մինչ ի միջոյ բարձցի՝ որ այժմդ ունի [այսինքն՝ մինչեւ ի միջոյ բարձցի այն որ դնա այժմդ դեռ արգելու], եւ ապա յայտնեսցի անօրէնն, զորս։ եւն։

Ապաքէն ի վերոգրելոցս յայտ է՝ թէ Յովհաննու թղթոց անտիքրիստոս (նեռն). մոլորեցուցիչն, եւ Թեսաղոնիկեցւոց թղթոյն մարդն անօրէնութեան, որդին կորստեան, հակառակորդն, անօրէնն, բոլորիքեան զուգահաւասար են միմիանց եւ զմիեւնոյն անձն կը նշանակեն։

Դարձեալ՝ 2 Թես. 2, 1—11 հատուածն, որ բովանդակէ զհամառօտ ինչ նկարագրութիւն զիպաց եւ պատահարաց յետին ժամանակի, բազում իւիք զուգական է ընդարձակագոյն տեսութեան զորս կ'ընծայէ մեզ Յայտնութիւնն Յովհաննու ի գլ. 13 եւ 17 եւ 19, ուր անտիքրիստոսն յերեւան գայ կերպարանօք գազանին։— Երկոցուն զրոց հատարակաց են զ. օր. հայհոյութիւն «որդւոյն կորստեան» (2 Թես. 2, 3, հմմտ. Յայտ. 17, 8. 11) ընդդէմ Աստուծոյ (Թ. 2, 4. հմմտ. 3. 13, 5—6 «եւ տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս եւ զհայհոյութիւն. . ։ եւ երաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած»), նորին «ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ» (Թ. 2, 4. հմմտ. 3. 13, 4. 8. 12), նորին նախազգոյութիւնն եւ յետոյ վերատին գալուստն (Թ. 2, 9 հմմտ. 3. 17, 8 «զազանդ զոր տեսեր, որ էր եւ չէ, եւ հանդերձեալ է ելանել ի դժոխոց եւ ի կորուստ երթալ»), ապա «գալուստն նորին ըստ ազդեցութեան սատանայի. . . նշանօք եւ արուեստիւք ստոփք» (Թ. 2, հմմտ. 3. 17, 8 եւ 13, 2. 4. 13), եւ մոլորեցուցանել զմարդիկ (Թ. 2, 10. հմմտ. 3. 13, 14), վասն որոյ եւ անկումն այնոցիկ՝ որք ստութեանն հաւատան (Թ. 2, 3. 11. հմմտ. 3. 13, 4. 8. 12. 14), եւ որպէս ըստ Թ. 2, 8 զանօրէնն «Տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ», այնպէս եւ ըստ 3. 19, 15. 19—21 ամենայն ազգք եւ թագաւորք երկրի եւ զօրք նոցա, որք միաբանեալ ընդ գազանին ժողովեալ էին «առնել պատերազմ ընդ այնմ որ հեծեալն էր ի ձին սպիտակ», այսինքն ընդ Քրիստոսի, սատակելոց են «ի սրոյ հեծելոյն ի վերայ ձիոյն՝ յորոյ բերանոյ ելանէր սուրն»։

Դիտելի է ասէն՝ թէ հանդուգնակցութիւն վերոյիշեալ զրոց չէ արդիւնք ի միմեանց փոխառութեան եւ կամ որ եւ իցէ յարակցութեան, զի, ըստ ամենայն հաւանականութեան, երկոքին զրութիւնք զատ եւ յատուկ են յիրերաց, այլ մանաւանդ իւրաքանչիւր առանձինն յանգիման կը կացուցանեն զժամանակակից տիրող զաղափարս եւ զհայեցողութիւնս հասարակաց։

Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ թուղթ կարդի զրեալ յամի իբր 68—70, իսկ Յայտնութիւնն Յովհաննու ի վերջ կոյս առաջին դարու. անագանագոյն համարին ժամանակաւ թուղթք կաթող. Յովհաննու։

Յայտնի ի բանիցն ասացելոց եղեւ՝ թէ Յայտ. զրոց գազանն նոյն ինքն անտիքրիստոսն (1 Յովհ. 2, 18. 22 եւ 4, 3, եւ 2 Յովհ. 7), անօրէնն (2 Թես. 2, 3—8) է։

Իսկ արդ, ո՞վ է այդ գազան. եւ զո՞ խմանայ Յայտ. գոլին անուամբ։— Առեղծուածոյս լուծումն կ'ընծայէ Յայտ. ինքնին

իսկ, ուր հեղինակն ի գլ. 13, 18 խորհրդաւոր օրինակաւ կը նշանակէ զինքզբաքան անուն գազանին ասելով՝ թէ «Քիւ անուան նորա է այս՝ վեց հարիւր վաթսուն եւ վեց»։ Յետ ազգի ազգի (առաւել քան զհարիւր) անդէպ, ըստ մասին օտարոտի եւ ցնորական մեկնութեանց, հուսկ ուրեմն յանցեալ դարուն եւ եթ յաջողեցաւ գիտնոց առեղծանել զգազանիս թուոյդ 666 եւ գտանել զճշգրիտ մեկնութիւն գորին, այն է՝ համարագիրն անուան Ներոնի Կայսեր (հմմտ. առ այս զիմ ծանօթութիւն ի գլ. 13, 18 Յայտ. ի գիրս «Յայտնութեանն Յովհաննու հին հայ թարգմ.» եւն)։

Ապա ուրեմն Յովհ. Կաթող. թղթոց հայերէի թարգմանութեան նեռն ո՛չ այլ ինչ է, բայց եթէ Ներոն Կայսր. ընդ այս չի՛ք ինչ տարակոյս։ Ներոն, իւր՝ յամարան 64 տարւոյ՝ ընդդէմ քրիստոնէից յարուցած սոսկալի՝ անագորոյն հալածանաց պատճառաւ յաչս քրիստոնէից երեւցաւ իբրեւ գործի սատանայի, լրումն չարին եւ ամենայն անաստուածութեան եւ անօրէնութեան, իբրեւ բուն իսկ անիծիրիստոսն։ Այսպէս կը հաւատայր եւ հեղինակն գրոց Յայտնութեան, եւ զայս ձեւ օրինակի նըկարագրեց զայն ի տեսլեան իւրում։

Ներոն կայսր եղեռնական մահուամբ մեռաւ յամի 68 (Յունիս), սակայն Հռովմայեցի հաստատակ ժողովուրդն չէր հաւատայր նորա մահուան, այլ կը կարծէին թէ նա դեռ կենդանի է եւ ի Թաքուստ մտեալ կը գտնուի յԱրեւելս, եւ թէ հուսկ յետոյ մեծաւ զօրութեամբ յաղթական վերստին գառնալոց է ի Հռովմ։ Այս առասպելայօդ կարծիք կամ հաւատք ընդհանուր տարածուած էր յԱրեւմուտս եւ մանաւանդ յԱրեւելս։ Ըստ այսմ եւ հեղինակն Յայտ. նոյնացուցանելով զՆերոն և զանիծիրիստոսն, — թէպէտեւ գիտակ էր անշուշտ մահուան Ներոնի—, կը հաւատայր՝ թէ ի յետին ժամանակի, յառաջ քան զմիւսանգամ գալուստն Քրիստոսի, ելանելոց է ի դժոխոց, ամին իրի գրէ ի գլ. 17,8. «Եւ զգազանդ զոր տեսեր՝ որ էր և չէ և հանդերձեալ է ելանել ի դժոխոց եւ ի կորուստ երթալ»։

Եւ արդ, յետ այսր ամենայնի մեայ պատասխանել հարցման՝ թէ զիա՞րդ եւ որո՞վ իւիք իցէ մեկնել զհայերէն թարգմանութիւն անիծիրիստոսի անուամբ նեռին։

Զի՛ք ինչ տարակոյս թէ հայ թարգմանչին կաթ. թղթոցն Յովհաննու՝ ծանօթ էր Ներոնեան գրոյցն, եւ այն՝ քրիստոնէական խմացութեամբ եւ մեկնութեամբ։ Եւ որովհետեւ նա գիտզգաղոյն համարեցաւ փոխել զանիծիրիստոսն յունարէն բնագրին ի հայ. թարգմ. անուամբ նեռին, այնուիսկ յայտ յանդիման ցուցանի՝ թէ նա ինքն քաջ գիտէր՝ թէ յիշեալ գրոյցն քաջածանօթ եւ ընդելական էր ժողովրդեան, յոյր սակս ի կիր արկուցն անուան նեռին առաւել դիւրահաս թուեցաւ նմա, ապա թէ՝ ա՛չ իւր օտարոտի նորածայն թարգմանութեամբ ամենեւին անիմաց պիտի լինէր ընթերցողաց։ Սմին իրի իսկ լաւ վարկաւ ճշգիւ գտակաւ պատշաճեցուցանել զիւր թարգմանութիւն տիրող ժողովրդական ըմբռնման կամ աւանդութեան։

Արդարեւ Ներոնեան գրոյցն ի վաղնջուց հետէ, եւ որպէս մեծի հաւանութեան է, թերեւս անդէն իսկ ի սկզբանէ Բ. դարուն, նաեւ ի Հայաստան աշխարհ մուտ գտած էր. եւ այս աւանդութեամբ հասած էր մինչեւ ցժամանակ Առաջին Թարգմանչաց մերոց։ Ապաքէն սոյնպիսի ինչ աւանդութիւն ընդերկար ժամանակի կարօտ է, որպէսզի հաստատի եւ ընդելական լինի ժողովրդեան. մանաւանդ զի Ներոնեան գրոյցն ի Դ. եւ նոյն իսկ յԴ. դարուն արդէն իսկ կորուսած էր զիւր կարեւորութիւն եւ տարածական ոյժն։ Վասն որոյ պարտ է հաստատապէս ընդունել՝ թէ Քրիստոնիութիւնն ի վաղուց հետ, որպես ինն հաւատի բուն յԻ. դարուն, արդեամբ մտած է ի Հայաստան աշխարհ։ Յայնմհետէ հաստատեցան անդ փոքրիկ քրիստոնեայ ժողովք հաւատացելոց եւ առանին եկեղեցիք, որք ի ծածուկ իւրեանց քրիստոնէական կենաց կը վարէին ի մէջ հեթանոս ազգակցաց, անշուշտ մերթ ընդ մերթ առաւել կամ նուազ հալածեալ։ Ապա յընթացս ժամանակի քրիստոնէական հաւատքն ի Հայոց աշխարհին գամ քան զգամ աճելով եւ տարածուելով հասած է մինչեւ ցսկիզբն Դ. դարուն, երբ յանկարծակի, գոգես թէ յական թօթափել, քարոզութեամբ Ս. Գրիգորի Լուսաւորչին բովանդակ Հայ Ազգն ընկալաւ զՔրիստոնէութիւնն։ Արդարեւ այսո՛ւ տեսութեամբ զիւրին է իմանալ զայնչա՞փ հրաշալի արագ յանկարծա-

digitised by A.R.A.R.@

հաս դարձն Հայոց աշխարհին ի քրիստոնէական հաւատս ի սկիզբն Դ. դարուն։

Այլապէ իմն, եւ այն՝ հաւանելի եւ ընդունելութեան արժանի օրինակաւ, մեկնել զվերատեսայ հանգամանս իրաց արդարեւ անհնարին թուի ինձ։

Ապա ուրեմն, ի կատակարանի բանից, մարթ է յիրաւի՝ եւ առանց ամենայն հակառակութեան ասել՝ թէ անուանն Նոյեմ ի Հայերէն թարգմանութեան կաթ. թղթոց Յովհաննու Առաքելոյ եւ վերատացեալ յարակից պարագայք նորին քաջ իմն կը նշանեն զԱզգային ասմնդութիւն յաղագս կանխամուռ Քրիստոնէութեան ի Հայոց աշխարհին։

Դուցէ օտարոտի իմն եւ նորաձայն թուի ոմանց եզրակացութիւնս այս.— այլ սակայն կարծիքս չէ՝ ինչ մատացածին, այլ մանաւանդ հիմնեալ է ի վերայ վերագոյն ճառեալ հաւատոյ վկայութեանց եւ ստոյգ պատմական իրողութեանց։

30 Մարտ 1928 Ֆ. Ճ. Մ.
Երեւան

ԲՈՑՆԸ

Նեղէ նայուածքդ բարձրէն սա սարին,
Անցուցեալ մը կախ կը տեսնի՞ս բոյնն ուր
Ճրխաճի ու նիչեր կը տաղտարին.
Իսկ հովն երբ գոռայ, ռանթն ոռռայ հուր
Կը բեռի այդ բոյնն, ու մէջիններն ալ
Փոխուն վիճին վրայ կ'քակրսին դողդոջ։

Ա՛յպէս մարդ հոս՝ խորհուրդի մը տակ՝
«Աշխարհ» յուզարգուղ բոյնին մէջ անուն
Զեռեղած իր սիրտն ու աչերն համակ՝
Հրգոր բազուկո՞վ մ'օդին մէջ կանգուն՝
Կը ծրփի սոսկմամբ, երբ հովը սուրայ,
Ցաւիսենութեան եզերուն վրայ։

LOUIS BOUILHET

ԿՏԱԿԱՐԱՆԻ ՁՈՐՍ ԳԵՏԵՐՆ
ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆ

Երբ հայ ուսումնասէր մի մտածում է Հայաստան բուն հնութեան՝ և վաղագոյն ժամանակներում նորա տարբերական անուանակոչութեանց վերայ (թէ՝ նոցա համար որք արդիւնք են արամարանական եզրակացութեանց և թէ՝ նոցա համար որք յականէ անուանէ արձանագրուած են պատմագրութեանց մէջ), նորա միտքն, բնականաբար, նախ և յառաջ շրջում է առ որ ամենէն հնագոյնն է, այսինքն է՝ տեղին ուր պարունակում էր Սուրբ Կտակարանին մէջ նկարագրուած Եդեմական Այգին։ Մեր երիտասարդն աշխարհաբանական կոչմակերպութիւնն, նախապատմական ժամանակներում, ա՛յնչափ թերակատար ասոնճանաւ ծանօթ է մեզ, մինչ նոքա որք յաւակնութիւնն ունին խուզարկու լինելոյ առ ի ապացուցանել տեղին որ կարելի է համապատասխանել Կտակարանին մէջ յիշուած Այգւոյն հետ, պէտք ունին մատչիլ խնդրոյն ամենամեծ շրջահայեցողութեամբ—խնդիր մի որ դարէ ի դար առարկայ եղած է ուսանողաց և կարող հնագիտաց կոչմանէ, յաջողակ և հակառակ թեւադրութիւններով, Հայաստանի առնչութեամբ։ Մէկ կէտ որ, ըստ իմ խոնարհ խոկմանց, ամենակարեւորն է աչաց յանդիման ունենալ, այն է՝ թէ Դրախտն, ինչպէս որ այն նկարագրուած է Հնգամատեանց Առաջին Դիրքին մէջ, մէկ փոքրաքանակ և անձուկ գետնամասն չէր, այլ յայնապիսի տարածութիւն մի, աշխարհագրականօրէն, որոյ բուն մեծութիւնն մեզ համար դժուարին է, եթէ ոչ բոլորովին անկարելի, ի ներքոյ կարծեաց խակ արկանել։ Սակայն՝ ըստ կտակարանական նկարագրութեանն, այսչափն բացեիւոյթ է մեր մտաց թէ այն նշանակում է յայնատարած երկիր մի՝ ոռոգուած չորեսին երկարահոս գետերովն, Եփրատէս, Տիգրիս, Գիհոնէն և Փիսոնէն։ Եւ, նոքա որք տրամադիր են ընդունելոյ զհայեցակէտն՝ թէ Եդեմական Այգին առնչութիւն ունէր այն

աշխարհին հետ զոր մեք, ի ձեռն հոլովմանց ժամանակաց, ճանաչեցինք որպէս Հայաստան, հարկ է իւրեանց փաստերն, հիմնականօրէն, բոլորովին սահմանափակեն այդ չորս գետերի շուրջն, և ջանան, բստ անձնիւր խուզարկեալ համոզմանց, ցուցանել որ այդ չորս գետերի ազբիւրներն եւս գտնուում են Հայաստանի ծագկազարդ, զուարթ և կազդուրիչ բարձրաւանդակներում, որ և իսկ՝ գերառաւել համապատասխանում է ամէնուն հասկացած գալարագեղ և երջանիկ Դրախտին յատկութեանցն, քան ստորին Միջագետաց տապախարշ և աբեւակէզ հոգամասերին, ինչպէս որ նոքազոյն հնազէք զուն զարձեն ապացուցանել։

Զորեսին Գետերն

(ա) Եփրատն (Եբր. Պարատա)։ Մէջ ոք է երկրայում որ այս մեծ գետն Հայաստանին է պատկանում։ Ունի իբր 1800 մղոն երկարութիւն և ծագում է Բարձր Հայոց բուն սրտից, բազմակնեան ազբիւրներէ՝ առերի էրզրումին, բղխելով «Դումլու» (9235 ոտաչափ բարձրութեամբ) լեռան խորերէն, և առ ճանապարհայն՝ ընտանալով մեծ և փոքր բազմաթիւ ուրիշ գետերի ջուրերն, և նախ և յառաջ ոռոգանելով իւր ծննդեան երկիրն, Հայաստան, ապա խոնարհելով առ Միջագետք, վերջապէս միանալով Տիգրիսի հետ թափում է Պարսից Ծոցն։

(բ) Տիգրիս։ Ունի իբր 1150 մղոն երկարութիւն, և, անվիճելիօրէն, պատկանում է Հայաստան աշխարհին։ Իւր ծագումն առնում է Բարձր Հայոց «Բիոլջիւկ» լճէն, 4000 ոտաչափ բարձրութեամբ ծովամակերեւոյթէն և ոչ շատ հեռի էրզրումէն։ Հոսելով առ արեւելեան—հարաւ կոյս, անցնում է Դիարբէքր (առերի երրեմն մեծահամբաւ Տիգրանակերտ քաղաքին), նինուէ, Բաղդադ և Սասանեանց Արքայից մայրաքաղաքի, Տիսփոնի աւերակներն, և ի վերջոյ միանալով Եփրատէսի հետ թափում է Պարսից Ծոցն (ինչպէս ի վեր յիշեցինք)։ Արեւմտեան եկեղեցեաց Կտակարանական թարգմանութեանց մէջ՝ այս գետն կոչւում է «Հիդդիկէլ» (Ծն. Բ. 14)։ Սոյն բառին նախամասնիկն «հիդ» թարգմանուած է սարաշա, որ Արաբական լեզուին ազդեցութեան շնորհիւ յապաւեցաւ՝ թողլով «Դիկէլ» որպէս անուն գետոյն, և որոյ սերկեանս աւուր Արաբական յորջորջումն, «Դիջլէհ», լեզուագէտք ստուգաբանօրէն, վերագրում են Մաբական լեզուին և թարգմանում են զայն նեռ։ Ուստի ամբողջապէս «հիդդիկէլ» (նոյն իսկ որպէս բուն Եբրայականն հիդ — կամ խիթ — դիկէլ)=սարաշա նեռ, որ կարի յարմար նկարագրական անուանակոչութիւն մի է մեր պատմական ազգագեղ գետոյն համար, ի հեռուկս ոմանց կասկածողաց բառաճախարիչ քննարանութեանց։ Ըստ տարբեր կտակարանական բառարանից, Բազդէացիք եւս սոյն գետոյն անունն կոչում էին Դիկլ։ Դիւրին է հասկանալ որ Միջագետաց ազգայնոց խօսակցական լեզուներին զանազանութեանց ազդեցութեամբ, Դիկլ կերպարանափոխեցաւ առ Դիգլաթ, որոյ ապացոյցն տեսանելի է Բազդէ-Արամէական «Թարգումն» կամ նոցա կտակարանի՝ թարգմանութեան մէջ (և, անցողակի, յիշելի է որ «Թարգումն», զոյացեալ նոյն լեզուի բարգեմ բառից, նոյն է որ ժամանակաւ որդեզրեցաւ մեր հայերէն լեզուի մէջ որպէս բարգմանել)։ Մինչ ցայսօր իսկ՝ Սիրիացիք այս գետոյն անունն կոչում են Դիգլաթ և Արաբացիք Դիջլաթ կամ Դիջլեհ։ Մեր հայերէն կտակարանի մէջ՝ այս գետոյն անունն, վերածեալ Եօթանասնից Յունարէն թարգմանութենէն (գրուած իբր նօթն հարիւր ամօք յառաջ քան մեր սրբազան թարգմանիչների ժամանակն), յիշուած է որպէս Տիգրիս, որ յետ այնորիկ անփոփոխ մնացած է թէ՛ Հայերէն և թէ՛ Յունարէն կտակարանաց մէջ։ Ի պատճառս տակաւ տակաւ յետագարեան բառական փոփոխմանց, վերագրելի ազդեցութեանց դրացի ազգայնոց տարբերական յորջորջմանց, Դիգլաթէն փոխանցումն առ Դիգրա և Տիգրա (որպէս որ վերջինն ծանօթ էր Աքեմենեանց Մեծին Դարեհի ժամանակներում իսկ, և յիշատակուած Բէհիստունի փորագրութեանց մէջ) և Տիգրիս, դիւրին հասկանալի է։ Թէպէտև ի սկզբանէ անդ, բուն Եբրայական Հիդդիկլ անուանակոչումն յարատեւեցաւ Արեւմտեանց Կտակարանաց մէջ, սակայն, ժողովրդականապէս, նոքա ամէնքն եւս գետոյն անունն կոչում են Տիգրիս։ Արդ՝ անցնինք առ մեացորդ եր-

digitised by A.R.A.R.@

կու գետերն, Դեհովն և Փիսոնն, և տեսնենք թէ, արդեօք, նոքա ևս իւրեանց ծագումն ունեն Հայաստան աշխարհում։

(զ) Դեհովն (Եբր. ուժգին, սաստիկ, ճայթիչ)։ Այս գետոյ տեղագրութիւնը բուն վիճաբանութեան առարկայ եղած է միշտ, ի պատճառս կատարեալ նկարագրութեանն, «Նա պատէ զամենայն աշխարհն Եթովպացւոց» (Մեն. Բ. 13), քան Հայերէն բուն դասական՝ որպէս և համակ միւս Արևելեանց և Արևմտեանց՝ թարգմանութեանց։ Ըստ որում Եթովպիա մասն է կազմում Աֆրիկէի, ո՛չ անբնականաբար, անդրադարձութիւնն առաջնորդած է հեռատաղօտագոյ ոմանց առ երևութապէս անդիմադրելի եզրակացութիւնն՝ թէ Դեհովն գետն նոյն է որպէս Եգիպտական Նեղոսն, որոյ երկուստեք ծագման մէկ ճիւղն, կապոյտ Նեղոսն, անցնում է ընդ մէջ Եթովպիոյ երկրին։ Դժուարաւ հաւատալի է թէ Մովսէս, անգուներութեան մասնէր իւր զիտնցեալ բնակելի երկրագունդին աշխարհագրական-ֆիզիքական երևոյթներն, եւ թէ Կարմիր Ծովն, անտարակոյս նորա իսկ ժամանակում, բաժանում էր Ասիա Աֆրիկէից, որով տեղաւորելն Դեհովն գետն Եթովպիում, ֆիզիքապէս անկարելի է համապատասխան գտնել իրականութեանց հետ յիշատակուած Մենոյց Գրքին մէջ, սեւ գետ եղանէր յեղեմայ ոռոգանել զԴրախան. և անտի բաժանի ի չորս առաջս (Բ. 10)։ Ըստ իմ ըմբռնողութեան՝ եթէ այդ չորս ճիւղերի մէկն, Դեհովն, ոռոգում էր «զամենայն երկիրն Եթովպացւոց», ուրեմն, անբնական իմն հրաշիւք, անջատելով իւր ծնողավայրէն՝ (Նախահայաստանէն, ինչպէս որ պիտի տեսնենք) և իւր ընկերածին միւս գետերէն՝ պէտք էր մարմնովին ցայտքէր Կարմիր Ծովն՝ մէկ աշխարհէն առ միւսն— անհեթեթ մի առարկութիւն։ Եւ զարձեալ՝ ոմանք կը յաւակնին կարծել, որպէս ոչ անկարելի, թէ Եբրայեցիք՝ մինչ ի գերութեան էին յեգիպտոս, հայրենական իմն սիրատենչ եռանդեամբ, ընդունելի վարկանեցին Եթովպիոյ գետոյն առնչութեամբ տեսութիւնն, որպէս զի խնամութիւն մի հաստատեն ի մէջ բարերար գետեցիկ Նեղոսին և գետերի մէկին յիշատակուած իւրեանց Սուրբ Գրոց մէջ։ Սակայն ի վերայ այսր ամենայնի՝ այս թէականութեանց ընդդէմ յիշատակելի է այն կարեւոր փաստն թէ բուն Եբրայականին մէջ, Դեհովին առնչութեամբ, երկրի անունն արձանագրուած է Քուշ որ, Եթիոպանանից թարգմանութիւնէն սկիզբն առնելով, Բիբլիստոնէից համակ միւս թարգմանութեանց մէջ վերածուած է Եթոպիա։ Սորա պատճառն յայտնապէս այն է թէ Եթովպացիք, ընդ հարեւան քանի մը ուրիշ ազգերին, պահանջեցին իւրեանց սեպհական Քուշէն, որ որդի էր Քամայ և թոռն Նոյի (Մեն. Ժ. 6)։ Հարկ էր որ «Քուշ» բառն, ինչպէս որ այն գրուած էր բնագրին մէջ, անփոփոխ պահէին թարգմանութեանց մէջ, այսինքն է՝ առանց, ըստ հաճոյից յարառութեամբ վերածելոյ զայն որպէս Եթոպիա, որով թիւրիմացութեանց և վիճելի եզրակացութեանց դուռն փակած կլինէին ի յաւիտեան։ Արդ, կարեւորագոյն քան զամենայն, արժանի է աչաց յանդիման ունենալ պատմականօրէն հաւատալ այն դլխաւոր կէտն թէ Քուշի սերնդոց առաջին որոշանն էր Ասիա, այսինքն է՝ սկսեալ այն հողամասերից որք ծանօթ են մեզ որպէս Սուսիանա և Քուզիստան՝ Միջագետքի մէջ, եւ անդէն ի վեր տարածուած մինչև հիւսիսակողմանն։ Փիտենք նաեւ, որ Քուշեանք (Kassites), գեղակիցք Քուզիստանայ բնակիչներին, վաղեմի դարերում՝ հաստատուած էին Միջագետքն ի վեր բարձրադոյն հիւսիսային սահմաններումն մինչև լեռներն առ արևմուտս կոյս Կասպից Ծովին։ Այս Քուշեանց լեռնաբնակ ցեղն էր որ Կասպից Ծովի առ արևմտակողմն բարձրաւանդակներէն ներխուժելով առ հարաւ և տիրելով Եգիպտոսին, Պետական հարբաութիւն մի մատակարարեց, «Հովիւ թագաւորք» (Hyksos) անուամբ, որ տեւեց յաւել քան հինգ դար (Ն. Ք. 1786-1211)։ Եւ արդ՝ այսոքիկ ազգաբանական և տեղագրական իրականութիւնք առաջնորդում են մեզ առ եզրակացութիւնն (եւ մենք և զակիչ չենք մեր տեսութեան մէջ) թէ թարգմանութեանց մէջ՝ Դեհովին առնչութեամբ անդրադարձութիւնն հարկ էր լինել «պատէ զամենայն երկիրն Քուշաց» (և ո՛չ, ըստ քմահաճոյից, մեկնաբանել զայն որպէս պատկանելի Եթովպացւոց երկրին), և, հետեւաբար, Դեհովեի նոյնութիւնն վերագրել մեր Երասխ գետին (Արաքսին, որոյ

digitised by A.R.A.R.@

արմատն Ար կամ Արա, ինչպէս և զոր օրինակ՝ Իտալիոյ Արնօ գետոյն արմատն, զոյացեալ է Մանակրիտ լեզուէն՝ նշանակելով արարչաւ), որ պատում էր Բուշայ սերնդոց բնակեալ հողամասերի հիւսիսային սահմանն և որ տեղի, ըստ քննական պատմութեան, ժամանակի ընթացքումն նաչուեցաւ Հայաստան անուամբ։ Մանաւանդ է ամենեցունց որ Երասխ իւր ծագումն առնելով Հայաստանի 10770 ոտաչափ բարձրութեամբ «Բին-Գէօլ» (Հազար-Լճեան, կամ ընտանի հայերէն կոչմամբն Բիւրակիւնեան) լեռնէն, առերի էրզրումին (ինչպէս Եփրատէսն և Տիգրիսն), և հոսելով առ արեւելս կոյս, վերջապէս թափում է Կասպից Ծովն։ Ցուսամ ընթերցողք ներողամիտ լինեն եթէ փոքր ինչ դեգերինք Հայերէն Կատակարանի մէջ թարգմանուած «պատէ» բառին շուրջն։ Անդրադիրէն Կատակարանին մէջ, զոր օրինակ, տեսնում ենք encompasseth, այսինքն է՝ encircled, ինչպէ՞ս կարելի է որ գետ մի, ոլորելով հազարաւոր ոտաչափ բարձրութեամբ լեռնակողմէն և բնական օրինօք հոսելով առ խոնարհ, ապա՝ ընդդիմանալով կեդրոնաձիգ ծանրաքաշ զօրութեան անդիմադրելի իշխանութեանն՝ սկսանի ծովին հաւասար դաշտավայրերէն շուրջ շրջելով ի վեր հոսել առ իւր աղբիւրն, այդու՝ անկարելի օղակ մի կազմելով երկրին շուրջն որ այն ոտագում է, քանզի encompasseth այլ ոեէ ուրիշ նշանակութիւն չունի քան զայդ։ Պատահութիւնն ունեցած եմ, երբեմնապէս, բաղդատել մեր Հայերէն Կատակարանի քանի մի մասնաւոր բառերն օտար թարգմանութեանց հետ, և չեմ զարմանում որ օտարազգի քննագատք արժանաւորապէս պատկեցին մեր Կատակարանն «Թագուհի «Թարգմանութեանց» տիտղոսաւն։ Պատահմամբ չէր որ մեր հանճարեղ Սրբազան Թարգմանիչք զործ ածեցին «սպասկ» բառն որպէս գերիվերոյ նպատակայարմար քան շրջապատ։ Գիտենք որ ժամանակէ ի վեր «պատէ» և «շրջապատէ» դասաւանդուած են մեզ որպէս փոխ առ փոխ միեւնոյն նշանակութիւն ունեցող բառեր, սակայն՝ ըստ չափու իմ հասկացողութեանս, բուն արմատական բառն է սպասել, այսինքն է՝ պատ, որմ կամ պատնէշ կազմել, ինչպէս որ Երասխն այդպէս իսկ ձեւանում է Հայաստանի Հիւսիսային սահմաններում։ Ոչ, դիպուածաբար չէր՝ այլ խմաստուն դատողութեամբ՝ որ մեր Ոսկեդարեան Սրբազան Թարգմանիչք գերբնաբերեցին սպասկ բառն որպէս ե՛ւս յարմարագոյն ըստ խմաստին, ըստ բնական օրինաց և ըստ բառին նախնային սեպհական նշանակութեանն՝ քան ֆիզիքագէս զանկարելին շրջապատ կամ շուրջ սպասկ։

(գ) Փիսոն (Երբ. Լիահոս)։ Համայն մեկնիչք և քննաբանք, գրեթէ համաձայն մխբանութեամբ, ընդունում են Փիսոնին նոյնութիւնն Ծանօթ Փասիսին հետ, որ տեսանելի է նոյն իսկ հնագոյն դասագիրքերի մէջ։ Փասիս իւր ծագումն առնելով Բարձր Հայոց լեռներէն, ոչ շատ հեռի կուր գետոյ խոնարհագոյն ադիրներէն, և հոսելով արեւելքէն առ արեւմուտս կոյս, ոռոգում է Կողքիս (Colchis— առաւել ծանօթ մեզ որպէս Լազիստան) գաւառն, և վերջապէս՝ թափում Սև Ծովն։ Ի մի կողմն ենք թողում ոմանց թէական նութիւնք թէ Փիսոնն ակնարկում երբեմն վերին ջուրերին, և կամ թէ այն նոյն է որպէս Ճորոխ. և ուրիշների երկարաբանիչ տեսութիւններն թէ այն նոյն է որպէս Ծքսուս (Ամու Դարիա) որ ոռոգելով Բուքքարան և վերին Թաթարստան՝ ընթանում է ի մէջ Արալ լճոյն և Գամիր լերանց, հարիւրաւոր մղոնօք առ հիւսիս-արեւելեան կոյս Կասպից Ծովուն և որ, ըստ իս, կարի կասկածելի և անընդունելի թէական նութիւն մի է, ի պատճառս բազմակողմանի երկրաբանական կազմակերպութեանց ընդդիմակաց խաչնդոտից։ Փիսոնի նոյնութիւնն ապացուցանելոյ համար, հա՛րկ է միմիայն ունեցեալ փասան ունենալ կատակարանական նկարագրութիւնն. «նա՝ է որ պատէ զամենայն երկիրն Եւիլատայ. անդ ուր ոսկին է։ Եւ ոսկի երկրին այնորիկ ազնիւ, և անդ է սուտակն և ակն դահանակ» (Ծնն. Բ. 11 և 12)։ Ո՞ւր էր այդ «երկիրն Եւիլատայ»։ Գիտենք Կատակարանից որ Եւիլայ որդի էր Բուշայ և թոռն Համայ (Ծնն. Ժ. 7), և ո՛չ ոք է տարակուսում որ «Եւիլատայ» այն երկիրն էր ուր հաստատեցան և սփռեցան Բուշայ որդւոյն, Եւիլայի, սերունդքն։ Գտնում են առ մեզ դրականապէս հաւատալի վկայութիւնք թէ «սուտակ և ակն դահանակ»

պատուական գոհարներն աշխարհս ո՞ր կողմերումն էին մանաւորապէս գտնուում այդ հեռաւորագոյն՝ և յայտնապէս մեզ այժմեականացս անծանօթ ժամանակներում։ Նոքա որք այդ գոհարների հանքերն գտնեղում են Արաբիոյ հիւսիս-արեւելեան սահմաններում, այսինքն է՝ Շաա-ալ-Արաբի մօտերում, թէպէտև արդիւնք հանճարեղ հետազօտութեանց, սակայն եւ՝ կարելի է միայն համարել զայնս որպէս լոկ անձնիւր մատացածին խղճամիտ համոզմանց ենթադրութիւնք։ Իսկ ներհուն հնաբանն, Dr. Botsford, իւր History of the Ancient World„ գրքին մէջ, հիմնեալ հին և նոր ապացոյցների վերայ, հաւատում է, որպէս առանձնայատկութիւն ի հնումն, թէ "Colchis yielded gold, և որովհետև Փասիս ընթանում էր, և դեռ ընթանում է, Կողքիս գաւառի (Լազիստանի) մէջինն առնդ ուր ոսկին է», որեմն առաւելօք փաստիւք, Փասիս գետն նոյն է որպէս կատակարանական Փիսոնն։

Արդ՝ ի վերջաբանութիւն մեր նկատելն պատկանելի մինչ ցարդ արձանագրեալ ուսումնասիրութեանց, վերադառնանք անդամ մի եւս, առ քան զամենայն հիմնականօրէն կարեւոր փաստն, սեւ գետ նշանէք յեգեմայ ոռոգանել զԴրախտն, և անտի բաժանի ի չորս առաջս» (Մեն. Բ. 10)։ Տեսինք որ այդ չորս գետերի արտաքոյսոց աւազաններն գտանուում են մեր Հայաստանի բարձրաւանդակներում, ոչ հեռի ի միմեանց։ Սակայն ինչ էր Մովսէսի միտքն իւր նկարագրութեան խնամին առնչութեամբ։ Դեռ ասելով (և Մովսէս չէ ասում գետ մի) չպիտի հասկանանք որպէս թէ այն մի հաս գետ էր անդ ի ծագմանն, այլ ծնողակից հոսանիներ որք, «ոռոգանելով զԴրախտն», անտի, այսինքն է՝ Դրախտիցն, բաժանուում էին չորս առաջների, հոսելով առ ծովու հաւասարութիւնն, ըստ բնական օրինաց,

Փիսոնն (Փասիս) առ արեւմուտս,
Գեհոնն (Երասխ) առ արեւելս,
Եփրատն առ արեւմուտս և անոր առ հարաւ,
Տիգրիս, առ արեւելեան-հարաւ։

Ահաւասիկ, վերիշեալ հիմանց վերայ է (յուսամք ոչ անտարամարտական), որ լոկ եւեթ զրաղուելով առնչութեամբ եգեմական գետերին՝ ըստ նոցին նկարագրութեանց Սուրբ Գրոց մէջ, վստահացանք յիշեալ չորս գետերի ծագման աղբիւրներն, ըստ մեր խուզարկութեանց, վերընծայել այն երկրին զոր մեք սիրած ենք կոչել մեր Հայաստան աշխարհ։

Լօնդոն Ս. ՏԷՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
(Նոր Ջ--ղայեցի)

ՆԻԼԻՆԻՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ե.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Բ. ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

1889 Մայր. 26 Սբ.—✠1525

(Շար.)

ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Թլկուրանցիին ամէնէն յայտնի և ամէնէն գրաւիչ կողմը եղած իր բանաստեղծութիւնը, իր ընտրած նիւթերով, իր արուեստով և իր լեզուով։ Այիշան, Կ. Կոստանեանց, Հ. Ղևոնդ Յովնանեան և Ա. Զօպանեան իրենց արժէքաւոր ուսումնասիրութիւններով և գնահատումներով Թլկուրանցիին տուած են միջնադարեան հայ տաղասացներու շարքին մէջ առաջին տեղը։

Թլկուրանցիի բանաստեղծութեան նիւթը, ասիկա տեսանք վերև, մեծ չափով սերն է և զեղեցկութիւնը կնոջ։ Գծուած պատկերները ըստուգիւ կենդանի, գեղեցիկ և գրաւիչ են։ Հոգեւորական մը ինչպէս կրցեր է այսքան ազատ ու համարձակ կերպով գրագիր այսպիսի հոլանի նիւթերով և տաղել և երգել զանոնք(*)։

Թլկուրանցիի արուեստը իրապէս խորհրդապաշտական է։ Այդ բոլոր սիրուն տաղեր ու երգեր, հակառակ իրենց իրապաշտիկ, մերկ ձևերուն և կերպերուն, մարմնի ցանկական հեշտութիւններէն վեր ըմբռնումներ են, բուն բանաստեղծութիւն է, որ մարուր է ըստ ինքեան, և միներու ու ջիղերու ժամանակաւոր ու վազանցիկ խաղանքէն չէ՝ որ կը բխի։ Կանխեցինք արդէն դիտել տալ թէ եզ եզոցն է որ այդ համարձակ և իրապաշտիկ հանգամանքը կուտայ իր արուեստին։ Թլկուրանցիին մարմնի հանոյքները երգող մը նկատել, մերճուած շուայտութիւններու մէջ, ասիկա պարզ հակասութիւն մը

(*) Պէտք է մասնաւոր ուշադրութիւն ընել այս կէտին որ Թլկուրանցիին ո՛չ միայն տաղեր կը գրէ, այլ նաև կ'երգէ զանոնք. այսինքն իր տաղերուն եղանակները ալ կ'ստեղծէ ինքն։ Բուն տաղասացներ (աշուղներ) մասնի էին եւ մասնի են, թէ՛ երգագիր եւ թէ՛ երգանոն միանգամայն։

digitised by A.R.A.R.@

պիտի ըլլայ։ Վանդի մարմնի հեշտանքներուն մէջ խորասուզած մէկը չի կրնար ունենալ բանաստեղծական այն թռիչքը, զոր ունի Թլկուրանցին։ Հանոյքներու մատնուած մէկը ատանցմա՛մբ իսկ կը գոհանայ, և չի կրնար այլևս բանաստեղծել, երգել. ատանք կը գինովցնեն ու կը բթացնեն զայն։ Արուեստին մաքրութիւնը եւ բարձրութիւնը, երևակայութիւնը,— բանաստեղծական արտայայտութեան այդ ազրիւրը—, զգացումներուն կրակը, լեզուին շնորհը, բուն բանաստեղծութիւնէն հառաջացեալ մագնիսումը, մէկ խօսքով, բանաստեղծութեան բոլոր յատկութիւնները կը թուրնան, կը չուծուին, կը մաքրին և կը կորսուին յաւէա՛ մարմնի ցանկութիւններուն և հեշտութիւններուն մէջ։ Իսկապէս բնախօսական այս իրողութիւնը միայն բաւական է Թլկուրանցիի արուեստին տեսակը համայրը բացատրելու համար։

Մարդասանութեան հաւասար ոճիր մրն է Թլկուրանցին գատել իբրև հանոյքներու գերի, «չարաճճի կեղծարար» մը։

Զենք ուզեր կրկնել տարբեր ձևերով ինչ որ բսինք ու շեշտեցինք նախորդ հատուածին մէջ Թլկուրանցիին անձը եւ արուեստը պաշտպանելու համար, զինքն չհասկցող յախուռն և բոլորովին անիրաւ ու անարդար քննադատներուն բարդանքներուն դէմ։

Տեսնենք հիմայ բանաստեղծ Թլկուրանցիի գործին ու արուեստին շուրջ յայտնուած կարծիքները.

Զամչեան, Մկրտիչ Նաղաշի և բժշկապետ Ամիրաժլարի վրայ գրելէ ետքը, կ'ըսէ.—«Յայն աւուրս էր և Յովհաննէս Վրդ. Թլկուրանցի, որ եղև կաթողիկոս Սսոյ ի թուին Հայոց ՉԼԸ. (=1489). սա արար գիրս ոտանաւորաց բազմատեսակս՝ միտակ եւ սարիկ ոճով՝ իբր մեկնութիւն գրոցն Ծննդոց, քաղեալ ի բանից մեծին Վարդանայ Վարդապետի» (Պատ. Հայոց Գ. էջ 508)։ «Մէյակ և սարին ոճը՝ գրաբարի նայելով արարեալ մրն է. վասն զի Թլկուրանցիին հայերէնը ժողովուրդին միտքը ու զգացումները արտայայտելու կարող աշխարհաբարացած հայերէն մրն է։

Ալիշան.— «Այլ ամենէն աւելի բանաստեղծ և տաքսիրա Յովհաննէս Թլկուրանցի, որ ատեն մը սիրոյ և գովասանաց երգեր երգած է, ատեն մ'այլ Սսոյ կաթողիկոս է եղած» (Բուսիկ Բ. էջ 125. Հմմտ. Հ. Գ. Զարբհանեանեան Պատ. Հայ. Դպր. Բ. հատ Մեսրոպ. Բ. տպ. 1905. էջ 218-219, 222)։

Քաջն Լիպարիտ մասին գրուած տաղին (Հոգւոյդ սուրբ եւ և անարի) վրայ խօսելու ատեն (Անդ, էջ 510), կ'ըսէ.—«Երգոյս հեղինակն աշխոյժ երգիչն Յովհաննէս Թլկուրանցի, որ և Սսոյ կաթողիկոս եղաւ ԺԵ դարուն վերջերը (1489-1525)։

Հ. Ղ. Յովհաննեան.— «Երկու ժամանակակից քերթողներէն՝ (=Մկրտիչ Նաղաշ և Գրիգոր Ագթամարցի) նախապատուութիւնն ընդհանրապէս կը տրուի Սսոյ կաթողիկոսին (1489-1525), թէ՛ աւելի բանաստեղծական աշխոյժ և թէ՛ աւելի առատաբուխ գրիչ ունենալուն համար։ Իր պահուած տաղերուն թիւն քսանը կ'անցնի. չի կրնար ուրացուիլ նաև աշխոյժն ու վառվռուն ոճը։— Բայց կարծենք թէ առանց իր բանաստեղծական աշխուժին ՁԱՍ հատցընելու՝ աւելի պատիւ կը բերէր վարած եկեղեցական բարձր պաշտօնին, եթէ յիրս ինչ աւելի չափաւորէր իւր երևակայութեան սլացքն։—

Գրութեանս հին սկզբնական խմբագրութեան մէջ այսչափ համառօտ ակնարկութիւն բրած էինք քերթուածոց մեր մասին նիւթոյն և մանաւանդ չափազանց կենդանի նկարագրութեանց վրայ։ Իսկ այժմ տպագրութեան համար նոյն սկզբնական խմբագրութիւնն աչքէ անցընելու ժամանակ՝ ուզեցինք յաւելուլ յաջորդ տողերն, առնելով այն քննադատական Հատածէն՝ որ գրուած է Յովհաննէս Թլկուրանցիի եւ իր տաղերը վերնագրեալ տետրակին հրատարակութեան առթիւ։

«Այս երգիչն (Յովհ. Թուլկ.), կ'ըսէ հատածագիրն, . . . մեր ոսմկարան երգչաց նշանաւորներէն է, որուն երգերը շատեղ արդեամբք ընթիր են թէ՛ բան կազմութեան ոտանաւորի և թէ՛ բան բանաստեղծական գեղեցկութեան։ Թուլկուրանցւոյն երգերը բաւական յանախ կը գտնուին ձեռագրաց մէջ։ . . . Իր կենաց այլևայլ պարագաները դեռ շատ մթին են, և Հրատարակիչն (Մեծ. Պր. Կ. Կոստանեանց) Թուլկուրանցւոյն վրայ գրած Յառաջաբանութեան մէջ (էջ 1-21) շատ քիչ բան կրցած է որոշ մեր առջեւ դնել այն երգչին կենաց նկատմամբ։ Աւելի մանրամասն ներկայացուած է այս Յառաջաբանութեան մէջ Թուլկուրանցւոյն երգերու նկարագիրը, զորոնք Հրատարակիչն երկու խմբի կը բաժնէ, մին՝ Թուլկուրանցւոյ դեռ աշխարհական հազած միջոցին, և որ մեծաւ մասամբ սիրոյ երգեր են, և միւսն կաթողիկոսութեան ատեն յօրինածները՝ որոնք ընդհանրապէս խրատական են։ Սակայն այսպիսի բաժանում մը յընդհանո՛ւրն միայն հիշդ է. . . » (Հ. Տ. Վ. Տաշեան, Հանգէս Ամսօրեայ, 1893, էջ 270.— Ազգ. Մատեան. Կն. Միխիթարեան Ազգ. Տպագ. էջ 27-29)։

Ա. Զօպանեան.— «Ժողովրդական կամ աշուղական բանաստեղծութեան ամենէն գեղեցիկ ու կատարեալ էջերը անոնք են զոր արտադրած են ժողովրդական կեանքէն, լեզուէն ու հաչակէն ներշնչուած, բայց և նոյն ատեն իրենց քերթողական բնազդին որոշ չափով գրական հմտութիւն ու հաչակ միացնող աշուղներ. այսպէս եղած են Սայաթ-Նովա, Նաղաշ Յովհաննէս, Ղազարիանոս, Քուչակ,— ինչպէս և աշուղի պէս գրող այն ուշաշուշ գմայլելի գրագէտները, Ագթամարցի, Թուլկուրանցի, Կոստանդին Երզնկացի, Եղիսմա Քէօմիւրճեան, են.» (Հայ էջեր, ԺԷ)։

Դարձեալ. «ԺԶ. տարի՝ Յովհաննէս Թուլկուրանցւոյն մէկ փոքրիկ սիրերգն է, այդ գմայլելի երգչին ամենէն նուրբ էջերէն մին, ուր իրաքանչիւր տողը թարմ ու յուսերանգ է գարնան ծաղկի պէս։ Տաղաչափութիւնը՝ 4-4-4։ Այս տաղիկը,— ինչպէս և վերև յիշուած այբուբենական տաղաչափութեամբ սիրերգը,— կը պակսի Կոստանեանի հրատարակութեան մէջ, որուն ամ-

digitised by A.R.A.R.@

փոխուած կասարները հետաւ են արդէն Թէլկուբանցւոյ ամբողջ գործը ներկայացնելէ և ուրիշ վարիանտներու հետ բաղդատուելով իրենց սխալներէն ու ապաւորութիւններէն մաքրուելու պէտք ունին։ Գ. Կոստանեան մեծ արժանիքն ունեցեր է առաջին անգամ հատորի մէջ ամփոփելու Թէլկուբանցւոյ երգերուն մէկ մասը, ինչպէս և Դրիգոր Ագթամարցւոյ, Մկրտիչ Նազաշի և այլ միջնադարեան ռամկաբարբառ բանաստեղծներու գործերը(*)։ բայց անհրաժեշտ է որ այժմ ուրիշներ, կամ ինքնիրեն, երիրորդ, աւելի ամբողջական և աւելի խնամուալ և ուղիղ հրատարակութեամբ մը՝ ասոնց մեջի Թէլկուբանցւոյ գործը, ինչպէս և միւս բանաստեղծներուներ։ (Անդ. ԺԹ—Ի)։

Դարձեալ. Թե. և Զ. տպագրուն վրայ խօսելով կ'ըսէ.— «Թէ ո՞ր գարուն են գրուած, թէ ո՞վ են միոյն հեղինակ Յովհաննէս ու միւսին յօրինիչ Քերթողն, չեմ գիտեր. եթէ ապացուցուի որ սիրերգին հեղինակը Յովհաննէս Թէլկուբանցին է, այդ արդէն իսկ գմայլման արժանի քերթողը աւելի ևս պիտի մեծնայ մեր աչքին,— որովհետև այս կողմը աւելի խոր է և ուժեղ քան Թէլկուբանցիի միւս մեջի Ճանաչ սիրերգները։ (Անդ. ԼԶ.)։

—«Այս հեղինակէն ունինք շատ մը տպագիր, (ինչպէս իր կրօնական, խրատական, արբանեակաւոր և պատմական երգերը) որոնք մասայ օրենքու հայրենասէր եկեղեցականի մը գործերն են. ամենք ալ սիրոյ երգեր, թեթև ու շնորհալի գարձուածով մը և համարձակ զգայնասութեամբ. սէր նա՛յն երկուքին մէջ ալ կուռ, պայծառ ու բոլորովին ժողովրդական երանգով սա մը։

Սիրոյ երգերը, որ բանաստեղծին երիտասարդութեան գործերն են, բազմաթիւ են. թէև այս բոլոր սիրերգներ կը վերջանան մեղադրանքով մը, զոր եկեղեցականութեան սահմանուած հեղինակը կ'ուղղէ իր անձին, բայց ասա՛նք են որ կը կազմեն հայ քնարերգութեան ամենէն անկեղծ ու ամենէն մաքրամաքրական էջերը։

Եւ սակայն կրօնական ոգիի գուրկ չէ Թէլկուբանցին. ան խորապէս կ'արտայայտէ զայն իր խրատական, արբանեակաւոր տպագիրներն, ինչպէս նաև մահուան և կեանքի ունայնութեանց երգերուն մէջ. բայց այս կրօնականութիւնը ամենևին չ'երևիր իր սիրերգներուն մէջ, որոնք, առանց մտաբերականութեան, ազատներն են գեղեցիկ ձևերու սիրահար սրտի մը, որ կ'ախորժի կնոջ ահեղ շնորհը մեծացուցանելէ» (La Roseraie d'Arménie, Tome Second, Paris, 1923, p. 154)։

Այս գնահատումներ Թէլկուբանցիի բանաստեղծութեան մասին հիշդ են ընդհանուր առմամբ։ Մենք համաձայն ենք Տաշեանին, որ կասանեանցի — պէտք է աւելցնել նաև այժմ Զօպանեանի — ենթադրած երկու խումբերու բաժանումը իրապէս չ'ընդունիր, իրրև թէ Թէլկուբանցին իր երիտասարդութեան գրած ըլլայ իր սիրոյ տպագիրը, իսկ հոգեւորական ըլլալէ ետքը գրած ըլլայ իր խրատական տպագիրը։ Ընդհակառակը սիրոյ տպագիրներուն մէջ այնպիսի նշաններ կան, որ ցոյց կուտան թէ գրողը կրօնաւոր Թէլկուբանցին է։

Իր տպագիրը, ինչպէս կ'երևի շատ շատ ժողովրդականացած ու տարածուած են. և ասոր ապացոյցը այն է որ առանցմէ տասնրհնգ հատը, հրատարակուած են 1512|3ին, վենետիկ, Թէլկուբանցիին ողջութեան այն հաւաքածոյին մէջ որ կը կրէ Տաղարան է սոյ հոգոյ եւ մարմնոյ, Նազաշի տպագիրներն և Շնորհալիի Հանելուկներուն, եւայլնի հետ։

Այսինքն՝ Թէլկուբանցին այն բախտաւոր բանաստեղծը եղած է հայ ժողովուրդին մէջ, որ ԺԶ. դարուն սկիզբը, իր կաթողիկոսական աթոռին վրայ իսկ այնքերով տեսած է իր տպագիրներն 15 հատին հրատարակութիւնը. և ասիկա մէկն է հայերէն տպագրութեան ամենէն հին և թանկագին երախայրիքներէն(*)։

Դժբախտաբար շատ խանգարումներու և աղաւաղումներու ենթարկուած են Թէլկուբանցիին տպագիրը, ընդօրինակողներու կողմէն, և ի՛նչպէս որ Զօպանեան մատնանիշ բրած է, խնամուալ նոր հրատարակութիւն մը անհրաժեշտ է բանաստեղծ-կաթողիկոսի տպագիրներն ամբողջը լոյս բերելու համար։ Թէև Այիշան իր Յաւելիկին և Սիսուանին մէջ, Յովհաննան իր միջնադարեան Տաղաչափութեան մէջ, Սրուանձտեանց իր Մանանային մէջ (1876), Տէվկանց իր Հայերգին մէջ (1882), Կոստանեանց իր Յովհաննէս Թլկուրանցի եւ իւր տաղերը հաւաքածուին մէջ (1892), Զօպանեան իր Հայ էջերուն մէջ (1892), Սուրբխաչեան իր Գեղական Գանձերուն մէջ (1922) այլևայլ նպատակներով ու ուղիներով բաւական կտորներ հրատարակած են, բայց լման գործ մը չեն կազմեր ատոնք։

Այս գլուխին վերջը կը դնենք Թլկուբանցիի լոյս տեսած ու անտիպ տպագիրներուն մէկ ցանկը, և նմայն մը ալ կուտանք անոնց ընտիրներէն. որովհետև ատոնք են որ կ'ապրին իր գրական գործերէն, և ատոնցմա՛վ է որ ինքն ալ հռչակաւոր եղած է միջնադարեան աշխարհաբար գրողներու շարքին, տալով ժողովուրդի խօսած լեզուին անակնկալելի գարձուած մը, սիրուն նա-

(*) Պիտի տեսնենք հիմ եմը թէ Կոստանեանէն ետքայտաց Թլկուրանցիին Տաղերը հրատարակուած են անգամ մը, 1512ին։

(*) Այս Տաղարանը, ինչպէս նաեւ Պարզատումար, Ագրարհ եւայլն, նոյնպէս Պատարագամատոյց մը տպագրուած են Վենետիկ միեւնոյն տպարանի մէջ, 1512-1314։ Այս վերջինին յիշատակարանն է. [Տպա] «Գրեցաւ սուրբ տառս ի Զ. ԿԲ. ի ասատուծապան քաղաքն ի Վենէտ որ է Վենետիկ մատանկաստանձեռամբ մեղապարտս Յակոբին։ ով որ կարդայ մեղաց բոցուրիւն թուեցէք Աստուծոյ»։ ՉԿԲ=1513 կամ 1514։ տոմարեն հայ թուականի սկիզբը կը դնեն 551 կամ 552։ ԹԺ=1561ին ալ «Տաղարան»ի մը մէջ տպագրուած է Թլկուրանցիին մէկ տաղը (Արեկ, արեկ իմ խաչ սուրաթ) «ձեռամբ Յարմանիա» (Հ. Ամատունի, 1888, էջ 140-141)։

digitised by A.R.A.R.@

բութիւններով, բաւական հագուստներով իր բանաստեղծութեան ամէնէն գեղեցիկ պատմուածները, և գնելով առանց ամէն մէկուն մէջ կայծ մը, թրթիռ մը, համբաւ երանգ մը, գրաւիչ առաւելութիւն մը, թափանցիկ իմաստ մը։ Այնպէս որ Թլկուրանցիին հայերէնը իր տարբերուն ամէնէն ուշագրաւ կողմն է, որ զարմանալի կերպով պահած է իր թարմութիւնը, իր յանդգնութիւնը, իր միամտութիւնը, իր մարմնաւորած յղացումներով և գաղափարներով և իր գեղեցիկ արտայայտութեամբ։

ԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Կանխեցինք գիտել տալ որ Թլկուրանցին իրրև Տաղատաց-բանաստեղծ հռչակուած է աւելի քան թէ կաթողիկոս. այնպէս որ իր կաթողիկոսական գործունէութեան մասին պատմական տեղեկութիւններ չեն հասած մեզ։ Ասիկա տակաւին չի նշանակեր թէ Թլկուրանցին անգործ ու աննշան ժամանակ անցուցած ըլլայ կաթողիկոսական աթոռի վրայ։ Ընդհակառակն իրողութիւնը այն է որ Կիլիկիոյ կաթողիկոսներէն և ոչ մէկուն պատմութիւնը ունինք, պատմութիւն բաւական իրական իմաստով։ Ա. հաստատակ Ձեռագրաց յիշատակարաններն ու շարք մը վաւերագիրներ են որ քիչ մը լոյս կը սփռեն անոնց կեանքին պատմական մթութիւններուն վրայ։

Իրաւամբ կ'ապաւէնինք որ գոնէ ինքն Թլկուրանցին, իր տարբերէն մէկուն կամ միւսին մէջ, ակնարկութիւն մը բրած ըլլար իր կաթողիկոսական պաշտօնին կամ իրրև հոգեւորական, իր եկեղեցական գործունէութեան մէկ կողմին։ Բայց, ինչպէս որ տեսանք վերագոյն, երկու ակնարկութիւններ միայն բրած է իր կեանքին նկատմամբ իր տարբերուն մէջ, նախ թէ ինքն ճորան ու Տատան է Ս. Կարապետին և յետոյ թէ ինքն 70 տարեկան է «է՛ մահ, ասնի՛ զեզ յիշեմ» տաղը գրելու առեն։

Զմանեան, հիմնուելով Թլկուրանցիի մասին պատմական տեղեկութիւններու չգոյութեան վրայ, կ'ըսէ. «Իբր կաթողիկոսական գործունէութենէն շատ բան չենք գիտեր, և կը հետեցնենք թէ շատ բան ալ բրած չէ, թէպէտև մինչև 1525, ամբողջ 36 տարի կաթողիկոսութիւն վարած է։ Եւ, Թլկուրանցիին բանաստեղծական արուեստը գնահատելէ ետքը, զարմանալի հակասութեամբ մը կը շարունակէ ըսել. «Եւ իրեն բնական աշխուժութեամբը եկեղեցականութեան մէջ ալ աշխատասէր և գրաւիչ գործունէութիւն ցուցնելով, հետզհետէ բարձրացած և մինչև կաթողիկոսութիւն հասած կ'երևի։ Այլ թէ Կիլիկիոյ աթոռը ի՛նչ օգուտ քաղեց աշուղ կաթողիկոսէն, կամ թէ Թլկուրանցին ի՞նչ արդիւնքներ ընծեռեց Հայ Եկեղեցւոյն, ինչպէս ըսինք, մեզի անծանօթ կը մնան, և չգոյութեան կասկածներ կը թելադրեն» (Ազգպատ. 221C-11)։

Եթէ Թլկուրանցին իր կաթողիկոսութենէն յառաջ, իր բնական աշխուժութեամբը եկեղեցականութեան մէջ աշխատասէր եղած և գրաւիչ գործունէութիւն ցուցընելով բարձրացած է մինչև կաթողիկոսութիւն, այսչափը ընդունելի եղաւ, պէտք էր առանց վարանելու հետեցընել թէ Թլկուրանցին իր աշխուժութիւնն ու գործունէութիւնը պահած է իր կաթողիկոսութեան մէջ ալ։ Եթէ իր եօթանասուն տարիքին մէջ դեռ կ'առեղծարանէր, կրնանք ըսել նաև թէ կը գործէր աշխուժ մեր ազգին, ոգեւորուած կեանքին փոքրագոյութիւններով, իրրև փիլիսոփայ-բանաստեղծ։ Վասն զի շատ գործ կար բնելիք։ Իր ժամանակը խաղաղ չէին Կիլիկիա, Հայաստան, Գաղեստին։ Անիշխանութիւններու և կամ քաղաքիշխանութիւններու արհաւիրքին տակ հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը կը հաբաստահարուէր։ Կաթողիկոս մը չէր կրնար անգործ կենալ։ Նրուազագէմ միայն բաւական էր զինքն զբաղեցնել և գործունեայ վիճակի մը մէջ պահելու համար։ Եւ մեռագրական այն քանի մը յիշատակարաններ, զոր կրցած եմ մեռք բերել, իրենց համեստ արտայայտութիւններով շատ բան կը սորվեցնեն մեզի Թլկուրանցիի հայրապետական գործունէութեան մասին հանդէպ Երուսաղէմի։

Ա.— Ստանոյի (Անկիւրիոյ մօտիկ) Ս. Քառասնից եկեղեցւոյ Թիւ 2 Ձեռագիր Աւետարանէն։ Դժբախտաբար շատ խակ և գէշ գրչութիւն մը, գժուարընթեռնելի(*)։

—«Գարձեալ ես նուաստս Մկրտիչ Վարդապետս եղի զԱւետարանս յիշատակ ի Սուրբ Երուսաղէմ, ի թուին ՋՌՁ (= 1507). ի սոյն ժամանակի Տէր Յոհաննէս Կաթողիկոս Երուսաղէմի և սուրբ(?) Հոգն առ մեզ այն(?) անիրաւ բաներ որ անհաւատ գործաւք եպան. և իւր պա.(?) ի՞նչ յիրկարեմ մինչև զդրակալք ծածկոցն ի մեզ եկաւ(?) Եր (= 45?) չուրջան. Հոգեւոր Տէրն Թափիլոսի(?) յայնմ ինչուանն(?) էր թէ զամէն թափէք. մեք այլ զոր ի յիշատակ(?) Թուրվանտին եւ Տատրեանց, Վարդերգատրին եաւք յիշատակ ի Սուրբ յԵրուսաղէմ. մի՛ որ ի՞նչ հանել զդա անտի ո՛չ ի մերոց և ո՛չ յօտարաց, ու ով որ յանդնի, զրկի ի փառաց արքայութեան» (էջ 475 բ)։

—«Գարձեալ ծանիք մանկո՛ւնք եկեղեցւոյ որ զայս սուրբ Աւետարանս ի սուրբ Քառասնից դրանէն (այսինքն՝ Ստանոյի Ս. Քառասնից եկեղեցիէն) հանէ ծախելով կամ գրաւական դնելով, ինքն անիծեալ և որոշեալ լինի ի Հրեն խորհուրդ եկեղեցւոյն։—Գրեցաւ սայ ի թվին. Հայոց ՋԿԸ (= 1516) ի յառաջնորդութիւն Հայոց Տեառն Տէր Յոհաննէս կաթողիկոսին, եւ եպիսկոպոսութիւն Յոհաննէս Տէր զԱեսիանոսին, եւ ի քաղաքարութիւն Յուլթան Սելիմ Շահ փոքրիշահին. զոր Տէր Աստուած վայելել տացէ զիւր թագաւորութիւն. ամէն։ Եւ զդրաւոր յիշատակարանս զԱստուածատուր մեղաւորս յիշեցէք ի Քրիստոս միով Տէր ողորմիս և Աստուած զեզ յիշէ իւր երկնից սուրբ արքայութիւն. ամէն» (էջ 615)։

(*) Այս յիշատակարաններ ճոխութեամբ յառաջ բերուած են իրենց սխալներով եւ բերի ուղղագրութեամբ համաձայն բնագիրներուն։

digitised by A.R.A.R.@

Բ.— Հայէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ Ձեռ. Դանիէլեանք. թիւ 71, գրուած 2ԺԶ=1497ին «ի զաւն և անբարի ժամանակին». Տէր Աւագ քահանայի համար, Արարատցի վարդապետի ձեռքով, որ կ'բան իր յիշատակարանին մէջ.

—«Եւ արդ գրեցաւ սա ի քաղաքս Սուրբ Երուսաղէմս, ընդ հովանեաւ Ս. Յակոբոյ և այլ Սուրբ անաւրինականացս Քրիստոսի։ Յամս հայրապետութեան Հայոց Անանիա Կաթողիկոսի, եւ եպիսկոպոսութեան Տէր Մարտիրոսի, եւ քահանութեան Յովհաննէսի կուզ կոչեցեալ, եւ Մատաթիին, որ Սուրբ Յակոբայ գլուխն Նարոգեցին, եւ գնեցուցին հինգին, տուաք հիսաներիս. եւ փակեալ Սուրբ Յակոբայ Տէր Պարապետին. և սուլթանութիւն Մարայ ոչ որ կայր. զի մեծ սուլթանն սատակել էր, և որդի նորա ոչ կարէր թագաւորել. զի սակին թէ չէ արժան. այլ Աստուած ի բարին կատարէ. ամէն։

Արդ՝ որք հանդիպիք սմա, տեսութեամբ եւ կամ աւդտութեամբ ինչ իւիք, և ի պատկանաւոր խնդրուածս, զՏէր Աւամս և... յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն։

Դարձեալ ապաշեմ յիշել ի Տէր զՄարիամ մայրապետն մեր և որ ապատաւորէր մեզ կերակուր (=կերակրաւոր) և որ զԱմէնն ասէ, Աստուած ողորմի նոցա. ամէն։»

Գ.— Հայէպի Ս. Քառասնից եկեղեցւոյ թիւ 4 Ձեռ. Աւետարանի յիշատակարանը.

—«Փա՛ռք...Արդ շինեցաւ մեծապատ սոքա, գրեցաւ և ծաղկեցաւ ասասուածաշունչս սուրբ աւետարանս Քրիստոսի, ձեռամբ բազմամեղ եւ փոքրն անխմատս և անարժան և մեղապարտ զրչի նեռնէսի սուս, անուն երէց ի թվականիս հայոց ՉԿ (=1511), իշխաւոր կեսարիայ Պապազազկացւոց, ի գեաղզս որ կոչի Սպիրեա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Թէոդորոսի զինուորին։ Ա՛րդ ապաշեմ զամենեսեան որք հանդիպիք սմայ տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զմեղապարտ զրչս զնեռէս և զտատցոյս սոքա զՅովհաննէս կաթողիկոսն եւ զուսուցիչսն իմ զՅովհաննէս Նազարն եւ զնայրն իմ եւ զնայրն իմ զՅովհաննէս Ռահանան եւ զմայրն իմ զՅովլաքն եւ զեղբայրս իմ զԱստուածատուր եպիսկոպոսն եւ զմարմանն եւ զնայրապետն եւ զդեւապոյս ուղիս իմ և զամենայն սրեան մերձաւորքս իմ զկենդանիս եւ զհանգուցեալսն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զզծոցս զնեռէս եւ զտատցոյս զՅովհաննէս կաթողիկոս որ ասացս զսա ի նպալ աղդեանց իւրեանց յիշատակ անջնջելի եւ եղ յիշատակ անձին իւրոյ եւ ծնուցաց իւրոյ. զոր Աստուած փայլուսին ասացէ նմա ընդ երկայն աւուրս. Ամէն։—

Արդ ապաշեմ զձեզ ով սուրբդ հայրք և եղբարք որ խնամով պահէք զսուրբ աւետարանս Քրիստոսի ի մամ, ի ձիրէ և յամենայն փասաւ, և պահէք ի յեկեղեցի և կարդայք և յիշէք եւ յիշատակ առնէք գծոցաց և ասացոցաց և ամենայն մերձաւորաց մերոց, ողորմի առնելով կամ Հայր մեր յերկինս. Նայնպէս և ձեզ պարգևեսցէ զերկնից արքայութիւն ի Քրիստոս. և Քրիստոսի փառք յաւիտեանս Ամէն։

«— Ի թվականս Հայոց ՉԼԵ (=1525|6), աւետարանս գրաւորական էր ժե (=15) Ֆլրոյ վերայ։ Եւ Յովհաննէս կաթողիկոս տուի եւ ազատեցի՝ եւ եղի յիշատակ ինձ եւ ծնուցաց իմոց հոգոյն, ի Ռազամն Հայոց ի դուռն սուրբ Աստուածածնին (քերուած) եւ սուրբ Թադեոսին։ Ո՛վ որ հանէ կամ գրաւէ կամ ծախէ, գեռգոյի և գնայինի և գիսաչահանոգացն զմասն ընկալցի. և խնամով պահաւորքն աւրհնին ի Աստուծոյ և յամենայն սրբոց և ի մէնք. ամէն»։

Դարձեալ յիշեսջիք ի սուրբ ապաւթս ձեր զառաջնորդ Ռազամիս զեպիսկոպոսն և մի Տէր ողորմայի արժանի արարէք և Աստուած զձեզ յիշէ ի յիւր արքայութեանն. ամէն»։

Դ.— Ս. Յակոբայ գանձատան մէջ Կեռան Թադեոսի տիրոջոսով ծանօթ Ձեռագիր աւետարանը, մագաղաթ, արձաթագատ, գրուած ՉԽԱ=1272ին, ազատագրուած է Թլկուրանցիի ձեռքով։ Հետևեալ յիշատակարանը գրուած է նոյն ինքն Թըլկուրանցիի գրչով.

—«Զմիրջին սատանայ սուրբ սակեպատ աւետարանիս զՏէր Յովհաննէս կաթողիկոս Թուլկուրանցին ապաշեմ յիշել ի սուրբ յաղաւթս ձեր. որ ատանաս զասայ յիշատակ իւր ի հալալ արդեանց իւրոյ։ Եւ ես զասայ յիշատակ անջինջ որ կենայ ի սուրբ Յակոբս ասիսկան։ Արդ մի՛ որ իշխեսցէ հանել զասայ ի Սուրբ Յակոբայ կամ գողանալով կամ ծախելով կամ գրաւ գնելով։ Եւ որ յանդգնի և հանէ նայ զպատիժն կայրնի, և խնամով պահաւորն աւրհնի յԱստուծոյ և ի Սուրբ Յակոբայ. և որ սրտի մտաւք զմեզ յիշէ՝ յիշեալ լիցի ի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն։ Արդ գնեցի զսուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՉԼԲ (=1523), և եղի յիշատակ ինձ ի Սուրբ Յակոբս. արդ ով որ հանդիպիք սմայ կարդալով և տեսանելով կամ գաղափար առնելով, ի բերանով Աստուած ողորմի ասացէք Յովհաննէս կաթողիկոսին, և Աստուած ձեզ ողորմեսցի յահեղ սատանին, ամէն. եղիցի, եղիցի»։

Այս յիշատակարանները Հայէպի և Երուսաղէմի վերաբերեալ Ձեռագիրներու կը պատկանին, և այս իրողութիւնը իրաւունք կուտայ մեզի ենթադրել թէ Սիս շատ ազատով չէր Թլկուրանցիի կաթողիկոսութեան առնն, այնպէս որ բանաստեղծ կաթողիկոսը ուզի Հայէպ կը նստէր քան Սիս, և մասնն կ'գրագրէր Երուսաղէմի գործերով և սակայն անձամբ կուգար Ս. Քաղաքը ուղղակի անգայն վրայ ալ աշխատելու։ Եւ նոյն իսկ Կեռան Թադեոսի Աւետարանին յիշատակարանին վրայ հիմնուելով կրնանք ըսել թէ Թլկուրանցին իր վախճանումէն երկու տարի յառաջ Երուսաղէմ կը գտնուէր և հա՛ս իր իսկ ձեռքով յիշատակ գրաւ այդ Աւետարանը ի Սուրբ Յակոբս։

Այդ յիշատակարաններ նաև ցոյց կուտան թէ Թլկուրանցին իրրև կաթողիկոս Կիլիկիոյ, տէրն է նաև Երուսաղէմի աթոռին։ Տեսանք թէ վերև յառաջ բերուած Ա. Յիշատակարանին մէջ նոյն իսկ Կաթողիկոս Երուսաղէմի կոչուած է Թլկուրանցին։ Մենք տեսանք նաև թէ Մաս-

digitised by A.R.A.R.@

սարէկեան եւ Եւդոկացի Կարապետ կաթողիկոսներ ալ կ'գրագրէին Երուսաղէմի աթոռին գործերով. և գեռ պիտի տեսնենք թէ Կիլիկիոյ կաթողիկոսներ ինչպիսի ծառայութիւններ մատուցած են Սրբոց Յակոբեանց աթոռին։

Մեր յառաջ բերած յիշատակարանները ցոյց կուտան որ Թուլկուրանցին Ս. Յակոբի կղզոյ տուած (անշուշտ պարտատէրներու և հարստահարիչներու կողմէն) և ի վաճառ հանուած սրբութիւնները ազատագրած և վերադարձուցած է զանոնք իրենց տեղը. մասնաւոր ուշադրութեան արժանի են իր ազատագրած Ձեռագիր աւետարանները։

Առանձ ապացոյցներ են Թլկուրանցիին գործունէութեան նոյն իսկ իր յառաջացած տարիքին մէջ, որ ամէն կողմ կը վազէ իր պաշտօնին բերմունքով և գործ կը տեսնէ։

Ս. Յակոբի պատմագիր Աստուածատուր Եպս. Տէր-Յովհաննէսեանց, իր գործին մէջ (Ժամագրկն. Պտմ. Ս. Երազմի. տպ. 1890. հատոր Ա. էջ 251-254) տուած է աբաբերէն դատավճռի մը (Հէսսէբ) թարգմանութիւնը, որուն համեմատ Յովհաննէս Եպս. որդի Ղուկասու, իրեն տէրը Երուսաղէմի աթոռին, կարեւոր գործ մը կարգադրէ։ Աստուածատուր Եպս. այս «Յովհաննէս Եպս. որդի Ղուկասու» կ'ուզէ նոյնացնել Թլկուրանցիին հետ («Թերեւս իսկ Թուլկուրանցին»), առանց վկայութեան կանչելու այն խաչքարը, որուն յիշատակագրութիւնը գրինք վերեւ, որ ստուգիւ կը հաստատէ թէ Թլկուրանցիին հօր անունն է Ղուկասու, այլ թէ իրօք խաչքարին մէջ յիշատակուած Յովհաննէս կիպս. և Աստուածատուր Եպսկ. թարգմանած աբաբերէն դատավճռին մէջ յիշատակուած Յովհաննէս որդի Ղուկասու միևնոյն անձն՞ն են։ Օրմանեան չընդունիր այս նոյնացումը միայն այն առաջարկութեամբ թէ «Ուրիշ տեղ այսպիսի յիշատակ չկայ, և առ առաւելն Կիլիկիայէ նկող Յովհաննէս եպիսկոպոսի մը կրնանք պատշաճեցնել այդ ակնարկը» (Ազգպտմ. էջ 2235)։ Եթէ Օրմանեան ծանօթ ըլլար վերոյիշեալ խաչքարի յիշատակագրութեան, չենք գիտեր թէ պիտի հաւանէ՞ր Աստուածատուր Եպսկ. քերեւսին։

Ինդիրը քիչ մը աւելի մօտէն ուսումնասիրելով, Յովհաննէս կիպս. և Յովհաննէս Եպսկ. նոյնացումը անհնար թուեցաւ մեզի երկու դժուարութիւններով։ Առաջին, աբաբերէն վճռագրին մէջ «Յովհաննէս եպիսկոպոս որդի Ղուկասու» է և ոչ թէ «Յովհաննէս կաթողիկոս որդի Ղուկասու»։ Կարելի չէ որ կաթողիկոս եղող մը՝ դատարանի առջեւ ներկայանար իրեն եպիսկոպոս։ Եթէ պահ մը ենթադրուի թէ քանի որ «Յովհաննէս» անունը նոյն է թէ՝ խաչքարին և թէ վճռագրին մէջ, և թէ երկուքին ալ հօր անունը «Ղուկաս» է, ալ «կաթողիկոս» կամ «եպիսկոպոս» շատ տարբերութիւն չ'ըներ, այդչափ բարակը պիտի չփռուէին սրբոց դատարանի մը մէջ, ասոր գէմ սակայն, երկրորդ դժուարութիւնը երեւան կուգայ, այսինքն Թլկուրանցին վախճանած է 1525ին, մինչ վճռագրին մէջ «Յովհաննէս որդի Ղուկասու» ողջ կ'երեւի, և անեմամբ յայտարարութիւններ կ'ընէ դատարանի առջեւ մինչև 1529ին և 1532ին։

Այս երկու դժուարութիւնները հարթելու համար միայն սա՝ ենթադրութիւնը կարելի է ընել. քանի որ Թլկուրանցիին յաջորդն ալ Յովհաննէս մըն է, ինչպէս պիտի տեսնենք, կրնանք ենթադրել որ Թլկուրանցի Յովհաննէս, որդի Ղուկասու, դատը սկսաւ Երուսաղէմի դատարանին առջեւ, բայց ինքն մեռաւ 1525ին, և իրեն յաջորդը, Քիլիսցի Յովհաննէս Գ. Կիպս. շարունակեց սկսուած դատը, իր նախորդին անունով, և վերջապէս շահեցաւ զայն։ Օրմանեանի առաջարկած պատշաճեցումը պատմականապէս անհնարութիւն մը կը մնայ, ցո՛ւցուի չի բացատրուիր թէ ո՛վ է Կիլիկիայէ եկող Յովհաննէս եպիսկոպոս մը, որ Երուսաղէմի աթոռին գործերուն կը խառնուի իրեն անունց պատասխանատուն, և ինչպէս պիտի տեսնենք, փոխանցումներ կ'ընէ դատարանի առջեւ, իրեն տէրը Սուրբ Յակոբայ աթոռին։ Եթէ օր մը, շնորհիւ ուրիշ վաւերագիրներու, հաստատուի մեր ենթադրութիւնը, այն ատեն պիտի ապացուցուի ինքնին թէ Յովհաննէս Թլկուրանցին շատ մեծ ծառայութիւն մը բրած է Ս. Յակոբայ աթոռին, ազատելով զայն աշխարհական վաղխառուի մը և հարստահարիչի մը ճիրաններէն։

Բան Աստուածատուր Եպսկ. պատմութեան դատարան ինկած խնդիրը հետեւեալ կերպով կը ծագի.

Թերայիցի (Եգիպտոս) Դէորգ անուն մէկը, որ Երուսաղէմ կը բնակի, փոխանորդը կամ գործակատարը կ'ըլլայ Ս. Յակոբին։ Այս մարդը ծանրը տակոններով շատ մը գրամներ փոխ կուտայ թէ՛ Ս. Յակոբի միաբաններուն և թէ՛ քաղաքացիներու, կը յաջողի վանքին կառավարութիւնը ձեռք անցընել, տիրել վանքին կահկարասիներուն, կալուածներուն, եկամուտներուն վրայ, և վարել վանքին արտաքին ու ներքին գործերը։

Երբ Յովհաննէս Երուսաղէմ կուգայ և կ'անցնի իշխանութեան գլուխը, միաբը կը դնէ վանքը ազատել Թերայիցիի ձեռքէն. վաշխառուն կը կռահի իր գլխուն գալիքը և կ'սկսի աւելի ևս բռնանալ։ Յովհաննէս կը համբերէ ատեն մը ալ, միաբանութիւնը կը համոզէ և կը շահի իր կողմը, և վերջապէս Թերայիցիին բոլոր պահանջները կը վճարէ և անոր ձեռքէն կ'ազատէ Ս. Յակոբին կահկարասիներն ու սրբազան անօթները, և չորս արաբախօս վարդապետներու ընկերակցութեամբ դատարան կը տանի Թերայիցի Դէորգը, որ կը յայտարարէ դատարանին առջեւ թէ իր բոլոր պտտանիները ստացեր է և Ս. Յակոբին բոլոր ինչքերը վերադարձուցեր է Յովհաննէս եպիսկոպոսին, և այլեւս ոչ առնելիք չունի։ Դատաւորը գրի կ'առնէ Թերայիցիին յայտարարութիւնները. կը վաւերացնէ և կը յանձնէ Յովհաննէս եպիսկոպոսին։ Այս պաշտօնագրին թուականն է ՉՂԷ (=1517)։

Յովհաննէս եպիսկոպոս վանքէն կ'արտաքսէ

digitised by A.R.A.R.@

թերայիցին, բայց սա հանդիսա չի կենար, և հակառակ իր խոստման ինչ ինչ անօթներ վաղ դրած ըլլալով՝ չ'ուզեր յանձնել զանոնք կը ջանայ խոսիլ միաբանութիւնը։ Եթէ սարի կը սեղմայս խոսվայոյզ վիճակը, և վերջնականապէս Յովհաննէս եպիսկոպոս այս անգամ խնդիրը երկու արարագէանները, Մկրտիչ եպիսկոպոսին և Մանուէլին, որոնք դատի կը քաշեն թերայիցին երկրորդ անգամ և կը պարտաւորցնեն զայն և կ'առնեն ինչ որ մնացած էր վաշխառուին քով։ Դատարանը նոր վճռագրով մը կը հաստատէ դատավարութեան արդիւնք ՀՅԱ (= 1524) ին։

Խաչատուր եպս. որդի Ապուռլլահի (= Առաւուծատուր) կը թուի թէ Երուսաղէմցի է ընդի, իսկ Մանուէլ, որդի Ղանէմի, բա Առաւուծատուր եպիսկոպոսի թարգմանը կամ գրագիտարն է Լատինաց վանքին, որոնք դատ բացած և Բեթղեհէմի անունով ուխտաւորներէն գանձուած տուրքի խնդիրն ալ կարգադրել կուտան։ այսինքն դատարանով որոշել կուտան թէ իւրաքանչիւր ուխտաւորէն քերիական երկու արծաթ դրամ միայն պիտի առնուի և աւելին պահանջելով պիտի չնեղեն ուխտաւորները։

Յովհաննէս եպսկ. ատեն, Խաչատուր եպս. և Մանուէլ 5000 դահեկան ծախելով նորոգել և ամրացնել կուտան ձիթենեաց լիքն դիրք համբարձման տաճարեղոյն եկեղեցոյն խախուտ գմբէթը ՀՅԳ (= 1529)։

Իսկ Յովհաննէս եպս. իր գանձարքական իրաւունքներն ու իշխանութիւնը իր իսկ յաջորդ կամքով կը փոխանցէ Մերտինցի Առաւուծատուր եպսին։ Իր փոխանորդը Խաչատուր եպս. ալ իր Միքէլլիի իրաւունքը կը փոխանցէ Առաւուծատուր եպսին։ Այս գործարքները պաշտօնապէս կը կատարուի դատարանի առջև և դատական պաշտօնագիրով ՀՅԲ (= 1532) Բ.ՀՀ.դի. Լին։

Եթէ Թլկուրանցի՛ն է Ս. Յակոբի գրքերուն վարիչը և ատենց եւսեր կեցողը, անձամբ ու յաջորդով, այն ատեն ինքնին կը տեսնուի թէ բաւական ժամանակ և կարգով նուիրած է բանաստեղծ կաթողիկոսը Երուսաղէմի համար, ծառայութիւն բուսելու արժանի փառաւոր գործունէութեամբ մը։

Ինչպէս որ կը տեսնուի, Թլկուրանցի կաթողիկոսին կեանքը, գրեթէ անծանօթ կը մնայ։ Իր վախճանումը տեղի ունեցած պիտի ըլլայ 1525ի Մայիսէն յառաջ Վահկայի մէջ, որովհետև կ'ըսուի թէ հո՛ն թաղուած է (Միսուան, էջ 535բ)։

Բ. Ե.

ՈՒՂԵՐՁ

Մատուցուած Գարակ-Հնդկաստանի թեմի Հայոց Առաջնորդ Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոսին, իւր Սուրաբայա (Ջաւա) խաղամբ մուտքեր օրը, 3 Ապրիլի 1928, Տեղական Ազգային Վարչութեան նախագահ Գրն. Հայրապետ Յակոբեանի կողմից։

Նորին Բարձր Սրբազնութեան
Տ. Մեսրոպ Արքեպս. Տէր-Մովսիսեան
Մագիստրոս
Բարեխնամ Առաջնորդի Թեմին Հայոց
Գարակ-Հնդկաստանի
Ասա

Գերապատիւ Հայր,

Թոյլ տուեցէք, խնդրեմ, քաղաքիս Հայ Հասարակութեանն կողմից մատնելու Ձեզ բարի գալուստ այս գեղեցիկ կղզւոյ հիւրընկալ ափերը։

Սուրաբայայի Հայ Հասարակութիւնը, որ քաղաքս գաղթ ուելի է որ բախտ չէ ունեցել ընդունելու իւր թեմական Ս. Առաջնորդներին, այսօր երջանիկ է զգում իրեն որ բախտ է ունենում ընդունելու իւր մէջ իւր սիրեցեալ թեմական Սրբազան Առաջնորդին, որը արհամարհելով երկար և տաժանելի ճանապարհորդութիւնն ի սէր իւր տարագիր հօտին, բարեհաճել է այցելել նաև այս քաղաքը և մխիթարել իւր հօտին թէ հոգեպէս և թէ աղգայնապէս։

Սուրաբայայի Հայ Հասարակութիւնը, իրրև հարազատ զաւակներ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, ողջունում է Ձեզ իրրև ակնառուոր միաբանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իրրև արժանաւոր ներկայացուցչի Ամենս. Հայոց Վեհ. Հայրապետի, որը իւր հետ բերել է իւր պանդուխտ զաւակների համար Մայր Աթոռի և նորա արժանաւոր Գահակալի հովուապետական օրհնութիւնները և մեր վերաշինուող Հայրենիքի մխիթարական և սրբատանդիչ լուրեր։

Սուրաբայայի Հայ Հասարակութիւնը, ողջունում է Ձեզ իրրև բարեխնամ Առաջնորդի Գարակ-Հնդկաստանի Հայոց ընդարձակատարածուալ Թեմի և իրրև արժանաւոր Աթոռակալի հռչակաւոր Ս. Ամենափրկիչ

digitised by A.R.A.R.@

վանքի, որը բերել է օրհնութիւնները նոյն թեմի նուիրական վայրերից և բարեւներ մեր Գարեգահայ հայրենակիցներից։

Քաղաքիս Հայ Հասարակութիւնը ուրախանում է Ձեզ իբրև մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան ականաւոր եւ հայ հոգեւորականութեան լուսաւոր աստղերից մէկի, որը իւր քառասունամեայ բեղմնաւոր և օգտակար գործունէութեամբ ամենապատուաւոր տեղ է գրաւել մեր ազգի նորագոյն պատմութեան մէջ։

Դարձեալ մաղթելով Ձեզ բարի գալուստ, յոյս ունինք Ձեր այցելութիւնը մեր քաղաքը կը լինի ըստ ամենայի հաճելի եւ լիշատակելի։

Համբուրելով Ձեր օծեալ Աջը, աղաչում ենք Արարչից երկարելու Ձեր թանկագին կեանքի թելը պարգեւելու Ձեզ առողջութիւն, այժ և եւանդ՝ դեռ երկար տարիներ շարունակելու Ձեր նուիրական առաքելութիւնն և իրագործելու Ձեր վսեմ ծրագիրները հայրենի աշխարհի և եկեղեցւոյ բարգաւաճման և պայծառութեան համար։

Խորին ակնածութեամբ պատիւ ունիմ

Մնալ

Ձեր Բարձր Սրբազնութեան

ամենախոնարհ ծառայ

ՀԱՅՐԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆ

Նախագահ Տեղական Ազգային Վարչութեան

Սուրաբայա, Ջավա
3 Ապրիլ 1928

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄԻ ԱՍՈՐԻՔՈՍ

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻՆ

(Շարունակութիւն)

Զամենա՛յն սուգ տեսանէ անդ։ Ցաճախեն առաջի տեսողաց պէ՛սպէս ողորմ տեսիլք։ Եթէ առաջին ոգոյն յաղթէ, յերկրորդէ՛ անտի պարտի։ Եւ եթէ յերկրորդէ անտի փախչի, յերրորդէ անտի ոչ զերծանի։ Պատեն զնա բիւր սուգք, ծնուցանե՛ն ի նմա բիւր ողորմս։ Քանի՛ իցէ զաւրութիւն ոգան, մարտնչել ընդդէմ արտասուաց, ի մէջ հասակաց պէսպէս չափոց եւ ազգի ազգի դիականց։ Քանի՛ արկ սանձս ի գութս արդելուլ զնոսա ի լալոյ։ Եթէ ծերքն ոչ լացուցանեն, մահ անմեղացն չարչարէ՛ զքեզ։ Որպէս ցանկալի են կեանք նոցա, ողո՛րմ են մահք նոցա։ Եթէ մահ ուղիղ դառն է իրրև պատուով մեծարի, քանի՛ եւս դառն է սուգ որ հեղձեալ են յամենայն կողմանց։ Մեծ է քան զտեղի այն սուգն մեծ որ է(1) ի նմա։ Զի՛ք անդ մխիթարութիւն որ ջնջէ զարտասուս յաչաց։ Դա՞ռն է մահ ազգոյց, սաստիկ է սուգ երիտասարդաց։ Ծեր որոյ չէ խիստ սուգ իւրեանց, յո՛յժ ողորմք են զի հեղձեալք են։ Եւ եթէ թողցես զմարդիկ այն, և դարձցիս առ չինուածս, ողո՞րմ մնաս լոց նմանեն, իրրև զմեռեալս անկեալ ըստ մեռելովք։ Եւ եթէ նայեցիս ի քաղաքն, նմա՞ն է ամենեւին թաչնոց, որ նստէր ի վերայ ձագուց եւ հեղձուցին զնա եւ զբնսիրելիս իւր։ Ո՞ առնոյր տայր նմա զերեսմիայ, որ ողբոյրն զդուսաբ Սիոնի։ Որդի՛ն Բեղկեայ պիտոյ էր նմա պատմել ըստ նմանէ ողբովք իւրովք։ Ողորմ ձայնիւք յաղեաց, արա՛ր ողբս դառնութեան։ Բերան որ քաղցրացաւ սուրբ հոգւոյն, դառնութի՛ւն արբուցանէ ձայնիւ։ Ի մեզ նոցա, քաղցրութիւնն ի դառնութի՛ւն դարձեալ լինէր։ Մարգարէք բղխմանք քաղցրութեան, դառնութի՛ւն արբուցանէին ի բարկութեան։ Դառնացաւ բղխումն երեմիայի, զի դառնացաւ որթն քաղցր։ Ինքն իսկ ասաց, թէ զիա՞րդ դառնացաւ որթդ քաղցրութեան(1)։ Եւ քաղաք որ կործա-

(1) Է յաւելուած արբագրչին։

(1) Հմմտ. Երեմ. Բ. 21։

digitised by A.R.A.R.@

նեցաւ, դառնացաւ եւ դառնացո՛յց զբաղումս։ Եղեկիէ՛լ պիտոյ էր նմա, որոյ քաղցր էին յոյժ նուագք իւր։ Քնար քաղցրը համարեցան զնա, որզիք ազգին վասն ձայնի նորա։ Ցաւեալս ոգիս եւ առակս ի վերայ արծուեաց եւ առեւծուց, թագաւորք ազգին որ պարտեցան ի թագաւորաց որ չուրջ զընդքաւք։ Առեւծունք պարտեցան ի Բաբելացւոց եւ յեգիպտացւոյ։ Ողբացա՛ւ զՄուբ պատկեալ որ անդաւակեցաւ ի բնակչաց։ Քանի՛ եւս լայր զմայրն որ հեղձաւ սիրելեաւքի(1) իւրովք։ Եթէ զչբռայլեալսն այնպէս ելաց, քանի՛ եւս առաւել զցաւծուն այն։ Ի Մուբ էր լիութիւն ազգեղի, եւ ի նմա սրբութի՛ւն ծանր։ Դատերք Մուբայ զոռնիկք էին, եւ նոքայն ո՛չ ամուսնացան։ Ի մէջ Մուբայ ազգեղութիւն, եւ ի մէջ նորա կուսութի՛ւն։ Ի Մուբ կռապաշտութիւն բնակեալ էր, եւ ի նոսա եկեղեցի՛ սրբութեանն։ Եթէ զչբթեալն ողբացաւ, քանի՛ եւս ըզմայրն ցաւծոց։ Նա պատմեաց զսուսերէ, եւ կոտորէ զարդարս եւ զմեղաւորս։ Ինքն իսկ ուսերն ել եկեր զսուրբս եւ զպիղծս։ Պիտոյ էր նմա Դաւիթի որ ազգաց զնուազ եւ զՅոնաթանն։ Եւ անդ նոյն ինքն սուսեր էր, որ կոտորեաց զարարիս եւ զչարս։ Յոնաթանն լի սիրով մեռաւ ընդ Նաւուղի հալածչի։ Սաացաւ(2) Դաւիթ սէր յատակ, եւ ընդ սիրոյ ան ձա՛յն քաղցր։ Յորգէր սէր եւ լալո՛ւն իւր։ Քաղցր ձայն եւ ողո՛ւմ ողբ իւր։ Սուգ զսէ՛ր յորդէր։ Երկոքին զձայնն զրդէին։ Վասն սոցին այսոցիկ եւ ի ձեռն սոցունց ողբայր որդին Յեսսայ։ Լա՛յր զնա որպէս ելաց զԱբեսաղովմ։ Եթէ զապստամբն ելաց, քանի՛ եւս լայր զերկրպագուս։ Եթէ զԱբենները ներեաց ելաց, քանի՛ եւս ողբայր զպարկեշտսն։ Եթէ զսպանեալն ելաց, քանի՛ եւս լայր զկեղծեալն։ Եթէ զբթեալսն ողբացաւ, քանի՛ եւս առաւել զքարկոծեալսն։ Ո՛ տայր մաւտ զԱղովմոնն, զի յառակս իւր հանէ՛ր զձառս նորա։ Դանիէ՛լ պիտոյ էր նմա, զի խորհո՛վ լացցէ(3) զնա։ զՅակովբ ո՛ տայր մաւտ առ նմա, զի նա գիտէր հեծել ընդ նորա։ Այս մարգարէք որք ունէին նուագս եւ ձայնս ողբմս, ողբացին զքաղաքս կործանեալս, ողբացին զքաղաքս քանդեալս։ Երեւելի քաղաքք որ անկան եւ բարեշէնք որ կործանեցան վայելէր զի լացցեն զնա։ Զի ըստ կարեաց նորա, եւ լալի՛ք իւր։ Այսպիսի աւագանեալ աւրէն էր լա՛լ զբեկու�նորա մեծ։

Զտեր Ներսես զերսամիտ անձն եւ տիեզերական վարդապետ յիշեցիք ի Քրիստս Յիսուս, եւ զմեղուցեալս Յոհաննես, աղաչեմ։

ԻՆՆԵՐՈՐԴ· ՎԱՄՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ ՓԱՂԱՔԻ ԵՒ ՎԱՄՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մի լինիք՝ ապաստան յայս, թէ եղեալ է աւրհաս մարդոյ։ Քանզի յայսմ խորհրդոյ(1), ծուլութիւն ծնանի մեզ։ Աւրհաս միշտ առ դուռս կայ։ Հրամանն որ ամենայնի իշխէ, նոյն հրաման յանկարծակի ա՛ռ զոգիս բազմաց։ Յապահով էին իբրեւ զմեզ, եւ եհաս ժամանակ՝ նոցա տագնապ։ Մեռան վաստակաւորք եւ ժրագրելիք, մի մի ի զործ իւր։ Մեռաւ դաբրին մինչդեռ կայր առ բովս, որ լի՛ է խորհրդովք։ Ի մէջ բովոց իբրեւ ի մարտի մարանչին հուր եւ երկաթ։ Հուր որ յաղթէ խստութեան, ի ջրո՛յ յաղթեալ լինի։ Յաղթէ նա խստութեան, եւ յաղթէ՛ նմա կակղութիւն։ Մարանչին բնութիւնք ի հուր, մի յընկերէ(2) իւրմէ պարտի։ Պարտին ամենեքին ի մարդոյ, մարդ պարտի ի մահուանէ։ Ի վախճանի յաղթէ յաղթութիւն, զի նմա՛ վայել է պակուն։ Մեռաւ հիւսն մինչդեռ բեւեռէր, անդէն ի յաւդելն իւրում լուծաւ։ Ի կազմելոյն նորա, առցուք աւրինա՛կ զյարութեան նորա։ Զի թէ(3) նա ուսաւ յաւդել եւ բեւեռել, կազմել եւ յաւրինել, քանի՛ եւս կարիցէ տէր նորա յաւդել զանդամս իբրեւ զարարիչ։ Այն որ ետ զայս մարդկան, քանի՛ եւս մեծ իցէ քան զպարգեւն իւր։ Մեռաւ արուեստաղէտ ի վերայ հանդերձից, մինչդեռ կցէր

(1) Երկոսոց և յաւելեալ ի վերայ տողին ի ձեռն ուղղչին։

(2) Օր. ուղէր՝ սաացա, յոր յաւելու ուղղիչն։

(3) Օր. զբեալ ուղէր լացէ յեսոյ ուղղեալ։

(1) Օր. վրիպակաւ ունի՝ խորդոց, յորոյ վերայ դնէ ուղղիչն՝ հր։

(2) Օր. գրէ՝ յենկերէ։

(3) թէ յաւելուած ուղղչին ի վերայ տողին։

digitised by A.R.A.R.@

զբպատուածս[1]։ Ծածկեալ է մխիթար ի գործ իւր, զի խորհո՛ւրդ յարութեան ի գործ նորա։ Զի թէ արուեստագէտ կարաց միաբանել զձեւածս[2] բաժանեալս, քանի՞ եւս կարող իցէ կենդանուն միաբանել ըստ ունչ եւ զմարմին։ Նկարեալ են ծածուկ խորհրդով, ի զո՛րծ մեր վասն յարութեան։ Եւ առաքեալ ի սերմանէ՛ յաւդեաց առակ զյարութեան։ Բայց ոչ տա(յ) թոյլ մոլորութիւն տեսանել զխորհուրդս որ առաջի կան, զի առ զմեզ ի խորհրդոցն, եւ վարեաց առ ստացուածս հակառակ մեզաց։ Բարբառ քարոզէ զյարութիւն, զի զիտէ թէ երկեցուցանէ բարբառ դատաստանի և արդարացուցանէ։ Գիտէ դարձեալ եթէ յորդորէ զմեզ խոստումն այն եւ փութացուցանէ։ Վասն այնր՝ սերմանէ ի մեզ չարն յուսահատութի՛ւն յարութեան։ Զի մի խոստմամբն արդարացուք, եւ մի ի դատաստանէն ազատեսցուք։ Արձակեցէք ասէ զբերանս ձեր, ճարակեցայք զճարակ մինչ կենդանի էք։ Դարձցուք ի ճառն մեր առաջին, զի ի ճառէ ի ճառ փոխեսցաք։ Առ սակաւ սակաւ հեռացաք, արագ արագ մաւանեսցո՛ւք։ Զի բարկութիւն այն արագ արագ սատակեաց։ Մեռաւ նկարիչ մինչեւ նկարէր, ի վերայ կազմածին իւրոյ եղծաւ։ Մինչ զարդարէր զնկարս, ապականեա՛ց մահ զնկարս նորա։ Արուեստ նորա հայելի է, նկարեա՛լ ի նմա խորհուրդ յարութեան։ Զի եթէ նա յերանդոց նկարեաց պատկեր որ ոչ էր, քանի՞ եւս զիւրին է ամենահատնին[3] ի հողոյ եւ ի փոշւոյ նկարել զպատկերն որ եղծան։ Երանկք[4] դուզնաքեայք, լինին նկա՛րք ի ձեռաց մարդկութենէ, քանի՞ եւս զիւրին է Աստուծոյ նորոգել զպեղն որ մահացաւ։ Եթէ նկարիչ նկարէ նոր, քանի՞ եւս նորոգէ նա զհին այն։ Ուր մահկանացուն առնէ զայսոսիկ, քանի՞ եւս արասցէ Ամենակեցոյցն։ Մահկանացու քան զի մահկանացու է, ո՛չ նկարէ պատկեր կենդանի։ Զի եթէ պատկեր կենդանի նկարէր, ինքն իսկ զլեսովին ո՛չ մեռանէր։ Աստուած իրեւ զամենակեցոյց զո՛ր պատկեր եւ նկարէ, կենդանի՞ է։ Ցրտութիւն ոչ է[1] կարող ծնուցանել զեռուն կենդանի, զի նմանութի՛ւն է մարդկութեան որ ոչ կարէ կեցուցանել ինչ։ Զերմութիւն աբրնակ է ամենակեցոյց զաւրութեան այն։ Թէպէտ եւ յոյժ նմանէ հեռի է, զի տկա՛ր է քան զհաստիչն իւր։ Զեռուցանէ արեւ զջուր, եւ բղխէ զեռուն կենդանի։ Ոչ յորժամ հպի ամենակեցոյցն առ ինչ յոյնժամ կենդանի առնէ, ակնարկել կենդանի կամելոյ նորա կեցուցանէ՝ զմեռեալս յանկարծ։ Ունի զերկոսին կամել նորա։ Իշխա՛ն է մահու եւ կենաց։ Եթէ հպիլ նորա կեցուցանէ, ա՞ղ կեցուցանէր կամել այն։ Զի զոր ինչ ունէր ի բնի իւրում, ի ձեռն հպելո՛ւն ապատէր զնա։ Եթէ ոչ է կարող[2] կամել նորա, զի՞ւրդ ապանանէ կամ կեցուցանէ։ Կարող է առնել զերկոսին, զի ա՛ղ զմի ունի։ Լինի մեզ լուսին վրկայ, զի ո՞ղ ունի զխաւար եւ զլոյս։ Ոչ կարէ ունել զերկոսին, զի զմի ունի բնութեամբ։ Լոյս կապեալ բնութեամբ որ ա՛ղ իշխէ կամաց իւրոց։ Հրոյ բնութիւն իւր ջերմ է, ա՛ղ է կարող հովացուցանել ինչ։ Զերմութիւն է բնութեան, որ զբրկեա՛լ է յազատութենէ։ Ո՞ղ կարէ եւ[3] քաղցրութիւն դառնացուցանել զբերան կերակրոցաց իւրոց։ Բեւեռեալ է համ իւր ի բնութեան իւրում, զի ոչ է[3] արձակ իշխանութիւն իւր։ Իսկ հաստիչ այն ա՛ղ այապէս։ Ամենայն ինչ է կամե՛ն նորա։ Զի հաստատեաց եւ կացոյց կամելն նորա զամենայն ինչ յոչնչէ։ Ստացեալ ունի զամենայն ինչ, զի մեկի՛ն են նմա ամենայն ինչ։ Ո՞ղ բաւանդակին թիւք մի աւուր կամելոյն նորա։ Ո՞ղ բաւանդակին ճաշակք նորա, իբր ոչ ճաշակի բնութեամբ իւրով։ Այս է ճաշակ իւրաւ զիտաւնս, զի զիտացեն զնա թէ ամենայնի իշխէ։ Տուն գանձու է նա ճաշակաց, կարիքաւոր զքաղցր եւ զդառն։ Դառնա[յ] եւ դառնացուցանէ զքաղցրութիւն, եւ քաղցրացուցանէ՝ զդառնութիւն։ Զիք անդ բնութիւն կապեալ, զի չիք որ բանադատէ զկամս նորա։ Զբկապեալ բնու-

(1) Բառս պատուած=պատաւուած չիք ի բառգիրս, սակայն հաւանական կարծեաց է լոկ վրիպակ գրչի։

(2) Գակաստ ի բառգիրս։

(3) Ի բառգիրս չիր։ հաւանականութեամբ վրիպակ գրչի = ամենահատչին։

(4) Այսպէս յօրինակին։

(1) Ցաւելուած ուղղչին ի վերայ տողին։

(2) Ուղղիչն յաւելու ո ի վերայ տողին։

(3) Ցաւելուած ուղղչին ի վերայ տողին։

digitised by A.R.A.R.@

թիւն նա՛ բեւեռեաց։ Զարձակ բնութիւն, նա՛ թողացոյց։ Կապեաց զարձակ բնութիւն որ վնասեցա՛ւ ի լուծութեան իւրում։ Կին այն կին արդարոյ, լոյծ եւ իշխան էին կամք իւր, արար զնա ազարձան, բնութիւն կապեալ արար զնա, զի եղիցի երկնչել(¹) ազատութիւն մեր, զի մի կապեսցէ զնա որ արձակն արար եւ զբնութիւն կապեալ։ Եղեւ գաւազանն աւծ եւ խաղաց, զի կապեալ բնութեամբն զար եւ լոյծ, երկեցուսցէ զմիտս արձակս։ Բայց այլք եւս ի միջի, ահա չփոթե՛լք են եւ բազումք։ Քաղցրացոյց զնուրս զանին, եւ եւ լոյծ եւ փոխեաց զդառնութիւն։ Ի զառնանալն(²) եւ ի քաղցրանալն զնոսին եւ զնոյն ջուրս փոփոխեաց։ Զի ակնարկեաց եւ եղեն դառինք, եւ ակնարկեաց եւ եղեն քաղցո՛ւնք։ Եւ ոչ ակնարկելով պաշտի, զի կամելո՛վ առնէ զամենայն։ Քաղցրացոյց զդառնութիւնն, զի ուսցի ժողովուրդն դառն, թէ զաւրութիւնն որ յապթեաց բնութեանց։ բարկացուցանէ՛ն կամք իւրեանց։ Զաւրութիւն որ բռնագատէ զբնութիւնս, ոգոքեա՛ց յանապատին զազատութիւն։ Ընդէ՞ր ոչ քաղցրացոյց բռնութիւն իւր զդառնութիւն ազատութեան։ Ոչ չփոթեաց զյաւրինուածս զիտակ այն որոշմանց։ Այլ բնութիւնս եղոյց զբնութիւնս, եւ առ ազատութիւնս զխոստմա՛ւնս պարգեւի։ Զբկամս քանզի ազատ է, խոստմա՛մբք ոգոքէր։ Զբնութիւն իրրեւ գծառա՛յ վարէր զնա բռնութեամբ։ Եւ եթէ կամք մեր, իւրովին ոչ արդարանայ, դատա՛րկ է։ Զի զբկեալ է ի շահէ, որ բղխէ յազատութենէ իւրմէ ի նմա, զի մի կարծեսցուք զԱրարչէն թէ ոչ կարէ տալ զազատութիւն։ Եւ խոստումն զթութեամբ իւրով, զի ցուցցո՛ւք մեք զբկամս մեր։ Ընդոստուցանէ զմիտ եւ բռնութեամբ, զի թաքոյց զոյժ իւր ազատութիւն մեր։ Դայ բարկութիւն յանդիմանէ զնա, ցուցանէ՛ զոյժն որ ծածկեալն է ի նմա։ Եթէ կայ գաւազան ի վերայ գլխոյ, ժողովէ՛ ժբրութեամբ զարմանս իւր։ Յորժամ բախէ բարկութիւն զդբբունս նորա, երեւի՛ ոյժ իւր առաքինութեամբ։

Հրապարակեաց Ֆ. Ց. Մ.

(¹) Օր. ունէր՝ կնչել, զոր ուղղէ սրբագրիչն զբնելով եւ ի վերայ բառիդ։
(²) Օր. ունի վրիպանօք՝ ի դառնալն։

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը Ս. Յակոբի մէջ մասնաւոր հանդիսութեամբ կը տօնախմբուի. որովհետեւ աւանդօրէն այնպէս ընդունուած է թէ Տեառնեղբայր Յակոբոս Առաքեալ, որ առաջին եպիսկոպոսն է Երուսաղէմի եւ միանգամայն պաշտպանը Ս. Աթոռոյ, իր առաջին պատարագը մատուցած ըլլայ Գայծառակերպութեան տօնին։ Այս պատճառով, Շարթի երեկոյ, կիրակմոտ ժամերգութենէն ետքը, նախատօնակ ալ կը կատարուի եւ Քրիստոս Աստուած մեր մաղթանքին մէջ յատկապէս կը յիշատակուի Տեառնեղբօր անունը։ Այս առանձնութեան յիշատակին, Երուսաղէմի մէջ վարդավառի տօնին հանդիսապետն ու պատարագիչն է Սրբոց Յակոբեանց Աթոռին Ամենա. Ս. Գահակալը։ Այս պատարագի յիշատակին է նաեւ որ կիրակի առաւօտ կը հաղորդուին ժառանգաւորաց վարժարանին բոլոր ուսանողները։

Թէ՛ միաբանութեան եւ թէ՛ ժողովուրդին համար անխառն հրճուանքի պարագայ մըն էր որ Ն. Ամենա. Սրբազնութիւնը, Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան, երկու տարիէ ի վեր, իր հիւանդութեան հետեւանքով կ'զգուշանար ծանր յոգնութիւններէ, եւ այսօր, առաջին անգամ կը կարողանար Ս. Պատարագ մատուցանել եւ միանգամայն Ջեռնադրութիւն կատարել երկու արժանաւոր երիտասարդներու վրայ, աւելցնելով Գայծառակերպութեան տօնին շուքը իր օրհնաբեր հանդիսաւորութեամբ։ Այս յոգնութիւնը նոյն առնն առիթ մը եղաւ փոքրձելու Ն. Բ. Սրբազնութեան վերահաստատուած ցանկալի առողջութիւնը, եւ շատ ուրախ ենք որ այս բարդ պաշտամունքներու պատճառած պարտաւորութիւններու մէջէն արի եւ զուարթ հոգիով դուրս ելաւ Ս. Պատրիարքը։

Հայ հեթանոսութեան յուշերէն մէկը, իբրու վրայ ջուր սրսկելու արարողութիւնն ալ մնացած է Ս. Յակոբի մէջ։ Հայ ժողովուրդը՝ Զրազատիկ սիրուն բառով կը բացայայտէ Վարդավառը, եւ Վարդավառին անպատճառ իրարու վրայ ջուր սրսկելու առիթ մը կը գտնեն Հայեր, թէեւ այլեւս զբօսանքի եւ կատակի ձեւին տակ։ Բայց հոս, Ս. Յակոբի մէջ, Վարդավառի առաւուն, Անդաստանէն ետքը, Ս. Աթոռոյ Լուսաբարապետը, վարդաշուրի մէջ ուռանի փունջ մը թաթխելով կը ցոդէ եկեղեցականներու, ժառանգաւորներու եւ ժողովրդեան վրայ, անուշտ վերակենդանացնելու համար ջուրի պէս կենսական, օրհնեալ տարրի մը մասին հիներուն կոչմէ պաշտամունքի հասած ըմբռնումը, ո՛րչափ ալ Նոյեան Զրհեղեղին աստուածաստան մեկնութիւնն ալ լծորդուած ըլլայ Զրազատիկի յիշատակին։

digitised by A.R.A.R.@

ԿՈՉՈՒՄԸ

Ըսինք թէ Ս. Գասբիարը Հայրը Զեռնադրութիւն ալ կատարեց։ Զեռնադրութեան արարողութիւնը յուզիչ է, ցնցիչ է։ ԿՈՉՈՒՄՈՎ կ'սկսի արարողութիւնը։

Կոչումը հրապարակային հարցաքննութիւնէ Ընծայեալին։ Զեռնադրիչ Եպս., իբրև թէ առաջուանէ ծանօթ չէ իրեն ներկայացուցին, մանրամասն հարցափորձի կ'ենթարկէ անոր ծնունդը, անոր անունդը, անոր անցեալն ու ներկայն, անոր պատրաստութիւնը և գիտակցութիւնը ապագայի, այսինքն առաջնորդուած պաշտօնի մասին։ Ըստ ինքեան շատ փափուկ և միանգամայն շատ անհրաժեշտ այս քննութիւնը կատարելէ ետքն է որ **կը կոչէ** ընծայեալը, և անոր ուղղափառութիւնը մանր հարցաքննելէ յետոյ, կ'աղօթէ անոր վրայ և անոր համար, և կը պատրաստէ զայն ձեռնադրութեան և օծումի։

Եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ **կոչումը** պարզ ձեռակերպութեան մը վերածուած չի լինէր, ինքնին ապահովուած կ'ըլլար մեր եկեղեցւոյն բարեկարգութեան առաջին և հիմնական պայմաններէն մէկը, այսինքն՝ պատրաստուած և արժանիք չունցած անձերուն **կոչումը** հոգևոր պաշտօնին։

Լուրջ խնդիր մըն է սակայն Զեռնադրիչի համար կրօնքի խորհրդաւոր շեմքէն ներս առնել այնպիսիներ որ պահանջուած **արժանիքը** չեն չունցած մասնաւոր **պատրաստութեամբ** և գիտակցութեամբ։ Վանդի Զեռնադրութիւնը ասոր կամ անոր աքեմ հագցնելու արարողութիւն մը չէ, այլ կրօնականացած, հոգևորացած էութեան մը կոչումը սրբագործելու խորհուրդն է ան՝ աղօթքով, ձեռնադրութեամբ և օծումով սրբալոյս մեռոնին, և այս կերպով անոր ընդունումը (initiation) քրիստոնէական ընկերութեան մէջ, ըլլալու համար խորհրդաւոր բո՛ւն կրօնքին, բո՛ւն հոգևոր կեանքին։

Զեռնադրութեան եկող մը, մինչև որ չունենայ գիտակցութիւնը իր կոչումին, կարելի չէ որ բան մը հասկնայ կրօնքէն և իր ստացած պաշտօնէն և կարենայ բան մը հասկցընել ուրիշներուն։ Ա՛յս է պատճառը որ մենք կը շեշտենք **պատրաստութիւն** և **արժանիք** բառերը։ Միայն զպրոցի պատրաստութիւնը չէ՛ այդ, միայն զարգացած և մասնագիտօրէն զարգացած մարդու մը **արժանիքը** չէ այդ, այլ ասոնցմէ աւելի վեր բան մը. հոգիին պատրաստութիւնը, հոգիին հոգևորացումն է այն, նուիրեալին ներքին մարդուն, անոր էութեան կրօնականացումն է այն, որ նկարագիրը կամ բարացուցականն է բուն եկեղեցականին։ Գայթառակերպութեան ասոնին խորհուրդը պաշտաճեցնելով պիտի բսէինք, պայծառակերպուած հոգի՛ն է ինչ որ կ'ուզենք հաստատել **կրօնականացած** կամ **հոգևորացած հոգի** խօսքերով։

Ս. Գասբիարք Հայրը Յունիս 21 Շբ. երեկոյ Ս. Յակոբայ տաճարին մէջ, հարցաքննեց **Ժառանգաւորաց Վարժարանէն** շրջանաւարտ երկու երիտասարդներ, Նորայր և Ներսէս սարկաւագները, խարտաֆիլակութեամբ Լուսարարապետ Դեր. Մեսրոպ Եպս. Նշանեանի, իբրև թէ Նարեկներ եղած բլլալին ատենք, իբրև թէ իր ձեռքին և իր շունչին տակ պատրաստուած ՀԲՅ-ին։ Հրապարակային հարցաքննութեան մէջ **արժանի՛** են վկայութիւնը մեր ամենուն գիտակցութենէն է որ կը հառաջացէր։

Կոչման արարողութիւնը ստուգիւ սրտայոյզ էր։ Դեկ Զայնէն՝ **Դասյեաց ի մեզ** չարականով կ'սկսի ան, և եթէ երգուի այնպէս ինչպէս որ Գէորգ Դ-ի Զեռնադրութեան Մաշտոցին մէջ խազագրուած է, — և մեր ապաբուած երգեցին զայն իրենց ուսուցչին, Տիար Լեան Զիլինկիրեանի վարժ առաջնորդութեամբ—, հաւատքէն և տեսիլքէն հասող մեղեդի մը պէս կը ծաւալի, և այդ վերացնող եղանակին հետ նուիրուած հոգին կը վերանայ և կը միանայ Քրիստոսին, որ բազմագութ է, որ Հայրն է սրբերուն և Դատաւորը այրիներուն, որ Գասակ կը դնէ սուրբ գրչութիւններու վրայ։

Ընծայեալները բարձրաձայն խոստացան գիմանալ ագքատութեան, անօթութեան, ծարաւի, վիշտի, հալածանքի, նախատինքի, չարչարանքի **ոման** Քրիստոսի», այդ պատկեր խլելու համար Քրիստոսի ձեռքէն և ուխտեցին իրենց կարողութեան չափով, անձանձիր **ոգով** ի պաշտօն Աստուծոյ և Աստուծոյ գործը չխափանեն մարմնաւոր գործի սիրուն, խոստացան հետեւիլ Քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ նշանաւոր եւ ուղղափառ հայրերուն, ինչպէս նաև Հայց. Եկեղեցւոյ երեւելի վարդապետներուն՝ Լուսաւորչէն սկսեալ մինչև Շնորհալի և Գր. Տաթեւացի։

Քրիստոսի եկեղեցւոյն ամբողջ պատմութիւնն էր որ արագ արագ կ'անցնէր մարքի հոլիզոնէն պատմական պատկերախաղի մը երիպին պէս։ Երբ Քրիստոսի եկեղեցին խռովոտ զէմքերու անուններ կը յիշուէին և կը նզովուէին ու երբ միւս կողմէն ուղղափառ հաւատքին վարդապետներն ու արդար պահապանները կը յիշատակուէին յաւերժական օրհնութիւններու յոգեմուներով։

Սրբազան հարցաքննիչն ու կոչողը ֆրաբաց նուիրեալներուն ուխտը սրբագործող աղօթքը՝ կոչելով Ս. Հոգին, որպէս զի բանայ այս ընծայեալներու մարքին վրայ քաշուած վարագոյրը՝ հանդիսանալու համար Քրիստոսի ատաւուածութիւնը, նոյն ինքն Տէր Յիսուսը։

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1928 Յունիս 22, Կիրակի առաւ., Գայթառակերպութեան ասոնի յուսեղէն յիշատակներուն մէջ, Ս. Գասբիարք Հայրը կատարեց Զեռնադրութեան խորհուրդը։ Ս. Յակոբայ տաճարը կը ցնծար կանթեղի և մոմի պայծառ լոյսերուն հետ պատուհաններէն ներս խուժող շաղշղուն արեւի առատ լոյսերուն և խունկի բուրմունքին

digitised by A.R.A.R.@

մէջ։ Լուսաբարձակա Սրբազան ամէն հոգ ու խնամք տարած էր նախապէս որ մեծավայելուչ բլլայ հանդէսին արարողական կարգաւորքը։

Թաւն բարձրութիւնը հեռաքրքիր և ազդեցուց, կը հրճուէր՝ ակնիս դիտելով սրբազան խարհուրդը, երբ երկու նուիրեալներ ծունկի վրայ, երեսնին դէպի ժողովուրդը, իրենց երկու ձեռքերը վեր, բաց ձեռքեր, Աստուածային եւ երկնաւոր շնորհի երդով, արժանիքի, նուիրումի, վկայութեան այդ հոգեյոյզ երդով, որ ընծայելին և ժողովուրդին միաշունչ վկայութեան եռանիւտակ երդարանութիւնն է, կոչուեցան քահանայութեան սուրբ պաշտօնին։

Սրբազնագործ Ձեռնադրիչը իր ազօթքով և Ձեռնադրութեամբ քահանայացուց ընծայեալները և օրհնելով անոնց քահանայական պատմուճանը, կերպաց սուրբ պաշտօնին արարքին վայելուչ ձեռքն ալ, և կարգաց վերջին ազօթքն օրհնութեան, Նաբեկացւոյն Աղաչեմ զանխափոխելի ակռութիւնը, որ թէև քարոզիչներուն համար գրուած է, որպէսզի ասով զօրանան քարոզին սկիզբը, բայց պատշաճաբէն գրուած է հոս։

Ս. Գասբիարը, խոր զգացումով ու շնորհալի շեշտով մը կը կարդայ միշտ այս ազօթքը, և այս անգամ յատենկայս կարդաց զայն կամ երգեց, գնելով ասոր մէն մի բառին մէջ իր հոգին և նեբշնելով ազօթքին ոգին թէ՛ ձեռնադրուածներուն և թէ՛ ժողովուրդին։

Ազօթքէն ետքը դպրաց դասը գոռաց առաջին Խորհուրդ խորին նորընծաներուն դպեսաւորման։

Ս. Յակոբի գանձատան գեղեցիկ դպեսանեաքով հանդերձուած եկան անոնք բեմի վրայ, և Ս. Գասբիարը Հայրը բաղմած ոսկեգոծ աթոռին, իր հայրապետական բոլոր հոխութեան մէջ, սկսաւ խօսիլ։

ԲԱՐՈԶԸ

Թարգ լեռան դէպքը կսենող պարագաներ պատկերացնել ՀՏր Աւետարանի պատմութեամբ, բաւ թէ մարդիկ առ հասարակ ոչնչաց կը կարծեն որ Երկինքի Թագաւորութիւնը անդին ուխտարի վերաբերեալ խոստմ մրն է հաստատելու համար։ Բնդհակառակը Աւետարանին մեզի բերած նորութիւնը այն է որ Երկինքի Թագաւորութիւնը այս ուխտարի վրայ պիտի կրնան վայելել մարդիկ, հերիք է որ բնդունակ բլլան։ Յիսուս նոյն իսկ ակնարկելով իր մօտ գտնուողներէն ոմանց, բաւ թէ պիտի չմեռնին առանց մինչեւ որ չտեսնեն Աստուծոյ Թագաւորութիւնը։ Թարգ լեռան վրայ տեղի ունեցող լուսաւոր իրակատութիւնը մէկ նուազակն է Երկնից Թագաւորութեան, որ տուեցաւ մեր Փրկչին ասակերտներէն երեքին, որ հիշ մը աւելի կարող էին նատկեալ զայն։ Թարգը լոյսի առատութիւն մը ունի, ամպը կը խնդրնէ Աստուծոյ ձայնը եւ անցեալը կը ներկայանայ հոն իր փաստերով, խօսակցութիւնը՝ հին դէմքերու եւ Աստուծոյ սիրելի ուղոյն միջեւ՝ կը դառնայ այս վերջնոյն մանուան տերջը։ Մանր արդիլ մը չէ Աստուծոյ Թագաւորութեան։ վասն զի մանր տրամաբանական վերջին լուծումն է կեանքի հանգոյցներուն, ուրէ ոչ ոք կրնայ խուսափիլ իրեւ մարդ, եւ նոյն իսկ չխուսափեցաւ Աստուածորդին, եւ Գաթսամանի երեսաբերութիւնը ցոյց տուաւ թէ այս կեանքի մէջ հնարաւորութիւն կայ երկնքի կամ Աստուծոյ Թագաւորութիւնը իրագործելու, զոր ամէն հաստատելու հոգի պիտի զգայ իր հոգւոյն խորը, թնչպէս անգամ մը դիտել տուաւ Յիսուս-Քրիստոս։ Միմեանցմէ առանց հեռացնելու հանդերձեալ կեանքի մը պատուած խոստմանցներն ու պատկերը կեանքը արժանապէս ապրողներուն համար, կ'արժէ որ հիսանենք այս կեանքի համար ապահովուած Թագորի պայծառակերպութիւններ ձեռք բերեն։

Ս. Գասբիարը այս ոգիով բնդլայնեց իր քարոզը, մեսնոս, վերջ առուակի մը խոնջիւնը զգացնելով իր խոստաւոր մէջ, եւ մեր նոր հայրերնին տալով առաս եւ անբնդնաս հոգաճ մը, ուժգնցած կրօնական խորհուրդներու եւ խմասասիրական հայեցողութիւններու նիւաւածով։ Ն. Սրբազնութիւնը խօսելու ատեն, իր վերացումի պահերուն, այնքան կը փակէ մերբ բնդ մերբ, եւ աւանդակի մը նման բոզ կուսայ իր մտին թանչէր անմոռ ասպարէզին մէջ, լոյս տեսնելու յանիրաստակաւոր մը պէս, եւ այդ պահերուն է որ իր հայրերնին բառամբերը կը պարզուի եւ բառեր կը հնարեն իրենց խմասներ գտնելու այդ խորհուրդներու բանչին մէջ եւ կամ խմասներ եւ խմասասիրական խորհուրդներ իրենց պատշաճ բառերով կը մարմնանան այդ վերացումի պահերուն, եւ այսպէս հնարաւորուած խօսքեր ու ասացուածներ, ոսկեկերտ նախադասութիւններ, կենդանի պատկերներ կ'ստեղծեն եւ մտքերնի բանաստեղծներ կուսան իր խորհուրդներուն եւ հայեցողութիւններուն եւ ասոնք կենդանի. ոգեւոր պատկերներու պէս կուգան մաչելի կը դառնան ուշիմ ունկնդիրներու մտին։

ՁԵՌՆԱԴՐԵԱԼՆԵՐ

Սրբազան Քարոզիչը Վարդավառի տօնին հրաշագեղակոնը պայծառացնելէ ետքը, անդրադարձաւ Ձեռնադրեալներուն, իր հայրական հոգեւանին ու գնահատանքը յայտնեց անոնց, որ իրենց երիտասարդութեան ծաղիկներուն մէջ — երկուքն ալ 21 տարեկան — պայծառակերպուած կը նուիրուէին Աստուծոյ Թագաւորութեան։ Շատ սուր ակնարկով մը իր գարմանքը յայտնեց անոնց որ չափէն աւելի կարեւորութիւն կուսան աշխարհին, եւ բաւ յատակ կերպով՝ ինչ է եղեր այն աշխարհը, զոր կարելի պիտի չբլլայ եղեր զոնել աւելի ազնուական, աւելի բարձր նպատակներու...։

Սարկաւագութիւնը, դիտել տուաւ, իր ծագման մէջ պատճառ մրն էր կատարելու համար զանոնք, որ նոցի համար միայն կը դեկերէին սրբազարդին շուրջը։ Ժամանակը բարեփոխեց այդ պատճառը եւ սարկաւագները մտցուց Աստուծոյ սեղանին։

Եւ անա այս մեր սիրելի ուղիներուն պատուական հայրերը, որոնք Աստուծոյ սեղանին ծառայութեան համար փարձով առած են, իրենց իսկ ձեռքով մատն անոնց թեւերը եւ բերին ընծայեցին զանոնք այս սուրբ սեղանին։

Ս. Գասբիարը արտասին գրուատիրը բրաւ երկու պատուական հանանաներուն, Տէր Ներսէսի եւ Տէր Գարեգինի, որոնք, բաւ, հաստատիւ եղան իրենց ծառա-

digitised by A.R.A.R.@

յութեան ուխտին. ապրեցան իրենց ժողովուրդին հետ՝ անոնց տառապանքին եւ տարագրութեան մէջ, սաստուեցան անոնց անպատեներ եւ ամենեւին չթաղուցան ապառնալիքներու եւ մահուան վտանգին առջեւ, եւ այսօր մեր մէջն են, մեր հետն են, եւ իրենց զաւակներուն Աստուծոյ սեղանին նուիրման ուխտին եւ արդարարդութեան ականատես կ'ըլլան եւ կ'ապրին։

Ուրիշ շատ տարագրեալ էր այս պահը երբ պերճախօս Քառոզիչը անդրադարձաւ երկու բանանձներու կեանքի այդ դրուագին, ուր անոնք հանձնարէին մեծցած էին՝ խնամին, իբրեւ կենդանի նահատակներ, նախընտրելով մահը քան թէ նոյն իսկ ժամանակաւոր ուրացումը իրենց հոգեւոր եւ նուիրական ուխտին՝ իրենց մարմինը ազատելու համար։

Ասիկա ամէնէն մօտաւոր, ամէնէն բարեդէպ եւ ամէնէն կրօնական ատիրն էր որ ոգեկան վերէն, յանուն եկեղեցւոյ կը գնանատուէր այս երկու բարեպաշտ բանանձներուն արժանիներ եւ կը հաշուէր անոնց մատուցած ծառայութիւնը իրենց ժողովուրդին մօտ եւ կենաց պայքարին մէջ։ Եւ Ամեն. Գարեգին Արշապան, տեսակ մը գարտուղութեամբ պանծացուց բանանձներուն յանի, բայց ինքնին պերճախօս այդ սիրազարդութիւնը(*)։

ՕԾՈՒՄ

Ս. Գասպարեան Հայրը իր քարոզը վերջացնելէ ետքը, **Սամուէլ Ադամեան** շարականին երգիչներուն մէջ, արբայոյս մեռնելով օծեց նորընծաներուն նախատեսներ ինչպէս նաեւ անոնց աջ ու ձախակի ձեռքերը, պանելով առաջինին անունը եւ կոչելով զայն **Տէր Նորայր Քահանայ**, իսկ երկրորդին անունը փոխեց եւ կոչեց **Տէր Տիրան Քահանայ**, որոնք իրենց օծեալ ձեռքերով իրենց առաջին **խորհրդութիւնը** տուին ժողովուրդին, եւ երբ Սարկաւագապետ ազգակցին **Ազգայն տէր միմեանց**, Ս. Գասպարեանն սկսաւ բոլոր եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ եւ սարկաւագներ, համբուրելին նորընծաներուն օծեալ նախատեսներն ու ձեռքերը, եւ պատանեաներու աւարտումէն ետքն ալ, ժողովուրդը գիմեց ողջունելու նորընծաները, համբուրելով անոնց միւռոնապոյր ձեռքերը։

Ո՜ւրախ խորհրդաւոր, բանաստեղծական, կրօնական կարգադրութիւններ բրած են արբասէր եւ ասատուածասէր նախնիք Յիսուս-Քրիստոսի եկեղեցւոյն մէջ, այսպէս սիրոյ եւ խաղաղութեան ոգեղաւորումներով ժողովուրդն ու իրենց հոգեւոր պատասխանատուները իրարու կապելով, եւ նուիրագործելով անոնց յարաբերութիւնը եւ փոխադարձ պարտականութիւնը հոգեւոր կեանքի մէջ։

Երանի՜ թէ այս բարձ օծութեամբ փայլէր նորընծաներու կեանքը մինչեւ վերջը։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՎԵՂԱՐԻ

Կիրակի երեկոյ, ժամերգութեան աւարտումէն ետքը, Ամեն. Ս. Գասպարեան Հայրը կատարեց նորընծաներուն վերաբերեալ Օրհնութիւնը, եւ կրօնաւորութեան այդ հայացի, վայելչաձեւ կնոջերը դրան անոնց գլուխը, եւ կոչեց զանոնք Տ. Նորայր Աբեղայ եւ Տ. Տիրան Աբեղայ։

Վեղարի օրհնութեան կանոնը զուարթ չէ իր արտայայտութեամբ. անապատական կեանքի խոժոռութիւնը եւ խստութիւնը կը տիրապետէ անոր մէջ, բայց զուարթ է եւ ցնծուն է ներսէն, ինքնամոռացումի, եւ երբ ուզէ՝ հզօր կեանքի մը ներսէն հառաջայրող ցնծութիւն մը, որ կ'ապահովէ ինքնանուիրումի պայմանները եւ կը լուսաւորէ կրօնաւոր մարդու կեանքին ուղիները, որ հոգեւոր եւ մտաւոր գործունէութեան ուղիներն է, հիասքանչ գիծը։

ՄԵՐ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԸ

Երկու նորընծաներն ալ բնիկ Անթէպցի են, երկուքն ալ դաստիարակուած հայրերու եւ մայրերու զաւակներ, երկուքն ալ բահանաներու որդի։ Եւ ինչպէս այս երկու բահանաներ, իրենց աշխարհական ուղիներն սկսան, այսինքն 31 տարիէ ի վեր իրարու բարեկամ եւ գործակից եղած, եւ յետոյ երիցակից ալ եղած են միեւնոյն եկեղեցւոյ մէջ եւ վերջապէս արբարակից ալ, այսպէս նաեւ իրենց զաւակները, իրարու հաւակակից, դպրոցակից եւ դասակից եղած են, եւ այժմ ալ՝ օծակից, եւ վաղն ալ հանդերձարանակից պիտի ըլլան Անգլիոյ մէջ։

Տ. Նորայր Աբեղայ ծնած է 1904 Յնվր. 4/17 ին, Անթէպ, եւ մկրտուած Ազամ-Նորայր անունով։ Իր հայրն է Աբժ. Տ. Գարեգին Քհնյ. Գոզարեան եւ մայրը՝ Տիկ. Սանդուխտ Թահիրեան։

Տ. Տիրան Աբեղայ ծնած է 1904 Օգստ. 23 ին, Անթէպ եւ մկրտուած Ներսէս անունով։ Իր հայրն է Աբժ. Տ. Ներսէս Աւագ Քհնյ. Թավուզճեան(*) եւ մայրը՝ Տիկ. Անիմա Սիւլտանեան։

Նորայր եւ Ներսէս Անթէպի մէջ կ'ընեն իրենց ծագկոցի եւ նախակրթարանի ուսումը։ Մեծ պա-

(*) *Անդր-Յորդանանեան անապատները քշուած 21 հոգիներ հոգեւորականներու (մէկը Հայ-Կաթոլիկ վրդ. մը) խումբին մէջ էին Տ. Ներսէս և Տ. Գարեգին Քահանաներ, որոնց վրայ աւելցան յետոյ երեք աշխարհական եւ երեք Հայ-Բողոքական պատուելիներ։ Ամէն մահուան ապառնալիքներու առջեւ առ ժամանակաւոր ակարութիւն ունեցան. բայց ասոնք անդրդուելի ու անդողդոջ մնացին, արհամարհելով ամէն վտանգ։ Իրենց աքսորը տեւեց ութը ամիս 1916 Յուլիսէն մինչեւ 1917 Ապրիլի վերջը, Թաֆիլէի Էլ Գուսէյրէ գիւղին մէջ։*

(*) *«Թավուզճեան» մականունը հարազատ չէ։ Տ. Ներսէս Հոր մեծ հայրը հաւատարմութեան սիրոյեամբ մը ըլլալուն «Թավուզճեանցը» մականուն եղած է իրենց։ Իրենց նախնիքը Սասունէն գաղթած եկած են Անթէպ։ անոնց մէջ **Ներսէս** մը նշանաւոր եղած է, հետեւաբար Տ. Տիրան Աբեղայ այսուհետեւ Ներսէսեան մականունը պիտի գործածէ իր հոր հաւատարմութեամբ։ Ինքն Տ. Ներսէս հայրն ալ պիտի նախընտրէր Ներսէսեանը, եթէ «Թավուզճեանով» նանչցուած չըլլար ինքն սկսիլէն ի վեր։ Աղէկ Հայր Տիրան, իր Սարկաւագութեան շրջանին «Ներսէս» գրական անունը կը գործածէր իրենց համար։*

digitised by A.R.A.R.@

տերազմին հետեւանքով Անթէպի հայութիւնն ալ տեղահան կ'ըլլայ, եւ իրենց հայրերը կ'ապաստանին Թաֆիլէի կողմերը, 1916-17, ուր ամիս 1919ին Կիլիկիոյ վաղանցիկ ազատագրութեան օրերուն Անթէպցիք կը վերադառնան իրենց ծննդավայրը, հոն նորէն զայրոյ կ'երթան երկու պատանեակներ. Անթէպի դիւցազնական ինքնապաշտպանութենէն ետքը, երբ երկրորդ անգամ հայութիւնը տեղահան ու տարագիր կ'ըլլայ, այս անգամ Տ. Դարեղին եւ Տ. Ներսէս Քահանաներ կը հաստատուին Մերսին, իսկ նորայր եւ Ներսէս երեւապէմ կուգան, աշակերտելու ժառանգաւորաց Վարժարանին, որ փակուած էր պատերազմի ընթացքին, աշակերտներուն դիմադրութեան եւ տարագրութեան հետեւանքով, եւ հոգիս թէ վերաբացուած էր բանի մը աշակերտներով։

Անգլիոյ զեղիշխանութեամբ Գողնտրոնի վրայ եւ Դուբեան Սրբազանի Գասարիարութեամբ՝ նոր քաղաքական մը կը բացուէր Ս. Յակոբի ազգային գործին համար, ժանգրց. Վարժարանը կը բարեկարգուէր, թիչ ետքը կը հաստատուէր Կիլիկիոյ Ընծայարանը, այնպէս որ Նորայր եւ Ներսէս, ժանգրց. Վարժարանին, տրուած պայմաններու մէջ շրջանը աւարտելէ ետքը, ժանգրց. Վարժարանի եւ Ընծայարանի միջեւ միութեան գիծ կազմող դարձքայլի մը հետեւեցան Ամեն. Ս. Գասարիարք Հօր, Բարգէն Եպիսկոպոսի եւ Հ. Գրիգոլեանի մասնաւոր խնամքին տակ, եւ ստիպ ունեցան նոր նիւթեր սեղմելու եւ զարգանալու։

Նորայր՝ 1923 Հկտմ. 5-4ին Սարկաւագ եղաւ՝ Լուսարարապետ Մեսրոպ Եպս. Նշանեանի ձեռնադրութեամբ. իսկ Ներսէս 1926 Հկտմ. 3ին Սարկաւագ եղաւ Կիլիկիոյ Ընծայարանի ութ աշակերտներուն գլուխը, Ս. Գասարիարք Հօր ձեռնադրութեամբ։

Երկուքն ալ անմիջապէս ուսուցչական պաշտօնի կոչուեցան նախ Քաղաքացոյց Նախակրթարանին մէջ, իսկ յետոյ ժանգրց. Վարժարանին մէջ. նոյն տարին Նորայր Սարկաւագին յանձնուեցաւ Ս. Աթոռոս տպագիր գիրքերու մատենադարանին պահպանութիւնը՝ Անգրանիկ Սարկաւագի հետ։ Իսկ Ներսէս Սարկաւագ Գասարիարքարանիս Դիւանատան մէջ նոր հաստատուած Ս. Տեղեաց բաժնին բարեւղար տնուանուեցաւ, դասեր ստանձնելով նաեւ ժանգրց. Վարժարանի Նորակազմ Բ. Դասարանին մէջ։

ՈՒՍՄԱՆՅ ԿԱՏԱՐԵԼԱԳԱՐՄՈՒՄԸ

Երկու Նորընծաներ Քառասունքէն ելլելէ ետքը Անգլիա պիտի երթան իրենց ուսումը կատարելագործելու համար։ Ասոնք տարի մը յառաջ գացած պիտի ըլլային՝ եթէ Ս. Գասարիարք Հօր անակնկալ հիւանդութիւնը չմոռցնէր մեզ ամէն ծրագիր։ Բայց ուրախ ենք որ անցան տագնապի եւ մտահոգութեան օրերը, եւ Ն. Ամեն. Սրբազնութիւնը կրցաւ նոյն իսկ գիշերային դասերով երկու Սարկաւագները վարժեցնել յոյն եւ լատին լեզուներու տարրերուն, այնպէս որ այդ անցած տարին այս կերպով շահած եղան, իսկ միւս կողմէն Հայր Գրիգոլեան մասնաւոր խնամքը տարաւ զօրացրնելու իրենց Անգլիերէնը, որպէս զի կարող ըլլան հետեւիլ իրենց նոր դասերուն Անգլիոյ մէջ։ Երկուքն ալ արդէն հիմակուանէ բաւական սահուն Անգլիերէն մը կը խօսին եւ գիտութեամբ կը գրեն այդ լեզուով, եւ վստահ ենք որ ամենեին դժուարութեան պիտի չդարնին իրենց ուսումնական նոր միջավայրին մէջ։

Անգլիոյ մէջ երկու նոր ասատուածաբանական դպրոցներ հաստատուած են, որոնց նպատակն է կատարեալ եկեղեցականութիւն պատրաստել Անգլիական եկեղեցոյ պէտքերուն համար. թէ՛ նոյն ինքն Մեծ Բրիտանիոյ մէջ եւ թէ՛ գաղթավայրերու եկեղեցիներուն համար։ Այս դպրոցներէն մէկը Լոնտոնի մօտիկ է Բէյշամի մէջ, իսկ միւսը Մանչէսթրի մօտիկ, Միրֆիլտի մէջ։ Մեր նորընծաները պիտի երթան այս վերջին դպրոցը, որու պաշտօնական անունն է College of the Resurection։ Այս երկու դպրոցներ՝ ասատուածաբանական բարձր հաստատութիւններ են, առանձին կեանքով, բոլոր եւրոպական տեսակ մը գանձեր, ապահով ամէն վտանգներէ եւ փոթորիկներէ, ուր եկեղեցականութեան պատրաստուողներ ոչ միայն կ'ստանան լաւ ուսում, այլ նաեւ կը վարժուին չաբաշութեան. վասն զի խստամբեր կենցաղ մը կեցնելու ամէն միջոց մեզ առնուած է. կանոնաւոր ուսում, ազօթք, մարզանք, ինքնապատասխանատուութեան անձնական եւ սենեկի պէտքերուն, սեղանատան մէջ իսկ իրարու կ'սպասարկեն ուսանողներ, եւայլն։

Միրֆիլտի Գոլէճը հինգ տարուան շրջան մը ունի, որուն առաջին երեքը ուսանողներ կը նստիրեն Լիսի Համալսարանէն ոեւէ ատիճան մը առնելու, իսկ երկու տարին յետ-շրջանաւարտի դասընթացք մըն է զուտ ասատուածաբանական։

Մեր երկու նորընծաներ այս վերջին երկու տարուան դասընթացքին պիտի հետեւին, եւ նոյն ատեն պիտի ընթանան իրենց մասնագիտութիւնները, որպէս զի երբ վերադառնան Ս. Աթոռ՝ կարող ըլլան Ընծայարանի մէջ ստանձնել մասնագիտական դասեր։

Մեր ժանգրց. Վարժարանը եւ Ընծայարանը որպէսզի համապատասխանեն ժամանակիս պահանջներուն, եւ միշտ կարենան պահել հայ եկեղեցական դպրոցի մը բարձր մակարդակը, պէտք է ունենան մասնագիտօրէն պատրաստուած ուսուցչական մարմին մը, ներքին պատրաստուած եւ հասած ոյժերով, եւ ուրախ ենք որ մեր երկու նորընծաներով այդ բաղձն ալ կ'առնուի, եւ հետզհետէ կը հասնին նորեր ամէն մէկ ճիւղի եւ պէտքի համար։

Հ. Նորայր եւ Հ. Տիրան իրենց ուսանողական կեանքին մէջ եղած են աշխատասէր, ուշիմ, համբերատար, աւելին սորվելու եւ գիտնալու հետաքրքրուած, կարգապահ իրենց յանձնուած գործերու եւ աշխատութեանց մէջ, բարեպաշտ եւ երկիւղած, այնպէս որ անգլիական դասախօսարանութեան մը հոգեւորականներով (retouche) կատարելագործուած պիտի ըլլան այն ծառայութեան, որուն կ'սպասէ իրենց Alma Materը Ս. Յակոբի մէջ։

Մեր սէրը, մեր աղօթքը՝ իրենց յաջողութեան համար։ Երթան բարի՜։

digitised by A.R.A.R.@

ԿԻԼԻԿԻՆԿԵԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ս. Գասբիրբք Հայրը իր Վարդավառի պայծառացուցիչ քարոզին մէջ երախտագիտութեամբ և օրհնութեամբ յիշատակեց Ընծայարանիս բարեբար Տիար Գասբիրկ Կիւլկէնկեանի ազնուական նպաստը, Ս. Աթոռս մէջ Ընծայարանի մը բացումը յաջողցնելու համար, և գիտել տուաւ որ հակառակ մեր բարի փափաքներուն գրեթէ անհնար պիտի ըլլար հառատաել Ընծայարանը, եթէ Կիւլկէնկեանի բարեբար ձեռքը չերկնար մեզ։ Դրուատեց համայն Կիւլկէնկեան գերդաստանի ազգասիրութիւնն ու առատաձեռնութիւնը, կսկիծով յիշեց Տիար Գասբիրկի սիրելի եղբօր Կիւլլապի և զաւկին Սերովբէի կենդանի մահը, և երկար ու առոյգ կեանք մաղթեց Կիւլկէնկեանց ազգերուն համար։ Ս. Գասբարգէն անմիջապէս ետքը կատարուեցաւ Կիւլկէնկեանց յիշատակին սահմանուած տարեկան Հոգեհանգիստը, որ փակուեցաւ Ս. Գասբիրբք Հօր օրհնյոյզ Հոգւոյն։

Իսկ երեկոյին միաբանութեան սեղանատան մէջ հոգեհաց տուեցաւ Ս. Աթոռս Միաբանութեան և բոլոր աշխատաւորներուն, Ս. Գասբիրբք Հօր նախագահութեամբ, որուն հրաւիրուած էին նաև երկու նորընծաներ և իրենց Արժ. քահանայ Հայրերը, ինչպէս նաև Տ. Յովհաննէս քահանայ Էքմէքճեան, որ ուխտի համար ընկերացած էր Հայրիկն իրեն կարգակից եղբայրներուն։

Սեղանի ընթացքին Գարբ. Փոխանորդ Մրկրտիչ Եպս. Աղաւնունի խօսեցաւ և գրուատեց Տիար Գասբիրկ Կիւլկէնկեանի Բարեբարութիւնը Ս. Աթոռս Ընծայարանին և արտագին մաղթանքներ ըրաւ Բարեբարին արեշատութեան համար։ Յետոյ Բարգէն Սրբազան ոտք ելաւ և գրուատեց հոգիներու նուիրումը ազգին և եկեղեցւոյն համար, ցոյցնելով երկու նորընծաներուն նուիրումը և մուտքը Հայաստանեայց եկեղեցւոյ ծառայութեան մէջ, և բաւական թէ այսպիսի նուիրեալ երիտասարդներու սակի չգիտան պիտի չընդհատի այլևս Ս. Աթոռս մէջ, և ակնարկելով Կիւլկէնկեան գերդաստանի տարեւաւորներուն բաւական, ահա՛ երկու տարիէն անոնք ալ պատրաստուած պիտի ըլլան։ Ջերմ բարեմաղթութիւններ ըրաւ Հայց. Եկեղեցւոյ հաստատութեան և Ամեն. Ս. Գասբիրբք Հօր համար, և բաւական թէ թո՛ղ ազամանդի առոյգութեամբ ապրի Սրբազան Հայրը իր Աթոռին վրայ, որ այսպիսի արժանաւոր Ջեռնադրութիւններով պայծառացնէ Ս. Եկեղեցին։

Յետոյ մէկ մէկ սիրուն և իմաստալից ուղերձներ ըրին Արժ. Տ. Ներսէս և Տ. Գարեգին։ հայրերը։

Տ. Ներսէս յայտնեց թէ ինքը խօսք մը չունի հոս ըսելիք, այլ ունի երախտագիտութիւն մը Ամեն. Ս. Գասբիրբք Հօր, որ գիտել տուաւ, ժամանակին եթէ իմ վրայ աշխատած չըլլար, ես այսօր հոս պիտի չըլլայի և իմ անգրանիկ զաւակս պիտի չկրնայի նուիրել Ս. Եկեղեցւոյ ծառայութեան։ Ս. Գասբիրբքը ասկէ 25 տարի յառաջ, իր Արմաշի վանահայրութեան, երկուքուկէս տարի շարունակ, իր գասերէն զատ, շաբաթը երկու գիշեր, երկու ժամ աշխատած է վրաս, և ես այդ աշխատութեան շնորհիւ եղայ, ինչ որ եղայ։ Ենթադրեցէք որ ես ազգատիպ մարդ մը էի և յանկարծ ինձի հազար սակի տուուեցաւ, ես այդ գումարը լաւ գործածեցի, ապրեցայ, առատացայ, և ահա տակտանելով այսօր կը փիրգարձնեմ զայն Ս. Գասբիրբք Հօր։ Շատ անկեղծ, շատ գեղեցիկ պատկեր մը՝ էր այս որ Տ. Ներսէս հոս հատիկ հատիկ խօսքերով կը շինուէր մտքերու մէջ։

Տ. Գարեգին Հայրը խօսեցաւ յետոյ և ըսաւ, ես բարձր գոյոց չեմ տեսած. բայց լաւ միջավայրի մը մէջ գտնուած եմ հոս նման, որ իր կարգին լաւ շրջանակի մը մէջ կրցած է ծառայել Անթէպի հայութեան լուսաւորութեան գործին։

Ես այսօր Գեսրոս Առաքեալի զգացումները ունեցայ եկեղեցւոյ մէջ։ երբ Ս. Գասբիրբք Հայրը կը քարոզէր, կ՚ըսէի ինքնիրենս. ա՜հ, շատ լաւ է այս տեղը, հոս մնանք, տարաբարեր չինենք, լսենք միշտ այս ազուոր խօսքերը, փայլենք այս սուրբ տեսարանը։ Եւ ուրախ եմ որ հոս եմ ես ալ և իմ նորայրս կը նուիրեմ Աստուծոյ սեղանին. ուրախութիւնս մեծ է, և կը մաղթեմ որ Աստուած հաստատ պահէ Ս. Աթոռը, երկար և առոյգ կեանքով փառաւորէ մեր Ս. Գասբիրբքը այդ աթոռին վրայ, որ լուսաւորէ այս ազգը, այս եկեղեցին, և սեղանատան ատոյոյս ջահերուն պէս, և լուսաբարձակեսի Սրբազանին ակնարկելով, բաւական դուք ալ միշտ այսպէս լուսաւորէք Ս. Աթոռը։

Ջերմագին և տենդագին ծափերով ողջունուեցան այս խօսքեր և ուղերձներ, փառանգաւոր տպաք երգեր երգեցին։

Սեղանէն ետքը զարձեալ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն մը, և Ս. Գասբիրբք Հայրը անգամ մը ալ բաւական Հոգւոյը մանաւորապէս յիշատակելով Կիւլկէնկեանց ննջեցեալները, և փառանգաւորաց գաշնաձայն Հայր մերով փակուեցան Վարդավառի հոգեւորութիւնները Ս. Յակոբայ մէջ։

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

Մեր առաջին թարգմանչաց, Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի ասնին առթիւ երգի եւ խօսքի հանդէս մը տարուեցաւ **Փառանգաւորաց Վարժարանին** սրբանին մէջ, Յուլիս 8, Կիրակի երեկոյ ժամը ին։ Բաւական բազմութիւն կար։ Հանդէսին նախագահեց Ամեն. Ս. Գասբիրբք Հայրը՝ իր շուրջ ունենալով Միաբանութեան անդամները։

Դամենալ Մոլսէի շարականով բացուեցաւ հանդէսը, երաժշտապետ Տիար Լիւսն Զիլինկիրեանի առաջնորդութեամբ եւ ամէն ճառէ ու արտասանութենէ եարը ընտիր երգեր երգեցին մեր Փառանգաւորներ։

digitised by A.R.A.R.@

Առաջին խօսողն էր ժողովրդ. Վրժբնի. ուսուցիչներէն Տիար Դ. Մխայեան, որ հայերէն գիրերու գիւտէն ասելի հայ գիրը փառաւորեց։ Դրդ. դասարանէն Սանփան Ուսմէնեան արտասանեց Ս. Մեսրոպի Մահը (Էլէգ)։ Բրդ. Դասարանէն Աբշակ Գալուստեան արտասանեց Զարենցին Դա իմ անուշ Հայաստանիս։ Դրդ. դասարանէն Վարդգէս Գասմաճեան Կորիւնէն կարդաց գրոց գիւտին պատմութիւնը, Դրդ. դասարանէն Ղազարոս Տիշէլիէնեան ինքնագիր նոր մը կարդաց Սահակ-Մեսրոպի գործին շուրջ, իսկ Կիւլպէնկեան դասարանէն (Ընծայարան) Ներսէս Սրկ. Տէր Յակոբեան փոքրիկ ուսումնասիրութիւն մը կարդաց ցոյց տալու համար թէ նախամեսրոպեան գիրեր կային։ Դրդ. Դասարանէն Յարութիւն Գոյսեան յաջողօրէն արտասանեց Ս. Գասրիաբը Հօր քերթուածներէն Օշականը։

Բարգէն Սրբազան խօսեցաւ սա՛ նիւթին վրայ, Եթէ հայերէն գիր չունենայիք՞ թո՞ղ ապեսի բլլայիք հիմայ, մասնանիշ ընելով անգրագէտ ժողովուրդներու վիճակը, եւ բացատրելով հայ ժողովուրդին գոյութեան մէջ հայերէն գիրերուն կատարած կենսական դերը։

Ամէնէն ետքը խօսեցաւ Ամեն. Ս. Գասրիաբը Հայրը, ՄՏԻ ՏՕՆին վրայ. հայ ժողովուրդը, բաւ, ուզեց գիրը, այս ընդհանուր պահանջքին գոհացում տալու համար աշխատեցաւ Ս. Մեսրոպ. հայ ժողովուրդը մանաւանդ էր ասորի եւ յոյն ընթերցուածներէն. ան իր բնիկ լեզուն ունէր, եւ իր բնիկ լեզուին գիրերը ուզեց ան, եւ այս կարմն էր որ հնարել տուաւ մեր այբուբենը։ Կէս ժամու չափ խօսեցաւ Ն. Ամեն. Սրբազնութիւնը, իր բիւրեղ հայերէնով, եւ մասնանիշ ընելով շինուող դպրոցին շէնքը, բաւ, այդ նոր շէնքին մէջ է որ երուսաղէմի հայ փոքրիկները պիտի սորվին գրել Մեսրոպեան գիրերով, տեսնենք թէ ո՞րչափ պիտի օգուտին ծրնդրներ այս առիթէն, եւ զերծ շուկայի հաշիւներէ, ամէնէն յառաջ իրրեւ հայ պիտի կրթել ստեն իրենց զաւակները, փոխանակ օտար դպրոցներ դրկելու զանոնք։

ԱՄԱՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին 1927-1928՝ դպրոցական շրջանին ամավերջի քննութիւնները սկսան Յուլիս 16 Բշ. եւ փերջացան Յուլիս 21. Դշ։ Քննութիւնները մեծաւ մասամբ գրաւոր եղան, լեզուներու մասը եւ բանի մը նիւթեր ալ՝ բերանացի։

Մեր դպրոցին պաշտօնական լեզուն Հայերէն է. իսկ ուսումնական լեզուն Անգլիերէն, յետոյ կու գան Ֆրանսերէն, արաբերէն եւ յունարէն։

Ս. Գասրիաբը Հայրը՝ նկատելով որ Յունաստանի որբանոցներէն բնտրուած աղջիկ մը յունարէն գիտեն, կարգադրեց որ անոնց դասարանը արաբերէնի տեղ յունարէն դաս առնէ, եւ այս կերպով յունարէնը մեծ յաջողութիւն ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի այն դասարանին մէջ, որ այս տարի Դրդ. է։ Այս տարի յունարէնի քննութեան ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի յոյն Հիւպատոսը, յոյն փրոֆէսորի մը հետ, եւ այնքան գոհ եղաւ որ իր ուրախութիւնը եւ շնորհաւորութիւնները կրկին կրկին յայտնեց Ամեն. Ս. Գասրիաբը Հօր իր մայրենի լեզուին տրուած կոթուրութեան համար Ժողովրդ. Վարժարանին մէջ։ եւ առիթէն օգտուելով անմամբ ալ յայտնեց իր շնորհակալութիւնը Ս. Գասրիաբը Հօր՝ Կոնքոսի ազէտեալներուն եղած նպաստին համար։

Ամեն. Ս. Գասրիաբը Հայրը ներկայ գտնուեցաւ բերանացի քննութեանց բոլորին ալ, իսկ Դրաբարի քննութիւնները անմամբ բրաւ։

Շատ ուրախալի է որ դպրոցին մակարդակը զգալի կերպով բարձրացած է, եւ դիտուեցաւ մասնաւորապէս որ տղայ ընդհանուր կերպով վարժուած են անգլիերէնի եւ բաւական սահուն կը խօսին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն. Ս. Գասրիաբը Հօր կողմէն Գարիբկն. Փոխանորդ Գեր. Տ. Միրտիչ Եպս. Ադաւնունի, Ս. Ծննդեան վանուց Տեսչ Հոգ. Աշտ Վրդպտ.ի հետ Յունիս 30ին ՐԻՔՂՆԻՄի մէջ փոխադարձ այցելութիւն տուաւ Փերսի հիւպատոս Գրն. Սայուանոր ՍՔէֆանի, որ երկու օր յառաջ անմամբ այցի եկած էր Ս. Գասրիաբը Հօր՝ իր Գաղեստինի հիւպատութեան բարձրանալուն առթիւ։

Դարձեալ, Փոխանորդ Սրբազան, Ս. Աթանս Քարտիսան Հոգ. Տրդատ վարդապետի հետ շնորհաւորական այցելութիւններ տուաւ Յուլիս 4ին, Ամերիկեան հիւպատոսարան Ամերիկայի Միացեալ Նահանգաց Անկախութեան Տօնին առթիւ,, իսկ Յուլիս 14ին, Ֆրանսայի Հանրապետութեան տարեդարձին առթիւ Ֆրանսական հիւպատոսարան։

Y. M. C. A. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1928 Յուլիս 23. Բշ. երեկոյեան ժամը 5ին կատարուեցաւ Y. M. C. A.ի Երուսաղէմի Շէնքին հիմնադրութեան հանդէսը, նախագահութեամբ Ն. Վ. Գաղեստինի եւ Անդր-Յորդանանու Բարձր Քօմիսէր Լորա Փրլուսրի եւ իր Տիկնոջ։ Այս հանդէսին հրաւիրուած էին Գաղեստինի եւ Երուսաղէմի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաները, Ս. Քաղաքիս հոգեւոր պետերը։ Ամեն. Ս. Գասրիաբը Հօր կողմէն հանդէսին ներկայ գտնուեցաւ Գարբկն. Փոխանորդ Գեր. Միրտիչ Եպս. Ադաւնունի, իր հետ ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Խաչիկեանը։ Միրտիչ Սրբազան մասնակցեցաւ հիմնարկէքի արարողութեան հայերէն հատուած մը կարդալով Եսայիէն (ԼԲ. 1-3 եւ 10-12) եւ աղօթելով. ինչպէս Յունաց Ս. Գասրիարքն ալ յունարէն լեզուով, եբրայերէնով Սաղմոս, իսկ արամերէնով ալ Մատէոսի Աւետարանէն ընթերցուածներ եղան։ Պաշտամունքի ընդհանուր լեզուն Անգլիերէն էր։

Ն. Վ. Լորա Փրլուսրը արձաք ծեփիչով տարածեց շաղախը շէնքին կեդրոնական մասին, աբեւել-

digitised by A.R.A.R.@

հիւսիսային պատին անկիւնը եւ վերջապէս կրանիթ անկիւնաքարը դրուեցաւ իր տեղը։

Y. M. C. A.-ի շէնքը տեղական եւ ամերիկեան նպատակասպասութեան խարնուրդ մըն է, կը կառուցուի երուսաղէմի պարիսպներէն դուրս, արեւմտեան կողմը. **Նիկոփոր** բնուած բլրակի տարածութեան վրայ եւ իր դիրքով կը նայի ուղղակի Սիոնի վրայ, Ս. Յակոբեանց Մայրավանքը։

Ամերիկացի բարեբար մը, որուն անունը գաղտնի կը պահուի, կէս միլիոն տոլար նուիրած է շինութեան համար։ Երուսաղէմի ամէնէն նոր եւ ամէնէն բնագրծակ եւ շքեղ հաստատութիւններէն մէկը պիտի ըլլայ, յատուկենական ժայռերու վրայ հիմնուած, ամբակառոյց շէնք մը, որուն շինութեան համար կը գործածուի բնական խճաքարախ (պէթոն) եւ հիմերէն հանուած կրանիթ բարեր՝ թեթեւ կարմիր-գեղինի գարնոյ երանգով։

Այս հաստատութիւնը ամերիկեան Y. M. C. A.-ի յատուկ արդիական բոլոր բաժանումներով եւ դիւրութիւններով օժտուած պիտի ըլլայ։

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Յունիս 23, շԲ. գիշեր տեղի ունեցաւ Բարեգործակեանի երուսաղէմի Մասնաճիւղին կողմէ սարքուած հրապարակային ժողովը՝ երուսաղէմցի Հայոց Բ. Միութեան Գրքերին մէջ, որուն նախագահեց Գարրիքին. փոխանորդ Դեր. Մկրտիչ Եպս. Ազատեան, Ամեն. Ս. Գատրիարք Հօր կողմէն, որ Բարեբար Ցանգամն է Հ. Բ. Ը. Միութեան։

Ժողովին երաժշտական մասը անակնկալաբէրն գեղեցիկ էր, հայերէն եւրոպական բնոյթ երգեր երգուեցան եւ եղանակներ զարնուեցան, ջութակի եւ գաշնակի ընկերակցութեամբ։ Բերքուածները ապտասանուեցան, եւ բանախօսութիւններ եղան որոնց նպատակն էր հասկցնել ժողովուրդին Հ. Բ. Ը. Միութեան բրած եւ ընելիք գործը։ Նախագահ Սրբազան յորդոր կարդաց ժողովուրդին որ բոլորուի այս ազգօգուտ հաստատութեան շուրջ։

Ցաջորդ օրերուն մէջ նոր անդամագրութեան համար եղած դիմումներ ցոյց տուին թէ ժողովը չափով մը հասած է իր նպատակին։

OPERA CARDINAL FERRARI

Կարտինալ Ֆէրրարիի ծախքով եւ իր անունով **Բարձրագոյն Դպրոց** մը կառուցուած է Ս. Բաղարին Արեւմտեան կողմը, Ճոր Ե. պողոտային վրայ հոյակապ շէնք մը։ Այս կրթական հաստատութիւնը, ուր հայ տղայ ալ կ'ներքնայ, իր առաջին տպանրիցիոյ շրջանաւարտներուն վկայականները տրուաւ Յունիս 29, երեկոյեան ժամը 4ին, ուսանողներու կողմէ սարքուած հանդէսի մը մէջ, որուն հրաւիրուած էին նաեւ հոգեւոր պետեր։ Ամեն. Ս. Գատրիարք Հօր կողմէն ներկայ եղաւ այս հանդէսին Դեր. Բարգէն Սրբազան՝ Ս. Աթոռոյ Քարոզման Հոգ. Տրդատ վարդապետին հետ։

Դպրոցին Տեսուչը քանի մը օր եւրոպա անձամբ եկաւ Ս. Գատրիարք Հօր յայտնելու համար իր շնորհակալութիւնը, Ն. Ամեն. Սրբազնութեան ցոյց տուած հետաքրքրութեան համար հանդէպ իրենց հաստատութեան։

ԿԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԸ

Ասկէ հիշդ 70 տարի յառաջ Յովհաննէս Գատրիարք կը գնէ պաշտօնական ճանապարհով այն հողերը, որոնց մէջ բլլալ ուզած է Կարկուտ անուն մէկը, խարդախ միջոցներով։ Եւ 70 տարիներէ ի վեր Ս. Աթոռոյ իրաւունքը պաշտպանելու համար դատավարութիւն տեղի ունեցած է Կարկուտի եւ իր ժառանգորդներուն դէմ, Երուսաղէմ եւ Կ. Պոլիս, Քիւրդ դատարաններու առջեւ եւ միշտ մեծ ցնծագուած եւ վերահաստատուած է Ս. Աթոռոյ իրաւունքը այդ հողերուն վրայ, բայց միւս կողմէն Կարկուտեանք են դարձած յաւակնելէ թէ իրենք են այդ հողերուն տէրը, այնպէս որ Պաղեստինի Մեծն Բրիտանիոյ գրաշին տակ մտնելէն ետքը, Կարկուտեանք նորէն փորձած են իրենց յաւակնութիւնը հաստատել տալ, բայց Երուսաղէմի Նախնական եւ Հողային Դատարաններուն եւ վճռարեկ Ատեանին առջեւ մերժուած եւ հաստատուած է Ս. Աթոռոյ կալուածատիրութեան իրաւունքը այդ հողերուն վրայ։ Հակառակ կողմը տակաւին վերջին փորձ մը ընելով, Լոնտոն դիմած էր վերաքննութեան համար, եւ Վերջնական հրամանով խնդիրը յանձնուած էր Privy Council-ին։

Ս. Աթոռոյ դատը ստանձնած է Լոնտոնի մէջ Անգլիացի կարող փաստաբան մը, դատավարութեան ընթացքին հարկ եղած բացատրութիւնները տալու եւ յաւելուածական վաւերագիրները ներկայացնելու համար դատարանին, Գատրիարքարանիս դիւանապետ Տիար Կ. Նուրեան ալ Յունիս 24ին Ճամբայ ելաւ եւ ապրիլի գիծով Լոնտոն երթալու համար, ուր հասած է արդէն։ Վստահ ենք որ Ս. Աթոռոյ արդար իրաւունքը Բեմն Բրիտանիոյ վերին դատարանին առջեւ ալ պիտի հաստատուի վերջնականապէս եւ Գատրիարքարանը խաղաղ պիտի ազատուի այս եօթանասնամեայ մղձաւանջէն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Գուլկարիոյ Արտարին Գործոց Նախարարութիւնը. Ամեն. Ս. Գատրիարք Հօր ուղղեալ 15 Յունիս 1928 թուակիր, Համար 470—IV պաշտօնագրով մը շնորհակալութիւն յայտնած է, Գուլկարիոյ երկրաշարժին առթիւ արտայայտուած ցաւակցութեանց, եւ ի նպաստ ազէտեալներուն Ս. Աթոռոյէն դրկուած 30- Սթէրլինի գումարին համար։

digitised by A.R.A.R.@

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ
1862 — * 1928

Հայ մտքի եւ գրչի աշխատաւորներ իրարու հետեւէ կը բռնեն յաւիտենութեան ճամբան։ Թէոդիկեանէն յետոյ Հրանտ Ասատուրին մահուան գոյժը հասաւ։ Երկուքն ալ մտքի եւ գրչի աշխատաւոր, տարբեր ուղղութեամբ բայց նոյն սկզբունքով։ Երկուքին ալ գրական աշխատութիւններուն նկարագիրն է ուրախութիւն, հետազօտութիւնը, կամ բառին այժմեան խստագոյն բանասիրութիւնը։

Բանասիրութիւնը, բան ինքնին, չոր աշխատութիւն մրն է, եւ ասոր համար է որ քիչեր կը հրապուրուին անկէ։ Կ. Պոլսի նոր գրականութիւնը ունի ձեւերու եւ ոճի գրականութիւն մը եղաւ, ինչ մը հանրագիտական արտայայտութիւնով, բան թէ պրպտումներու եւ հետազօտութիւններու վրայ հիմնուած **գրականութիւն** մը։ Գրականութիւն բառը վարանոտով մը կը գործածեմ հոս։ Արդէն եւ գրականութեան արդիացած բարձունքն տարբեր է բոլորովին։ բառերու ընտրութիւնը եւ դասաւորումը, նոր եւ գրաւիչ պատկերներու ստեղծագործումը, երգիներանգ ծաղիկներու բոյրով եւ շքով թրթռացող ոճ մը, թերականական եւ տրամաբանական կանոններու դէմ հեստուներ եւ ոստումներ, վերջապէս ինչ որ **նոր կամ նորութիւն** կրնայ բուիլ, — ասոնք են գոնէ մեր մէջ մշակուող հիմնական գրականութիւնը, բլլայ արմատ, բլլայ թերթուած։

Թէոդիկ եւ Հ. Ասատուր այդպէս էին, ուսումնասիրող էին իրենց նիւթերը։ Գրպտել, ուսումնասիրել կը նշանակէ ժամանակ տալ, եւ եթէ կարելի է՝ առաջադրուած նիւթը բնել իր բոլոր կողմերէն, եւ յետոյ ձեւը առնել գրիչը, այդ ուսումնասիրուած ու սերտուած նիւթը գրականացնելու համար։

Հ. Ասատուր շատ բան չէ արտադրած, բայց շատ բան ուսումնասիրած է տրուած այդմանները մէջ։ Իրրեւ ուսուցիչ աշխարհաբարի, արժէքաւոր գործ մը տեսած է Կ. Պոլսի մէջ, եւ այս գիծին վրայ պէտք է առաջին տեղը տալ իր բանասեղծ եւ գրագէտ Տիկնոջ, որ տեւական աշխատանքով, Կ. Պոլսի Հայ աղջիկներուն ուսուցած է մաքուր աշխարհաբար, իրենց իսկ պատրաստած դասագիրքերուն առաջնորդութեամբ, գրեթէ սերունդ մը կրթելով։

Հրանտ եւ Զապէլ Ասատուր վերջապէս իրենց հասունութեան ամբողջ շրջանը նուիրեցին աշխարհաբարի մաքրագործութեան եւ ուսուցման իրրեւ ուսուցիչ եւ իրրեւ դասագիրք պատրաստողներ։

Հ. Ասատուր, որ իր շուրջն վախցող մարդ մրն էր, իրրեւ հետեւանք իր բնախօսական խառնուածքին, ներկայանալի անձ մրն էր, լիցուն եւ գեղեցիկ կազմուածքով, ազնիւ ձեւերով, անուշ լեզուով։ իր այս ներկայութիւնէն կը ծառագայթէր մագնիսում մը մանաւանդ ուսուցչական աթոռի վրայ։

Վերապահ իր կարծիքներուն մէջ, թծախնդիր իրենց մշակած աշխարհաբարի կանոններուն կիրարկումին մէջ, ժուժկալ խօսքի եւ գրչի արտայայտութեան մէջ, Հ. Ասատուր, իրրեւ իրաւագէտ, չուզեց կամ չկրցաւ բլլալ վաստակաւոր, գատական ատեաններու առջեւ։ Օրէնսգիտութիւնը իր մասնաճիւղն էր, եւ ամէն իրաւունք ու յարմարութիւն ունէր համբաւ մը շինելու իրրեւ գատաւոր, Կ. Պոլսի փաստաբանական կոչումին մէջ, իր գրչի բարեկամ Դր. Զօհրապի պէս, բայց ան եղաւ հանդարտ ու անվրդով աշխատանքի մարդը իրրեւ բանասէր, իրրեւ հրապարակագիր, իրրեւ ուսուցիչ, իրրեւ իրաւագէտ-խորհրդական, եւ իր այս վերջին Տիրոջն մէջ՝ արժանցաց իր հմտութիւնը, կոչուելով Ժէօնթիւրք կատարարութեան շրջանին կարեւոր պաշտօնի։

Իրրեւ դիտող եւ ուսումնասիրող գրագէտ՝ Հրանտին հանգուանքներն շաղափելու համար, իր գործերուն մէջ ամէնէն յարմար ուսումնասիրութիւններ են **Ե. Պոլսի Պատրիարքարանի Պատմութիւնը**, որ Իրմիճեանի հայրապետական գնահատումին ալ արժանացաւ։ Այս պատմութիւնը ընդարձակ գործ մը չէ, եւ չէր ալ կրնար բլլալ, Սուլթան Համիտեան անոյշ գրագրութեան սոսկումներուն տակ, բայց իրրեւ նրկարագրի պրպտումներու արդիւնք, աղուոր գործ մրն է, նոյն ինքն հեղինակէն գրաբարեալ, որ Ազգ. Հիւանդանոցի **Ընդարձակ Օրացոյցին** ամէնէն քանկագին մասը կազմեց **1901**ին։

Սեւոյ կազմ իր **ԴԻՄԱՍՏԻԵՐՆԵՐԸ**, ուր պատկերացուցած է գինքն հետաքրքրող եւ իր սիրած հոգի մը դէմքերը։ Հ. Ասատուր հարազատօրէն ինքն ալ կը պատկերանայ այս հատորիկին մէջ, իր բնաբրած դէմքերը ցոյցներու ատեն։ Ուրիշ խօսքով, Հրանտ իր իսկ հոգեբանութիւնը կը ցոյցնէ այս Դիմաստաւերներու մէջէն։ Այս տեսակէտէն ուշադրաւ են Զօհրապի եւ Սիպիլի մասին գրածները։

Ես շատ մտէն գիտեմ Հրանտին գաղափարը Զօհրապի ներքին արժէքի մասին։ Ես Զօհրապն ալ բաւական լաւ ճանչցած եմ, — բայց մեր ճանչցած Զօհրապին բան դիմագիծները ստուերներու տակ մնացած են Հրանտի գրչին տակ։

Իր աշխատուած միւս ուսումնասիրութիւնն է **Հայ Թատրոնի Պատմութիւնը**։

Իր **Իմաստասիրական Բառարանին** վրայ շատ կը խօսուի, բայց չեմ կարծեր որ այդ մարզին մէջ իսկատպութիւն մը երեւան բերէ։

Կ՚արժէ որ Հրանտին բոլոր գործերը հաւաքուին եւ հրատարակուին։ ասիկա աշխատանք մրն է, զոր շնորհալիօրէն կրնայ ընել եւ գլուխ հանել իր տիկնը, Սիպիլ։ (*)

(*) Հ. Ասատուրի միւս գործերն են **Պատանեկան Ներշնչումներ** (1878), **Ե. Պարոնեանի կենսագրութիւնը** (անտիպ), **Պատ. Աշխարհաբար Մաեստագրութիւնը**, Օսմ. Օրէնսգիտութեան զանազան Տիրոջերու վրայ ուսումնասիրութիւն մը Ֆրանսերէն լեզուով, 7 հատոր (անտիպ)։

digitised by A.R.A.R.@

Դժբախտ իրականութիւնը այն է որ հեղգհետէ կը պակսին ուրախութիւն, հեռացուցեալ սիրահար գրագէտներ, մանաւանդ մեր տարածելով իրենց ետին։

Մեծ պատերազմէն յառաջ, Թիւրքիոյ մէջ, Հայմիտեան շրջանին, արեւմտեան հայ գրականութիւնը եղաւ խորքէ զուրկ, քնքեւ, Տոնամ բառերու գրականութիւն մը։ Տիրող եւ հալածող գրաբնութիւնը եթէ մէկ կողմէն չյաջոց հայ գրականութեան ծաղկող ու ազատ թռիչքը, Հայմիտեան շրջանին, միւս կողմէն տակայն (ինչպէս որ կատակախառն կ'ըսէինք) վերջ տուաւ ամեն բանաստեղծութիւններու։

Եւ հիմայ մեր սիրուն եւ նոր աշխարհաբարը, որու մարգարէշա մշակն էր Հ. Աստատուր, կ'ապրի անգիտակ ու անգգոյշ մշակներու գրչին տակ, եւ նորեր չեն հասնիր, կամ թէ չեն ուզեր հասնիլ ու հասունցնել։

Հիմայ շատ գիրքեր է յօդուած գրել խակութիւններով ու տափակութիւններով խնդուած, շրեղ կողքերու ներքեւ եւ պատուս վերնագիրներով ուսումնասիրութիւններ հրատարակել, իսկ իրրեւ բանաստեղծութիւն, անհամ, անարուեստ տողեր յերիւրելով։ Եւ այսպէս ո՛չ միայն լեզուն է որ կը տուժէ, այլ նաեւ գրելու եւ խօսելու արուեստը։

Հ. Աստատուր այնչափ նախանձախնդիր էր լեզուի կանոններուն որ երկիւղածութեան հասուցած էր զայն։

Եթէ նուիրական է լեզուն, եթէ պայման է լեզուին կենդանի զեղեցկութիւնը, զեղեցիկ գրականութիւն մը արտադրելու համար, Հրանտին գրականական երկիւղածութիւնը կ'արժէ որ նշանակութիւն մը ունենայ իրենց մայրենի լեզուն սիրողներուն գիտակցութեան մէջ։

Բ. Ե.

Ի ԶՈՒՐ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

Բնիկ Կարնեցի Դանիէլ Տնկօեան, ծն. 1907, որդի Յակոբի եւ Զապէլի, հայկական տարագրութենէն ազատուած կ'իյնայ Նիւյ Իսրի Սնիթիֆասի որբանոցը։ Հայասէր Մր. Պիչֆորս, Նիւյ Իսրի Պաղեստինի Տնտրեսը, 1922 Նոյեմ. 22ին Նազարէթի որբանոցը կը փոխադրէ ուշիմ Դանիէլը, իսկ 1924ին կ'ուղեգրէ զայն եւ կը բերէ Երուսաղէմ Սիյոն-ձորա դպրոցը, ուր սմանչելի յառաջդիմութիւն եւ բնդունակութիւն ցոյց կուտայ, այնպէս որ Մր. Պիչֆորս Գերութի Ամերիկեան Հանգանարանը կը դրկէ զայն իր ծախքով 1927ի աշնան։ Դանիէլ միչ ժամանակի մէջ ոչ միայն իրեւ ուսանող առաջնակարգ տեղ կը բռնէ իր դասարանին մէջ, այլ նաեւ առաջնորդելու կարողութիւն մը կ'արտայայտի իր ընկերներուն մէջ։

Յուլիս 4ին, տաք օրերն անցուած, խանի մը ընկերներով դուրս կ'երթայ Շան Դեսը (Նաեր-էլ-Քելպ) Գերութի մօտիկ։ Դանիէլ կիրք յուզուր մրն էր։ բայց առանց գիտնալու թէ զեր այնքան խորունկ չէ, երբ բարձրն գլխիվայր ջուրը կը նետուի, խեղդ երիտասարդին գլուխը եւ ոտնասիները կը վնասուին ծանծաղ գետի աւազոյտին զարնուելով։ Իր ընկերները Գերութ նիւանցանց կը փոխադրեն զինքը. բժիշկներ իրենց բոլոր գիտութիւնը եւ արուեստը կը գործածեն փրկելու համար յուսալից ուսանողին կեանքը, բայց իզուր։ Հեւգնեսի կ'անդամալուծուի եւ անուշի տառապանքներու մէջ զարմանալի արիութիւն մը երեւան բերելով կը մահանայ Յուլիս 16, ԲՇ. կիսարեւ հէրը մոտը 3ին։ Մր. Պիչֆորս հեռագրով Երուսաղէմեն կանչուած էր Գերութ իր որդեգրին մօտ գտնուելու. կը հասնի հոն Յուլիս 8ին։ Դժբախտ երիտասարդը չի կրանցներ իր մտքի պայծառութիւնը մինչեւ իր մահուան օրը։ Թաղումը կը կատարուի արտայոյզ կերպով, Հայց. Եկեղեցւոյ կողմեն Յուլիս 17ին, իր դպրոցականները կը կազմեն յուղարկաւորութեան բազմաթիւ։ Մր. Պիչֆորս եւ Տօքթ. Բիկս դամբարանականներով կը դրուատեն փայլուն կարողութիւններով օժտուած դժբախտ ուսանողը։ Ամեն. Ս. Պատրիարք Հայր եւ Լուսարարապետ Մեսրոպ Արքեպսկոպոսն ցաւակցական հեռագիրներն ալ, ուղղուած Պիչֆորսին, կը կարդացուին Դանիէլի հոգեհանդիսին վրայ։

Մր. Պիչֆորս մանրամասն տեղեկագրով մը վաղամեռիկ երիտասարդին մահուան պարագաները հաղորդած է Ն. Ամեն. Արքեպսկոպոսին։

Մր. Պիչֆորս ամ տողերով կը վերջացնէ իր տեղեկագիրը —«Կը հաւատամ թէ Դանիէլի կեանքին ապրեցութիւնը երկար ատեն պիտի ըզգան շատեր, եւ ես ինձի համար խոսպիս առանձնաշնորհում մը կը նկատեմ որ կրցայ օգնել իր դասաւորութեան»։

Դանիէլ կ'ուզեր մասնագէտ ըլլալ, եւ ինչ ինչ գործեր գտած էր դրամ շահելու, որպէս զի ուրիշներեն կախում չունենայ այնուհետեւ իր ուսանողութեան շրջանին։

Արտանց կ'ողբանք յուսալից հայ որդի մը կեանքին խորտակումը այսպէս ձրիօրեն, եղերական պարագաներու մէջ։

Ցնցիչ դաս մը կայ կեանքի այս վայրկեան եւ իզուր խորտակումին մէջ՝ մեր բոլոր հոգատարութեան եւ ինքնամոսան երիտասարդներուն համար որ զգաս եւ զգոյշ ըլլան իրենց մարզանքներուն եւ մրցանքներուն մէջ։

Տպարան Սուրբոց Յակոբեանց, Երուսաղէմ

digitised by A.R.A.R.@

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

ՍԻՈՆի այս թիւն ալ զոյգ է, Օգոս.-Սեպտեմբեր, մեծ 64 երես։

Այս կարգադրութիւնը եղաւ, որպէսզի ՍԻՈՆ-ի խմբագրական մարմնի անդամները, այս անուրի տաքերուն, առիթ ունենան արձակուրդի շունչ մը առնելու։

ՍԻՈՆի Հոկտեմբեր թիւը յոյս կը տածենք նոյն ատենս մէջ։

ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

33. ՉԱՑՆ ՄԸ ԱՆՑԵԱԼԷՆ (Կեանքի խոհեր), Գրեց ՏԱՃԱՏ (Փրոֆ. Նշան Ս. Պալեօզեան), Հրատարակութիւն *Հայ Կրթական Հիմնարկութեան*, Նիւ Եորք 1927. 8° էջ 237 + 3, գին 75 սենթ.

34. ՆՈՐ ՇԷՆ (*Վերածնած Խաչքար*) — (Վէպ Տոնական կեանքէ) ՍԵՊՈՒՀ, հրատարակուած է *Հայ Կրթական Հիմնարկութեան* կողմէն «ի յիշատակ Կարապետ Հանուրս Գարակէօզեանի». 1927, նիւ Եորք, 8° էջ 172, գին 1 տոլար։

35. ՏԱՆ ՏԻԿԻՆԸ, Տեսրատար *Հայ Կրթական Հիմնարկութեան*, տպ. ԿՈՉՆԱԿ. 1928. 16° էջ 16։

36. Հ. ՀԱԲԱՐՉՈՒՄԵԱՆ, *Երիտի Ժողովածու*, Հատոր Երկրորդ, Բանաստեղծութիւններ. Տպ. Վիեննա, 1928, Մխիթարեան Տպրն. 8° էջ 312, գին 1,25 դոլար։

37. Գործնական եւ Գիտական Լուսանկարչութիւն. Հեղինակ՝ Հայկ Մ. Մոսիչեան. Հրտկ. Մոսիչեան Տպրարանի. Լառնակա, Կիպրոս. 8° էջ 152. Գին՝ 7 Շիլին։

38. ՏԱՍԸ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, Թարգմ. Վ. Գէորգեան. Տպ. «Հրազդան» 1928, Պէյրութ, 8° էջ 91. գին 7 ֆրանկ. — Հրատարակութիւն «Զանակիր» Գրական Ընկերութեան, Թիւ 6։

Վ. Գէորգեան, Թրիվալէ (Քերթուած), Տպ. «Հրազդան», 1928, Պէյրութ, 8° էջ 30. Գին 4 ֆր. — Մատենաշար «Զանակիր», Թիւ 7։

39. Հայ Կաթողիկէ Հասարակութեան Գ. Շրջան Կրօնական եւ Աշխարհական Գործոց բաժանում. — Համառօտ նկարագրութիւն մը։ Հրատարակուեցաւ Հայ-Կաթողիկէ Վարչական Ժողովոյ 28 Մայիս 1928ի որոշմամբ. Կ. Պոլիս, 1928, Տպ. Ֆ. Ճարեան, 8° էջ 96։

40. KÉVORK ASLAN, Études Historiques sur le Peuple Arménien, Nouvelle Édition Illustrée par les soins de Frédéric Macler, avec 16 Planches hors texte, Paris Lib. Orien. P. Geuthner, 1928. մեծ 8° էջ 340, Հրատարակուած Ն. Վ. Պ. դոս Փաշա Նուպարի առատաձեռնութեամբ։

digitised by A.R.A.R.@

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Դահիրէի Պէրպէրեան Վարժարանին համար Եգիպտոսի Առաջնորդ Դեր. Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկ. Փուչակեանի նախաձեռնութեամբ և նախագահութեամբ կազմուած է խնամակալութիւն մը, որուն անդամներն են Պ. Պ. Հրանդ Նազարեան՝ ատենապետ, Արամ Տ. Մարգարեան՝ Բ. ատենապետ, Յովհ. Մէքէնեան՝ ատենադպիր, Տիգրան Հաճընեան՝ գանձապետ և Կ. Մէֆէրեան՝ խորհրդական։ Խնամակալութիւնը հիմնուած է նկատի ունենալով այն կարևոր դերը զոր կատարել կոչուած է այս մեծ Վարժարանը գաղութահայութեան մէջ, հայ երկրորդական կրթութեամբ օժտուած նոր սերունդ մը պատրաստել, ինչ որ անհրաժեշտ է մեր գաղութահայ Ազգային պահպանման և զարգացման համար։ Խնամակալութիւնը ձեռնարկած է ընդհանուր գաղութահայութեան օգնութեամբ Պէրպէրեան Վարժարանը դնել նիւթական հաստատ հիմերու վրայ և զայն օժտել կրթական բոլոր արդիական միջոցներով։ Ընդարձակ Ցայտագիր-Մրագիրը ստանալու համար դիմել Տնօրէնութեան սա՝ հասցէով.

COLLÈGE BERBERIAN Haret el Daramalli, N° 1, Choubra
Le Caire (Egypte)

"ՍԻՈՆ"Ի ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

12. **ՕՇԱԳԱՆ**, Դրոշակ Ամիսը, կը հրատարակուի ամէն ամսոյ 15ին, յատուկ վարչական մարմնոյ մը կողմէ՝ որուն մաս կը կազմեն Պատ. Ս. Ֆ. Գոնսիլեան, Տօքթ. Յովհ. Մանուկեան, Յարութիւն Արբաեան, Թագուոր Կէլիպօլեան եւ Տիկ. Վիքթորիա Մումճեան։ Տարեկան բաժնեգին 20 Ֆրանք։ Հասցէ.

Rédaction "OCHAGAN" Ecole Arménienne, HASKOVO (Bulgarie)

13. **ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**, Ամսէջ Յանանուն Հայ Մարմնոյն Ընդհանուր Մամուլն։ Տարեկան բաժնեգին Զորս Շիլլին. հասցէ

Revue Mensuelle "NOR SEROUNT" Poste Restante, Le Piré (Grêce)

Ծանօթ.— Ստացուած է միայն Բ. Տարի Թիւ 11-12, Ապրիլ 30 — 1928. **Նոր Սերունդ**ին ամբողջ հաւաքածուն ղրկեցէք, ՍԻՈՆի հաւաքածուին հետ փոխանակելու համար։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Բոլոր անոնք որ ինքնաբերաբար յօդուածներ եւ բերուածներ կը ղրկեն ՍԻՈՆի, անպատճառ հրատարակելու խնդրանքով, ՍԻՈՆի Խմբագրութիւնը պարտ կը համարի իրեն՝ յարգանք դիտել տալ այնպիսիներուն որ երէ ղրկուածները յարմար դատուին հրատարակուելու, անպատճառ կը հրատարակուին, ազան կամ անազան. հակառակ պարագային՝ մէկդի կը ձգուին, եւ ՍԻՈՆի Խմբագրութիւնը ոեւէ պարտ չ'զգար այս առթիւ գրուած նամակներուն պատասխանելու, բացատրութիւններ տալու կամ ղրկուած ձեռագիրները վերադարձնելու։ Ձեռագիրներ կը վերադարձուին իրենց տէրերուն՝ պայմանով որ անոնք հոգան փոստի ծախքը։

Խմբագրութիւն ՍԻՈՆի

digitised by A.R.A.R.@